


37  
U-16




**ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ**

**обозначенного здесь срока**

Тип. 1 Арт. Сов. Печ.—Заказ № 3113.





Հրատարակութիւն Ներսիսեան Դպրոցի

# ՀԱՄԱԼՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՃՈԳԵԿՈՐ ԴՊՐՈՑԻ

ԵՐԹԱՆՇԱԾԻՆԵԽԻՀԻՆԳԵՐԵՍ ԴՈՉՈՒԹԵԵՆ

(1824—1899)



*Կ ա զ մ ե ց*

Ս ո . Մ ա լ ի ս ա հ ա ն ց



*1 ռ 50*

**Թ Ի Փ Լ Ի Ս**

Կ. Մարտիրոսիսեանցի տպարան | Տիպ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԻԱՆՆԱ.  
Օբելիանովսկայ պլ., ք. № 1/2.

**1900**



ՆԵՐՍԼԻՄ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հիմնադիր Ներսիսեան Թագուհի

Մ-15

Հրատարակութիւն ներսիստան Դպրոցի

5(չ)

# ՀԱՄԱՐԾՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍՏԱՆ ՀՈԳԵԿՈՐ ԴՊՐՈՑԻ

ԵՈԹԱՆԱԾՈՒՆՆԵԽԻՇԽՆԴԱՐԵԱՑ ԳՈՅՆՈՒԹԵԱՆ

(1824—1899)

616  
62911

Կազմեց

Ս. Մալյսոսեց



— 3 —



1900

18712

Ազգային մատուցած հայոց ազգական գրադարան

# ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆ

ԽՈՐԵ ՀԱՅԿԱՆ ՑՈՒՑԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆ

Ձևավորվել է 1900 թվականի Մայիս ամիսի 1-ին օրը

Ձևավորվել է 1900 թվականի Մայիս ամիսի 1-ին օրը

5252

— 1881 թայ պարզութեամբ ցո լուսաւուած և Զատու  
ու ուղաքար մասնաւոր ի կույսը՝ ուրիշ միջնէ  
— 1881 ուղաքար մասնաւոր ի կույսը՝ ուրիշ միջնէ  
ամի պահ թագուար դաւաշ օրմնաբառնի 1881  
ամսաւոր նույնական մասնէ ուղաքար ի կույսը  
ուրիշ միջնէ ամսաւոր ամսաւոր նույնական մասնէ

Ներսիսեան Դպրոցի Մեծ. Հոգաբարձութիւնը,  
որոշելով տօնել Դպրոցի եօթանասունեւինզամեայ  
գոյութեան (1824—1899) յոթեւեանը՝ ի միջի այսոց  
միտք էր չղացել՝ այս առիթով տպագրել Դպրոցի  
ընդարձակ պատմութիւնը, որը յանձնարարել էր  
կազմել պ. Աղեքսանդր Երիցեանին. Այս ընդարձակ  
պատմութեան առաջին հատորը լոյս տեսաւ անցեալ  
տարի. Երկրորդ հատորը պատրաստում է հանդէսի  
օրը հրատարակուելու, իսկ Երրորդը կտպագրուի  
ապագայում:

Այս ընդարձակ պատմութեան հետ՝ Մեծ. Հո-  
գաբարձութիւնը կամեցաւ տպագրել և մի համառօտ  
պատմութիւն, որ իւր ծաւալով ու բովանդակու-  
թեամբ մատչելի լինէր ընթերցողների աւելի ընդար-  
ձակ շրջանի. Այս համառօտ պատմութիւնը կազմելու  
գործը Մեծ. Հոգաբարձութիւնը բարեհաճեց յանձնել  
մեզ, և ներկայ գրքովկը հետև անք է այդ յանձնա-  
րարութեան:

Սրա պատմական նիւթը քաղելիս՝ օգտուել ենք  
— մինչև 1850 թիւը՝ պ. Երիցեանի աշխատասիրած  
վերոյիշեալ ընդարձակ պատմութեան առաջին հա-  
տորից. 1851-ից մինչև 1857 թիւը՝ նոյն ընդարձակ  
պատմութեան Երկրորդ հատորի համար պատրաս-

տուած և պատրաստուող Նիւթելից, իսկ 1857 թուից  
մինչև վերջը՝ Դպրոցի դիւանատան գործերից, գըլ-  
խաւորապէս հոգաբարձական օրագիրներից։ 1851—  
1861 թուականների համար օգտուել ենք նաև  
Երրեակ հոգաբարձութեան հրատարակած «Տասնա-  
մեայ գործողութեանց և հաշուոց Տեսութիւնից»,  
(Թիֆլիս, 1861)։

Քանի մօտեցել ենք ներկայ ժամանակին՝ այն-  
քան զգուշացել ենք գնահատելուց որևէ գործ կամ  
գործիչ դպրոցական ասպարէզում, այլ բաւականա-  
ցել ենք միայն իրողութիւնները հաղորդելով։

### Ստ. Մ.

28 ապրիլ, 1900,

Թիֆլիս։

Եթէ երևակալութեամբ փոխադրուինք մե-  
զանից 100 տարի առաջ, տասնեւիններորդ դարի  
սկիզբները, և մեր աչքին պատկերացնենք այն  
ժամանակի հայոց մտաւոր և հասարակական  
դրութիւնը, ինչ տիսուր, խաւար պատկեր կը  
նկրկալանայ մեզ։ Զկայ գրականութիւն և մա-  
մուլ, չկայ հասարակութիւն և հասարակական  
շահեր, չկայ դպրոց և գրագիտութիւն, առհա-  
սարակ չկայ այն ամենը՝ ինչ որ միասին վեր-  
ցուած՝ այսօր ընդհանուր խօսքով կոչում է  
քաղաքակրթութիւն։ Տիրում է տգիտութեան  
խոր խաւար, և այս խաւարի մէջ եռում զե-  
ռում են անձնական կրքեր, անիրաւութիւն-  
ներ, հարստահարութիւններ, մատնութիւն,  
ոխակալութիւն։ Հայ ժողովուրդը կորցրել է իւր  
լեզուն, խօսում է վրացերէն։ Նոյն-իսկ քահա-  
նաները դժուարանում են հայերէն խօսել։ Եթէ  
հատ-հատ պատահում էլ էին այս և այն դա-  
ւառից կամ արտասահմանից եկած «գիտնական»  
հայեր՝ դրանց գիտութիւնը սկսում էր սաղ-  
մոսով և վերջանում «ճարտասանութեամբ», -  
որից այն կողմն այլ ևս գիտութիւն չկար, ան

դունդն էր սկսւում. այսինքն այնպիսի զիտնականներ՝ որոնց ընորոշելու համար ներկայումս «տիրացու» անունն են տալիս: Եւ այսպիսի «գիտնականը», իւր չնչին հմտութեամբ, իւր նեղ աշխարհայեացքով՝ այնու ամենայնիւ մեծ գանձ էր համարւում, որովհետև կարդալ-գրել գիտցողների կատարեալ սով էր տիրում այն ժամանակ, և յայտնի է, որ «կոյլերի մէջ մի աչք ունեցողը ժագաւոր է», ինչպէս ասում է առածը:

Թիֆլիսը, Վրաստանի մայրաքաղաքը և ամենահայաշխութ քաղաքը Անդրկովկասում, միւնքն ժամանակ մտաւոր և հասարակական գործունէութեան կենդրոնը ահա ինչ դրութեան մէջ էր. «Թէ վրացիք, թէ հայք ոչ ծի դպրոց չունէին: Հոգևորականները զլել կարդալ չիտէին և ժամասացութիւնը սովորել էին բերանացի միմեանցից լսելով: Հայ քահանայք, բացարութեամբ մի երկուսի, իւրեանց աղգանունը ստորագլոււմ էին վրացերէն և կամ բաւականանում էին ստորագրութեան տեղ մելանոտ մատով կնքել պէտք եղած թուղթը: Ամբողջ քաղաքիս մէջ քաջ հայերէն իմացողի համբաւ ունէր միմիայն նորաշէն եկեղեցւոյ ժամկոչ Եղիազար Գալստեանը, որ իւր երկու ոտքով կաղ լինելու պատճառով մնացել էր առանց ձեռ-

Նաղրուելու: Եկեղեցուց ոչ Հեռու, խարազիսա-  
նալում, սա վարձած ունէր մի դուքան, ուր  
գետնի վրայ չողած էին 13 հոգի մոնթեր—  
ապագայ քահանայացուք, և տաւարի բեմի  
անուանեալ ոսկրէ թիւակի վրայ դրում և կար-  
դում էին բարձրաձայն: Ուսուցանողն էր միայ-  
նակ այն ժամկոչ Եղիազարը, իւրեան օդնական  
ունենալով փալախան: Դուքանի գուները բաց էր,  
և փողոցում անց ու դարձ անողները կանգնում  
նայում էին թէ մոնթերի իմաստութիւն ուսա-  
նելուն և թէ նոցա փալախայ ուտելիս—«վակ,  
վակ» գոռալուն: Դաստուութիւնն էլ շարու-  
նակ ու կանոնաւոր չէր և շուտ-շուտ էր ընդ-  
հատւում: Ճարաթը երկու անդամ այդ դպրո-  
ցում խալիֆայ Եղիազարը թանաք էր եփում  
և կաւեղէն ամաններով ուղարկում էր մոնթե-  
րին փողոցներում ծախելու «թանաք առէք»  
պոռալով: Բացի այդ՝ օր չէր անցնիլ, ժամ չէր  
անցնիլ, որ ծանօթները, բարեկամները և առ-  
հասարակ «խալիֆայի պատիւ» ճանաչողները  
չգային ու չխնդրէին, մէկը թէ «մերոնք (ըն-  
տանիքը) այսօր բաղանիք են դնում ամբողջ  
օրով, մի կամ երկու մոնթ բան պուր՞ լուացքի  
բողջէքը տանեն ու բերեն». միւսը խնդրում էր,  
թէ «կտուրս կաթում է, թող մոնթերը գան,  
ուքով տափտափեն կտուրը». երրորդը՝ թէ

«սանամէրդ (կնիկս) այսօր հաց է թխում, թող  
մոնթերից մէկը գայ ծծի երեխային օրօրելու»  
և այն։ Եւ մեծահոգի խալիֆան ոչ ոքի խաթրը  
չէր կոտրում ու մոնթերին բան էր պակա, օրե-  
րով այս կողմ, այն կողմն ուղարկում։

«Ահա այսպէս էր դարուս սկզբում չայոց  
վարժարանի նախատիպը Թիֆլիզում, և այն էլ  
միայնակ էր և հետը մրցող չունէր։

«Իրաց այդ դրութեան մէջ հայ հոգեռ-  
րականութիւնը տգէտ էր, ըմբոստ, անպատ-  
կառ, ոչ իւր կարգը և ոչ պատիւը ճանաչող։  
Եկեղեցիքը թալանուած, ազգային եկամուտ-  
ները յափշտակուած։

«Ազնուականք և իշխանականք—անուսք,  
գոռողք իւրեանց ցեղական ծագմամբ, բայց  
զազրելի վարք ու բարքե տէր, կեղեքիչք,  
հարստահարիչք ռամիկների ու տկարների։

«Ժողովուրդն ընկղմած խաւարի մէջ, բա-  
րոյապէս ընկած, օտարամոլութեան հակուած,  
խղճալի և ցաւալի դրութեան մէջ»։ (Ա. Երի-  
ցեան, Պատմ. Ներս. դպր. Ա. 30—31)։

Այս խղճալի դրութիւնը, եթէ երկար շա-  
րունակուէր՝ կորստաբեր կլինէր Անդրկովկասի  
հայոց համար։ Բարեբախտաբար մի քանի նպաս-  
տաւոր դէպքեր այս կորուստի առաջն առան  
և հայերի առաջ ճանապարհ բացին դէպի լուս

և քաղաքակրթութիւն։ Այս դէպքերից ամեն կարևորը, անտարակոյս, այն եղաւ, որ Ռուսաստանը՝ դարիս սկզբից հետզհետէ իւր տիրապետութիւնն ու հովանաւորութիւնը տարածեց Անդրկովկասի վրայ, բերելով իւր հետ կարգ ու կանոն, քաղաքացիական ու հասարակական կեանքի, ընդհանուր մտաւոր գարգացման և արդիւնագործութեան սկզբունքներ։ Միւս կողմից մեծ նշանակութիւն ունեցաւ այն հանգամանքը, որ ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմներից ինտոյ, քսանական թուականներում, Անդրկովկաս գաղթեցին Պարսկաստանից և Տաճկաստանից տասնեակ հազարներով հայածէս և հայախօս հայեր, որոնք ոչ միայն խտացրին հայ ազգաքնակութիւնը Անդրկովկասում, այլ և հայ լեզուն տարածեցին վրացացած հայերի մէջ։ Իսկ հայերէն գրագիտութեան, ազգային գրականութեան և ինքնաճանաչութեան մեծ զարկ տուեց Ներսէս կաթողիկոսը, իւր անունը կրող Ներսիսեան հոգեռոր Դպրոցով։

Ա.

Ներսէս Ե. կաթողիկոսը ծնուել է Աշտարակ գիւղում, 1770 թուին. նրա հայրն էր Ցարութիւն քահանայ Ճահազիդեան, իսկ մայրը՝

Քիւրականցի Սուսամբարը։ Այս զոյգը ունենում  
է մի քանի որդիներ, որոնք սակալն չեն ա-  
պլում, շուտով մեռնում են. ուստի ամուսիննե-  
րը ուխտ են դնում, որ եթէ արու զաւակ ու-  
նենան և ապրի՝ նրան Էջմիածնին կնուիրեն։  
1770 թուին նրանք ունենում են մի տղայ, ո-  
րին մկրտութեան ժամանակ Թորոս անունն են  
տալլս։ Երբ երեխան դառնում է 8 տարեկան  
նրա կնքահայրը, Գալուստ արքեպիսկոպոսը,  
Համաձայն ծնողաց ուխտին, նրան տանում է  
Էջմիածնին իւր մօտ և տալիս է Փառանգաւո-  
րաց դպրոցը կարդալու։ Ինչպէս վկայում են  
Ժամանակակիցները՝ Թորոսը եղել է «նիհար,  
կարճահասակ, աշխոյթ և կրակոտ, խաղական  
այն աստիճան, որ մօտենում է չարութեան,  
սրամիտ և հսարագէտ, զարմանալի լիշողութեան  
տէր, աշխատասէր, ընթերցասէր, բայց և նախան-  
ձոտ իւրեանից յառաջադէմների փառքին» (Անդ,  
եր. 3)։ Թորոսը 1791-ին ձեռնադրում է սար-  
կաւագ, ստանալով Ներսէս անունը, իսկ 1794-ին  
վարդապետ։ Զանազան կրօնական—եկեղեցական  
յանձնարարութիւններով ուղարկում է Զմիւռ-  
նիա, Մոլդավիա, Վալաքիա, Յունաստան, Կ. Պո-  
լիս, և 1799-ին դառնում է Էջմիածնին, Դա-  
ւիթ-Դանիէլեան տխրահռչակ կուտի ժամանակ,  
և դառնում է պարագլուխ և հոգի Դանիէլեան

կուստիցութեան։ Նորից երկար ճանապարհորդութիւններ է կատարում դէպի կ. Պոլիս, ապա Թիֆլիս և հարաւային Խուսաստան, Օդեսա, Բեսարաբիա, Կախիջևան ևն, և 1808 թուին զերադառնում է Էջմիածին, ձեռնադրում է Փանիէլ կաթողիկոսից եպիսկոպոս և արքեպիսկոպոս և նրա աջ բազուկն է դառնում կառավարութեան և կարգադրութեան մէջ։ 1814-ին նշանակում է առաջնորդ Վրաստանի և Իմէրէթի թեմի, որի մէջ մնում է մինչև 1827 թուականը։ Ապա, իբրև քաղաքավար աքսոր, Պասկեվիչի ցանկութեամբ, ուղարկում է Բեսարաբիա, իբրև այդ թեմի առաջնորդ։ Այստեղ գտնուելիս, 1843 թուին, ընտրուեց կաթողիկոս և 1845-ին մուտք գործեց Թիֆլիս, որտեղից դիմեց Էջմիածին։ Ապա փոխ առ փոխ ապրելով Էջմիածնում և Թիֆլիսում։ 1857-ին վախճանեցաւ Թիֆլիսում։ Նրա մարմինը փոխադրուեց Էջմիածին և թաղուեց տաճարի աւագ դռան աջ կողմում։ Նրա մարմարիոնեալ գեղաքանդակ տապանաքարի վրայ փորագրուած է։ «Պաշտպան Հալրենեաց»։

Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում սովորելով այն ժամանակների գիտութիւնները, որ ամփոփում էին միայն կրօնական և լեզուային գիտելիքների մէջ (ժամասացութիւն, աստուա-

ծարանութիւն, քերականութիւն, ճարտասասա-  
նութիւն, տրամաբանութիւն), Ներսէսը, վար-  
դապետ ձեռնադրուելով, երկար ճանապարհոր-  
դութիւններ կատարեց։ Այս ճանապարհորդու-  
թիւնները շատ օգտակար եղան նրա համար,  
որ ի բնէ օժտուած լինելով սուր մտքով, խել-  
քով, դիտելու ընդունակութեամբ՝ շատ բան սո-  
վորեց զանազան աշխարհներ շրջելիս, լայնեց  
իւր աշխարհայեացքը և առիթ ունեցաւ շատ  
մարդկանց հետ ծանօթանալու, դիտելու կեան-  
քըն ու մտաւոր դրութիւնը օտար աշխարհնե-  
րում։ Կարելի է ասել, որ նրա հինգամեալ ա-  
ռաջին ճանապարհորդութիւնը՝ նրա բարձրա-  
գոյն ուսման շրջանն եղաւ. և երբ նա վերա-  
դառնում է Էջմիածին՝ արդէն տեսնում ենք  
նրան որոշ հայեացքների և ուղղութեան տէր,  
կուսակցութեան պարագլուխ և ազդեցիկ գոր-  
ծիչ։ Գուցէ այս ճանապարհորդութիւնների ժա-  
մանակ նրա մէջ լրացաւ մի մեծ դպրոց հիմնե-  
լու, ազգային կրթութիւն տարածելու միտքը՝  
միտք՝ որ նրա բազմատեսակ գործունէութեան  
մէջ անդադար զբաղեցնում էր նրան և վերջա-  
պէս իրականացաւ։ Ներսիսեան Դպրոցի հի-  
մնարկութեամբ։

Դեռ 1807 թուին, Նախիջևանում եղած  
ժամանակ, նա մտադրուեց այստեղ հիմնել մի

մեծ ուսումնարան, որի համար նոյն-իսկ իւր  
ձեռքով մշակեց հետաքրքրական կանոնադրու-  
թիւն։ Թիէպէտ այս ուսումնարանը գլուխ չեկաւ,  
բայց Ներսէսը յետ չկանգնեց իւր մտադրութիւ-  
նից։ Էջմիածնում 1813-ին նա հիմնեց ժառան-  
գաւորաց դպրոց 50 հոգու համար, «որպէս մի  
ստուեր նրա մտքում նախատպաւորուած ուսու-  
մնարանի», որ վայելուչ լինէր ամենայն չայոց  
կաթողիկոսական աթոռին։ Այս ուսումնարանը,  
կամ ինչպէս Ներսէսը կոչում է, համալսարանը  
պէտք է հիմնուէր 200 աշակերտի և չորս լե-  
զուի վարժապետի համար, որին ձեռնարկելու  
համար Ներսէսն սպասում է, ըստ Պոլսից 75,000  
դրամուշ օժանդակութեան։

Սակայն Էջմիածնի միարաններից շատերը,  
ի նկատի առնելով մեծամեծ ծախսերը՝ հակա-  
ռակ էին Ներսէսի այս մտքին։ Հակառակ էր  
նաև ժամանակի գիտնական Սերովքէ եպիսկո-  
պոսը, թէև ուրիշ տեսակէտից։ Նա ապացուցա-  
նում էր, թէ Էջմիածնում, Պարսից տիրապե-  
տութեան տակ, վանական կարգ ու կանոնի  
մէջ, չէ կարելի բարեկարգ դպրոց ունենալ. ա-  
մելի յարմար է Էջմիածնի հաշուով և հովանա-  
ւորութեամբ այլպիսի մի դպրոց բանալ Թիֆ-  
լիսում, Ուսուաց տիրապետութեան տակ, որտեղ  
թէ՛ ապահովութիւն կալ և թէ ուսմամբ պա-

բապելու յարմարութիւն։ «Ներսէսը հակառակն էր պնդում, «Էջմիածին է տեղին հաստատեալ հիմնեալ և սրբեալ լերկնուստ ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և է աթոռ նորա, վասն որոյ կվայելէ, որ ազգի մէջ լոյաը այս տեղից տարածուի և ոչ թէ արտաքուստ զայ»։

Արդեօք Սերովքէ եպիսկոպոսի փաստե՞րը համոզեցին Ներսէսին, թէ հանգամանքները այնպէս բերին — զժուար է զուշակել. — բայց տեսնում ենք, որ հայոց համար բարձրագոյն դպրոց հիմնելու համար Ներսէսը վերջ ի վերջոյ կանգ առաւ Թիֆլիսի վրայ, ուր և հանդիսաւոր մուտք գործեց նա 1814 թուին իրեւ առաջնորդ, ոգեւորուած ջերմ ցանկութեամբ՝ այս-տեղ ուսումնարան հիմնելու։

Բ.

Թիֆլիս ժամանելով՝ Ներսէս անմիջապէս հետամուտ եղաւ իւր փայտայած նպատակն իւրագործելու։ Սրա համար նա Թիֆլիսի հայ մեծամեծներին ժողովի հրաւիրեց և իւր մտադրած ընդարձակ ուսումնարանի ծրագիրը բացատրելով՝ առաջարկեց նուէրներ հաւաքել այդ նըպատակով։ «Եթէ իմ թեմում գտնուող գոնէ 12,000 հայ ընտանիքները մի-մի բուբլի նուի-

ըեն՝ ասում էր նա, ես ուրիշ թեմերից և ուտար երկրներից հանգանակութիւն անելով կը լրացնեմ 30,000 բուրզ, որ մշտնչենաւոր աղբւոր լինի ուսումնարանի ապահովութեան համար»։ Ժողովուած հասարակութիւնը, որ ժամկոչ Եղիազար Գալստեանի դուքան-վարժարանից զատ ուրիշ ուսումնարան չէր տեսել, գուցէ և հասկացողութիւն էլ չունէր՝ այս զումարը լսելիս՝ ապշեց ու ծիծաղեց միանգամայն, ասելով, թէ «վարդապետը ուզում է բանկ շինել», և ցըռուեց առանց որևէ հետևանքի։ Ապա վրայ հասան զժոտութիւնները ներսէսի և Թիֆլիսի մի քանի ազդեցիկ հայ Լշշանների մէջ, որի պատճառով ներսէսը ստիպուեց հեռանալ Գօրի և այնտեղ մնալ առ ժամանակ։ Այնու ամենայնիւ, սպասելով յարմար դէպքի, իւր մտադրած ընդարձակ դպրոցը հիմնելու համար՝ 1815 թուին Վանքի եկեղեցու խուցերում բացեց ժամանակաւոր փոքրիկ դպրոց, որտեղ մօտ քսան հոգի, քահանաների որդիք, սկսեցին կարդալ-գըրել սովորել նախ Տէր-Ցովհան աւագ քահանայի և ապա Պօղոս վարդապետի ղեկավարութեամբ, և ներսէսը նոյն-իսկ Գօրիից հետևում էր այս դպրոցի բնժացքին և իւր խոր-հուրդներով ղեկավարում Տէր-Ցովհանին։

Միայն 1817 թուին ներսէսը հնարաւո-

բութիւն ունեցաւ ձեռնարկել ու իրագործել այն՝  
ինչ որ տարիներով որոշուած էր իւր մտքում և  
Հանգիստ ու դադար չէր տալիս։ Այս թուին  
Սարգիս Լոռիս-Մելիքեանը դպրոցի կառուցման  
Համար առաջին հռեհը մատուցեց Ներսէսին—  
500 ր. թղթադրամ։ Մի քանի օրից՝ Վանքի  
աւագ քահանան Ներսէսին ներկայացրեց մի  
գրութիւն, որից երևում էր, որ 1801 թուին  
վախճանած Յովհաննէս աղայ Լազարեանցը կը-  
տակել է, որ Թիֆլիսում հայոց ուսումնարան  
շինելիս՝ իւր ժառանգները այդ նպատակի հա-  
մար տան 3,000 ր. թղթադրամ։ (Եւ Յովհակիմ  
Լազարեանցը, կտակողի ժառանգը, 1818 թու-  
ին վճարեց այս գումարը, աւելացնելով նաև  
2,000 ր. իբրև տոկոս, բացի սրանից՝ 1820  
թուին կրկին նոյն նպատակի համար նուիրեց  
2,100 ր.):

Այս բարելաջող նշաններից քաջալերուած՝  
Ներսէսը ձեռնարկեց Դպրոցի շինութեան։ 1818  
—1824 թուականները ամբողջապէս նուիրուած  
էին շինութիւնը պատրաստելու։ Հեռատես չի-  
մնադիրը, կամենալով իւր Դպրոցի համար մըշ-  
տական աղբիւր պատրաստել՝ նաև շինել տուեց  
32 խանութ, որի համար նախընթացաբար  
պէտք էր ջրհոր փորել, աղիւս թրծելու հնոց  
շինել, քար կտրել, կիր հանել, կամուրջ շի-

Նել և այն։ Այս բոլորը, Ներսէսի յարատև աշխատութեամբ և ժողովրդի աջակցութեամբ, գլուխ եկաւ, և 1822 թուին խանութները արդէն պատրաստ էին և հետզհետէ սկսեցին վարձով տրուել։ Երբ խանութների շինութեան գործը բաւական առաջ էր գնացել՝ Ներսէսը 1821 լուին «Եպուէմբերէ 16-ին, «յուսով մարդասիրութեան ողորմած Տեառն Աստուծոյ ամենաակարողի, ոչիշխան արքու բրելոց զհի մուտք ուսումնաբանի», նախապէս երկար գրադրութեամբ ու հետաքըրքրութեամբ պատրաստել տաշով կրկնայարկ շինութեան պլանը, բերել տալով զանազան տեղերից հմուտ վարպետներ և կարևոր նիւթերի մասին հոգալով։

Վերջապէս 1822 լուին գետրվարէ 7-ին Ներսէսը, ներկայութեամբ Երմօլօվ կուսակալի և խուռն բազմութեան, հանդիսով հարաբեց Ուսումնաբանի հիմնուհեցը, և այս առիթով վառաւոր ճաշ տուեց հիւրերին և բանուորներին։ Ինքը հիմնադիրը նշանակել է իւր յուշատեսրում։

«1822 վետրվարի 7, երեքշարաթ, ի տօնի Սրբոց Ղկոնդեանց քահանալիցն կատարեցաք գհանդէս հիմնարկութեանց»։

Փողովուրդը, տեսնելով իւր առաջնորդի ձեռնարկած բործի վեհութիւնը, նրա եռանդն ու հոգացողութիւնը բնիքն ևս եռանդի եկաւ

և թէ նուիրատուութիւններով, թէ աշխատանքին ու ծախսերին մասնակցելով՝ նիւթապէս ու բարոյապէս աշակից եղաւ ներսէսին:

Այսուհետեւ գործը սկսեց եռ գալ և արագադապ առաջ գնալ, թէպէտ պակաս չէին դարձեալ տեխնիքական և իրաւաբանական խոչընդոտներ: Ճինութիւնը բոլորովին աւարտուեց 1829 թուին և ըստ վկալութեան ներսէսի՝ արժեց աւելի քան քառասուն հազար ըուբլի, մի գումար, որ այն ժամանակներում ահագին պէտք է համարուէր, այն էլ մի ուսումնարանի շինութեան վրայ ծախսուած: Մրա փոխանակ՝ շինութիւնն այնքան հոյակապ դուրս եկաւ, որ Թիֆլիսում միակն էր համարուում փառաւորութեան կողմից և զրաւում էր թէ քաղաքացոց և թէ օտարականների ուշադրութիւնը, և մինչև անգամ ուստերէն տպուած աշխարհագրական մի քանի ձեռնարկների մէջ լիշուած է, թէ Թիֆլիսում նշանաւոր է ներսէսի կառուցած Դպրոցի հոյակապ շէնքը:

Թէպէտ Դպրոցի շինութիւնը կատարելապէս վերջացաւ միայն 1829-ին, բայց դեռ 1824-ի ամառը երկրորդ յարկի շինութիւնն արդէն վերջացել էր. ուստի այս տարուայ սեպտեմբերին Պօղոս վարդապետն իւրա աշակերտներով վանքի ժառանգաւորաց ժամա-

Նակաւոր դպրոցից վոփիադրուեց այստեղ, Ներսէսի հրամանով, և շարունակեց իւր սկզբնական դասաւանդութիւնը: Իսկ Ներսէսին Գորկոցը, իւր լատուկ կազմակերպութեամբ, դաշտօնառնեց» բացուածց 1824 Առաք դէէրենէների 1-ին: Այս մասին չկան պաշտօնական թղթեր և ոչ բացման հանդէսի նկարագրութիւն: Կայ միայն Առ. Երարատեանի, Ներսէսեան Գորկոցի անդրանիկ ուսումնաւարտի այս վկայութիւնը. «Ներսէսեան ուսումնարան բացաւ ձեռամբ Յարութիւն քահանայի Ալամդարեան ի դեկտեմբերի մէկ դամի 1824»...

Պ.

Նորաբաց Գորկոցի համար Ներսէսը, երկար Հարցուսփորձերից իստոյ, հրաւերեց Մոսկվայից Յարութիւն քահանայ (իստոյ վարդապետ) Ալամդարեանին, որին, բացի ուսուցչութիւնից և ուրիշ պաշտօններից՝ բանձնեց և Դարպացի տեսչութիւնը: Ալամդարեանը լաւ կըրթութիւն ստացած, գրական տաղանդի տէր, լեզուագէտ, աշխոյժ, գործունեալ, բարեխիղճ աշխատաւոր էր: Նա ծնուել էր Աժդէրիսանում 1796-ին, աշակերտել էր գիտնականի համբաւ վայելող Սերովից Վարժապետ Պատկանեանին և ապա Մոսկվա գնալով՝ քարտուզարի պաշտօն

էր վարում Լազարեանների մօտ, միևնոյն ժամանակ դասախոսում էր Լազարեան ճեմարանում և թարգմանութիւններով պարապում։ Նրա տաղաչափական գրուածքները, որ հրատարակեց նրա թոռը (մօր կողմից) պլրօք. Ք. Պատկանեանը 1884 թուին՝ փայտեցնում են հեղինակի ճաշակը, փափուկ զգացմունքը և հմտութիւնը դրաբար լեզուի։ Ալամդարեանը դեռ 18 տարեկան հասակում, 1813 թուին, ամուսնացաւ և ունեցաւ երկու աղջիկ զաւակ. բայց 1821-ին \*) նրա կինը մեռաւ, և Ալամդարեանը, արդէն քահանայ, դեռ 26 տարեկան՝ մնաց այրի, երկու դեռահաս որր երեխաներով։ Այս ժամանակ ահա նա հրաւէր ստացաւ ներսէսից՝ Թիֆլիս գալու և իւր հիմնած Դալբոցը կառավարելու։

Ալամդարեանը Թիֆլիս հասաւ 1824 թուի աշնանը և լցուած երիտասարդական հասակին լատուկ ոգեսրութեամբ, իրախուսուած ներսէսի հովանաւորութեամբ և օրինակով՝ անձնատուր եղաւ նորաբաց Դալբոցի կազմակերպութեան

\*) Պ. Ա. Երիցեան (Անդ, եր. 85) դնում է 1822-ին. բայց Ալամդարեանի երկերի մէջ տեսնում ենք, որ 1821-ի օգոստոսից նա ողբում է իւր սիրելի կորուսար, իսկ „Յար վառ է կայձ“ երգում, որ գրուած է 1821-ի օգոստոսի 15-ին և նույիրուած իւր կնոջ Մարգարիտին՝ նա իրան կոչում է „այրի“։ Տես Յար. վարդ. Ալամդարեանցի Զափարեականք, Ո. Պետերբուրգ, 1884, եր. 8:

և բարեկարգութեան, որպիսի զործունէութիւնը անտարակոյս մեծ սփոփանք էր նրա դեռ ծխացող, վշտացած սրտին։ Նրա տեսչութեան ժամանակը, որ տևեց 6 տարի, 1824-ի դեկտեմբերից մինչև 1830-ի օգոստոսի 1-ը, չնայելով զանազան պատահարներին՝ կազմում է Ներսիսեան Թաղրոցի ամենից արդիւնաւոր շրջանաներից մէկը և կոչուել է «Դար Ալամդարեանի»։

Ալամդարեանը Ներսէոի հաւանութեամբ նախ կազմեց ծրագիր՝ աշակերտների և դպրոցական դասընթացի մասին։ Այս ծրագրի համեմատ՝ Թաղրոցը պէտք է ընդունուէին աշակերտներ 8 տարեկանից սկսած, (բարձրագոյն տարիք մտնող աշակերտների համար չէր որոշուած՝ «յաղագս զինելոյ յաղգի մերում դըպրութեան»), և կարող էին մնալ Թաղրոցում սովորելու մինչև 18 տարեկան հասակը։ Ուսանելի առարկաներն էին— հայերէն, ռուսերէն և կամ ֆրանսերէն կամ պարսկերէն (ուրիշ լեզուներ՝ կամաւոր)։ այս լեզուների քերականութիւնը. ապա ճարտասանութիւն, տրամաբանութիւն, գրականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, աստուածաբանութիւն, թուարանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, ֆիզիկա, նկարչութիւն։ Ամէսը մի անգամ պէտք է տեղի

ունենալին ժողովներ, խորհրդակցելու համար աշակերտների վարքի և ուսման մասին։ Այս խորհրդակցութիւնների մասին պէտք է կազմուէլին արձանագրութիւններ։ Ժողովներին պէտք է մասնակցէին, բացի ուսուցիչներից և նաև Գէորգ Աղայ Արծրունին, (որ սկզբից ի վեր զիխաւոր հօգացող էր Դպրոցի տնաեւական մասի), Թիֆլիսի Յ եկեղեցիների երեցփոխներ և ուրիշ հասկացող անձեր՝ քահանաների միջից։ Նախ որոշւում էր բանալ Յ նախապատրաստական դասարաններ՝ մի-մի ուսուցչով իւրաքանչիւրի համար, յետոյ հետզհետէ պէտք է բացուէին բարձր դասարանները՝ առանձին, ուսուցիչներով իւրաքանչիւր առարկայի համար։ Դասաստուութիւնը պէտք է տևէր օրական 8 ժամ, կէսը մինչև ճաշ, կէսը ճաշից, յետոյ։

Այնուհետև Ալամդարեանը կազմեց ասելի մանրամասն հրահանգ ուսուցիչների համար և դասերի բաժանման ցուցակ։ Հրահանգի մէջ նկատուում են արդէն դպրոցավայել, մարդասիրական սկզբունքներ։ Ուսուցիչը պարտաւոր է իւր վարք ու բարքով օրինակ տալ աշակերտներին, պէտք է սիրէ նրանց իբրև հազր, ամենամասն լատրութիւն չդնելով հարուստի և աղքատի մէջ, «որովհետև որ մի անդամ մտանէ ընդ սեամո Դպրոցիս՝ Դպրոցիս որդեգրի»։ Կա-

շառք չպիտի առնէ, ընծալով կուրացած առաջ չպիտի քաղէ աշակերտին, կամ ընծայ յստանալիս՝ խէթ նայէ կամ արտաքսէ։ Հայ-  
հոյանք և անէծք արգելում են ուսուցչն։  
Դիմը նոյնպէս արգելում է երրորդ (բարձր) դասարանի համար. այստեղ յանցանքի դէպ-  
քում թոյլ է տրւում «մի քանի ժամ» ծունկ  
չոգեցնել, կամ երեսը մուր քսել, կամ ճաշից  
զրկել։ Ստորին դասարաններում թոյլ է տրւում  
թեթև ծեծ (քանոնով ձեռքին խփել), բայց  
խորհուրդ է տրւում, որ ուսուցիչն ինքն զգու-  
շանայ դահճութիւն անելուց, այլ աշակերտնե-  
րից մէկին հրամայէ 2—4 անգամ խփել յան-  
ցաւորի ձեռքին։ Ուսուցիչը պարտաւոր է ցու-  
ցակ պահել և նրա մէջ նշանակել, թէ իւրա-  
քանչիւր օր իւրաքանչիւր աշակերտ ինչ դաս է  
ունեցել և ինչպէս է պատառխանել, Ուսուցիչը  
ճշտութեամք պէտք է յաճախէ դասերը, նշա-  
նակուած օրերը, նշանակուած ժամերին, նա  
իւրաւունք չպէտք է ունենալ աշակերտներին  
ինքնազրութ արձակուրդ տալ, Ուսուցիչը իւրա-  
ւունք չպէտք է ունենայ դասերից յիտոյ կամ  
տօն օրերը այս կամ այն աշակերտին իւր բնա-  
կարանը տանել և հետը առանձին պարապել։  
Դատերի բաժանման հրահանդից տեսնում  
ենք, որ առ ժամանակ պէտք է բացուէին մի՛

այն երեք դասարան. առաջին դասարանում  
դասընթացը պէտք է տևէր երկու տարի, եր-  
կրորդում՝ նոյնպէս երկու տարի, իսկ երրորդում՝  
երեք տարի։ Առաջին դասարանում պէտք է  
աւանդուէր—հայերէն՝ այբբենարան, հեգելով  
Սաղմոս ու նոր Կտակարան, և ոռուսերէն՝ ալբ-  
բենարան, համառօտ պատմութիւն ս. Գրոց և  
նոր Կտակարան. բացի սրանցից՝ երկու լեզուի-  
վայելչագրութիւն և բառագիտութիւն գրաբա-  
րից աշխարհաբար և ոռուսերէնից հայերէն։  
Երկրորդ դասարանում աւանդուելու էին—հայ-  
երէն և ոռուսերէն քերականութիւն, պարսկե-  
րէնի սկզբունքները, երեք լեզուի վայելչագրու-  
թիւն, թուաբանութեան չորս գործողութիւն-  
ները և սկզբունք նկարչութեան, աշխարհա-  
գրութեան և պատմութեան։ Բացի սրանցից՝  
աշակերտները Գ. դասարանցոց հետ պէտք է  
լսէին քրիստոնէական վարդապետութեան մե-  
կնութիւն։ Գ. դասարանում պէտք է աւան-  
դուէին հայերէն և ոռուսերէն ճարտասանու-  
թիւն, պարսկերէնի քերականութիւն. թարգ-  
մանութիւն և շարադրութիւն այս լեզուներով.  
տրամաբանութիւն. պէտք է աւարտուէին  
թուաբանութիւն, նկարչութիւն, աշխարհա-  
գրութիւն, ընդհանուր ու մասնաւոր պատմու-  
թիւն և քրիստոնէական վարդապետութիւն։

Բացի սրանցից աշակերտները լաւ տեղեկութիւն պէտք է ունենալին հայոց և ռուսաց հին և նոր մատենագիրներից:

Աշակերտների պատրաստութեան աստիճանները տարբեր լինելով՝ առ ժամանակ թույլ էր տրւում իւրաքանչիւր դասարանում տարբեր դասընթացներ աւանդել, բայց ոչ աւելի քան երեք դասընթաց. (օրինակ, միևնույն դասարանում կարելի էր մի քանիսի հետ անցնել քերականութիւն, մի քանիսի հետ ճարտասանութիւն և միւսների հետ տրամարանութիւն. այսպէս և ուրիշ առարկաներից): Ուսուցիչները պարտաւորուում էին իրանց անցնելիք դասը դրել տեսրակներում, որտեղից աշակերտները պէտք է արտագրէին և իրանց արտագրածի վրայ սովորէին: Այս պարտաւորութիւնը դրուած էր՝ որովհետև դասագրքեր ընդհանրապէս չկային այն ժամանակ, իսկ մի քանի եղածներն էլ այնքան խրթին, դժուարահասկանալի էին, որ նրանցով աշակերտին անհնար էր դաս սովորել: Այս տեսրակները ուսուցիչները տարին երկու անգամ, մաքուր արտագրած, պէտք է ներկայացնէին Հիմնադրի քննութեան, որպէսզի եթէ նա գտնէր նրանց մէջ արժանաւորները՝ տպագրել տար և ալսալիսով հետզհետէ տպագրուած դասագրքեր պատրաստուէին:

առ նույնական այս պահանջմանը որպես ազգի  
և այլ պահանջման բառ՝ առաջարկ ան գտնվուի առաջ

Ինչպէս ասացինք՝ Ներսիսեան Դավրոցը  
բացուեց 1824-ի դեկտեմբերի 1-ին։ Պօղոս  
վարդապետն իւր աշակերտներով արդէն այնտեղ  
էր գոյնտեւմ, իսկ նորեկների ընդունելութիւնը  
նոյն դեկտեմբերին սկսուեց և շարունակում էր  
անընդհատ։ Դեկտեմբերի վերջին աշակերտների  
թիւը հասաւ 140-ի, 1825-ի սեպտեմբերին հա-  
սաւ 208-ի, և այս ժամանակ կազմակերպութ-  
ցին երեք դասարանները, որոնց մէջ բարձրա-  
գոյն, Գ. դասարանը կազմում էին Պօղոս վար-  
դապետի աշակերտները։ 1826-ի յունվարին ա-  
շակերտների թիւը հասաւ 302-ի, իսկ նոյն  
տարուայ մայիսին արդէն 360-ի։ Ներսիսեան  
Դավրոցի կեանքի այս առաջին շրջանում աշա-  
կերտների թիւն եղած է մոտ 400, ինչպէս  
գրում է Ալամդարեանը խւ նամակներից մէ-  
կում Ներսէսին։ 1826-ին, երբ աշակերտների  
թիւը հասաւ 360-ի՝ բացուեցին Դ. և Ե. դա-  
սարանները։

Այս սկզբնական տարիներում (1824—5) Պօղոցը միայն 5 ուսուցիչ ունի, բայց գոնէ այս-  
քան անունէ հասել մեզ։ Առաջինն էր, ի հար-  
կէ, ինքը Ալամդարեանը, որ աւանդում էր կրօն,

Հայերէն, ոռուսերէն և վայելչագրութիւն, միւն-  
նոյն ժամանակ կատարում էր տեսչի պարտա-  
ւորութիւնը, թէև կրում էր «վերակացու» ա-  
նունը Երկրորդն էր Պօղոս վարդապետը, որ ե-  
րեք աւանդում էր ճարտասահնութիւն և տրա-  
մարանութիւն։ Երրորդն էր Ա. Զելինսկի (ոռու-  
ազգով), որ աւանդում էր ոռուսերէն և թուա-  
րանութիւն։ Չորրորդը, Բեթղեհմ անունով, որ  
պարսկաստանցի հայ էր՝ աւանդում էր պարս-  
կերէն։ Հինգերորդն էր Ն. Արարատեանց, որ ա-  
ւանդում էր հայերէն, ոռուսերէն և վայելչա-  
գրութիւն։ Սա ասարտել էր ուսումը Լազա-  
րեան ճեմարանում, որտեղ աշակերտել էր Ալամ-  
դարեանին։ Այս փոքրիկ խմբի վրայ հսկում,  
նրան խրախուսում և առաջնորդում էր ինքը  
Հիմնադիրը։ Քանի որ Ներսէսը Թիֆլիսում էր՝  
Ալմարտեանը ոչ մի կարգադրութիւն չէր ա-  
նում առանց նրա նախընթաց համաձայնու-  
թեան։ «Այդ պատճառով 1825, 1826 և մին-  
չև 1827 թուի ապրիլը Ռևումնարանիս ամե-  
նաեռանդուն և մերձակայ կառավարիչն Համար-  
ուելու է նոյն ինքն Հիմնադիր Ներսէսը։ Արհին  
այդ միջոցում գրեթե ամեն օր առաւսու և ճա-  
շեց յետով, ոտքով գալիս էր Դպրոց, մտնում դա-  
ստուսն և ժամերով մնում այնտեղ ու շատ  
անդամ խլելով վարժապետի բերանից դասաւան-

դութիւնը՝ ինքն էր շարունակում պարապել  
համբակների հետ։ Այնքան շատ էր 55—56  
տարեկան ծերունոյ եռանդը և ոգեսորութիւ-  
նը, որ չնայելով իւր բազմաթիւ զբաղմունքնե-  
րին՝ նա, մինչև պատերազմ զնալը, ինքն իւր-  
եան նմանապէս հաշուել էր ի թիւս ուսուցչաց  
իւր Թպրոցի, որով թէ վերահսկում էր դորձին.  
և թէ խրախուսում ու քաջալերում էր վրժա-  
պետաց և աշակերտաց»։ (Անդ, եր. 104).  
Բայց Թիֆլիսից հեռանալուց յետով էլ Ներսէսը  
անդադար հսկում էր իւր Թպրոցի վրայ, շարու-  
նակ տեղեկալթիւններ ստանալով նրա ուսու-  
մնական ու տնտեսական դրութեան մասին և  
հրահանգներ ուղարկելով։

Հետօաքրքրական է լիշել և Թպրոցի ծախ-  
սը այս սկզբնական տարիներում (1826 թ.)։ Ու-  
սուցիչները պէտք է պարապէին օրական 8  
ժամ, և սրա համար ստանում էին ամսական  
5—12,50 ըուբի։ Այսպէս՝ Ա. դասարանի հայ  
և ուսուցչավարժութեան ուսուցիչը ամսական-  
ստանում էր 5 ը., Բ. դասարանինը՝ նոյնչափ։  
Գ. դասարանինը՝ 12 ը. 50 կ., Նկարչութեան  
ուսուցիչը՝ 12 ը. 50 կ., աշխարհագրութեան և  
պատմութեան ուսուցիչը՝ 6 ը. 66 կ., հայոց  
լեզուի և քերականութեան ուսուցիչը՝ 10 ը.։  
ուսաց լեզուի և թուարանութեան ուսուցիչը

16 ր. 60 կ., ընդ ամենը 7 ուսուցիչ պէտք է ստանալին ամսական 68 ր. կամ տարեկան մօտ 820 ր. ռոճիկ: Արանից գուրս է Ալամդարեանը, որին բոլոր պաշտօնավարութեան ժամանակ ներսէսը ռոճիկ չէր նշանակում, որի մասին յետոյ Ալամդարեանը գանգատում էր ներսէսին: Այս համեստ ծախսերին համապատասխան էին և նորաբաց Թաղրոցի սահմանափակ եկամուտները: Եկամուտների առաջին աղբիւրն էր քարվանսարայը (խանութները), որ 1825—26 թուականներին տարեկան մօտ 400 ր. էր բերում: Երկրորդ աղբիւրն էր նոյն Թաղրոցի շէնքը, որի երբեմն վերին երբեմն միջին յարկը, ինչպէս և նկուղները վարձով էին տրւում: Այս երկու անշարժ կալուածները 1830-ին տարեկան 258 ր. եկամուտ էին բերում: Եկամուտի երրորդ աղբիւրն էր Թաղրոցի տպարանը: Այս տպարանը գեռ 1662 թուին հաստատուած էր Այստէրդամում, Մատթէոս Ֆարեյու ձեռքով, իջմիածնի ծախքով ու անունով, յետոյ կատարելագործուել էր Ռոկան Երևանցու և Թաղէոս Վանանդացու ձեռքով: Այստեղ առաջին անգամ տպուեց Հայերէն Աստուածաշունչը և Խորենացու պատմութիւնը: 1717-ից այս տպարանը փակուեց և կնքուած պահուեց, իբրև իջմիածնի սեփականութիւն. բայց հետևող ստա-

ցող չկար, իսկ դուքս Էին գալիս զանազան պահանջատէրեր։ Աօտ մի դար յետոյ Գէորգ աղայ Արծրունին, թափելով տպարանը պահանջատէրերից՝ փոխագրեց Թիֆլիս և ընծախց Ներսէսին։ Ներսէսը տպարանը յատկացրեց իւր հիմնելիք Թաղրոցին և նրան կոչեց «Տպարան Ուսումնաբանի Հայոց ընծախալ յագնուական Գէորգայ Երեմեան Արծրունոյ»։ Թէև 1819 թուից տպարանը բացուած էր համարւում, բայց տպագրաթիւնները ծանօթ են միայն 1823 թուից սկսած։ Բայց իսկապէս նրա գործունեութեան յատգոյն շրջանը 1825—28 թուականներն են, որ յաս հանգիպում են ներսիսեան Թաղրոցի ծաղկած շրջանին։ Այս չորս տարուայ ընթացքում տպարանը, Ալամդարեանի ամսմիջական հակողութեան տակ, տպագրել է 25 գիրք (մէկը՝ նաև երկրորդ տպագրութիւն ունեցաւ), աւելի քան 16,000 գրինակ։ Այսոեղ տպուեցին նաև առաջին հայերէն գասագը քերը Ռուսաստանում—Այրենաբան, Հեղ Ասղմաս և Քերականութիւն (արտատպութիւն Զամշեանի քերականութեան)։

Թողնելով յիշել եկամուտի միւս երկրորդական աղբիւրները՝ տեսնում ենք, որ ներսէսը ոչ վիայն միջոցներ դուաւ մեծածախս Թաղրոց շինելու, այլ և ստեղծեց հաստատ աղբիւրներ,

որոնց եկամուսով ապահովում էր այդ Գը-  
պլոցի գոյութիւնը:

1826 և 1827 թուերին կատարուեցին  
Հանդիսաւոր տարեկան հարցաքննութիւններ,  
Հայ և օտարազգի երևելի անձերի ներկայու-  
թեամբ, և անդրանիկ աւարտող սաները, վը-  
կայագրով ու պարզեով վարձատրուած, դուրս  
եկան Գալոցից: Առաջին տարուայ շրջանաւարտ-  
ների թիւն էր 18, իսկ երկրորդ տարուանը՝  
30: Այս շրջանաւարտների մէջ դժուում էին ի  
միջի այլոց խաչատուր Արովեանը («Աէրք Հայաս-  
տանի»-ի հեղինակը), Ստեփանոս Նազարեանցը,  
(«Հիւսիսափալի» խմբագիրը և ուրիշ շատ աշ-  
խատութիւնների հեղինակը), Առաքել Արարա-  
տեանը, Գալուստ Ճերմազանեանը, Յովհաննէս  
Յովինանեանը (Յովինանեան դպրոցի հիմնադիրը),  
Պետրոս Մադաթեանը («Սէլեադ») և ուրիշ-  
ները, որոնք նույրուեցին գրականութեան, կամ  
մտան քաղաքական ծառայութեան մէջ: Առ-  
հասարակ Ալամդարեանի վեցամեայ կառավա-  
րութեան ժամանակ «Ներսիսեան Գալոցուամ  
գարգացան աւելի քան հարիւր աշակերտներ և  
նշանակուեցին զինուորական և քաղաքական  
պաշտօններում: Արանցից շատերը ներկայումս  
վարժապետութիւնն են անում ինչպէս Ներսիսեան  
Գալոցուամ, նոյնպէս և Վրաստանի և Հայաս-

տանի այլ քաղաքներում», —վկայում է Ալամ-  
դարեանը իւր նամակներից մէկում առ Ներսէս:  
«Ներսիսեան Դպրոցի աշակերտների առաջադի-  
մութիւնը, —շարունակում է նա, —յայտնի հըռ-  
շակում էր բոլոր տարեկան հարցաքննութիւն-  
ների ժամանակ, որի պատճառվ ոչ միայն  
սրբազան չիմնադիրդ հրապարակով և մասնա-  
ւոր կերպով Ձեր գոհունակութիւնն էիք յայ-  
տնում, այլ և աշակերտների ծնողաց աչքերից  
երախտազիտութեան արտասուք էր հօսում:  
Այս չէր արդեօք պատճառը, որ գիրազանց Ա. Ի.  
Կրասովսկին Ներսիսեան Դպրոցը ընտրելագոյն  
էր համարում քան Թիֆլիսի Ազնուականների  
դպրոցը»:

Ե.

Դժուար է երևակալել, մինչև ո՞ր աստի-  
ճան կզարդանար Դպրոցը բարոյապէս և նիւ-  
թապէս եթէ Ալամդարեանի կառավարութեան  
բոլոր տարիներն և այնուհետև էլ՝ նոյն եռան-  
դով և յաջողութեամբ շարունակէր առաջ ըն-  
թանալ: Բայց Հէնց Սլամդարեանի ժամանակ  
Դպրոցի առաջադիմութեան ճանապարհի վրայ  
երկու խոչընդուներ պատահեցին, որոնց հետ  
մաքառելու համար Ալամդարեանը պարտաւոր-

ուած էր գործ դնել իւր եռանդի և ժամանակի  
մի որոշ մասը, և վերջը, առանց կարողանալու  
յաղթել՝ ինքը պէտք է գլորուէր:

Առաջին չարիքը՝ Յակոբ Ջրպետեանն ե-  
ղաւ, որ Ներսէսի ձեռքով Փարիզից հրաւիր-  
ուեց Թիֆլիս՝ Դալրոցը ղեկավարելու և Գրան-  
սերէն դաս տալու։ Այս Ջրպետը հայագէտ դի-  
տնականի անուն էր հանել Փարիզում—թէպէտ  
զուրկ էր դիտութիւնից—և զանազան միջոց-  
ներով ձեռք էր բերել այնտեղ հայերէնի դա-  
սատուի պաշտօն Արևելեան լեզուների դպրո-  
ցում։ Ներսէսը, շլացած նրա չափաղանցացրած  
համբաւից՝ կամեցաւ նրան իւր Դալրոցը հրա-  
փրել, առանց խնայելու որևէ ծախս։ Ջրպետը  
արդէն-իսկ պէտք է արտաքսուէր Արևելեան  
լեզուների դպրոցից՝ երբ յանձն առաւ Ներսէսի  
հրաւէրը, առանց, ի հարկէ, նորան յայտնելու,  
թէ ինչն էր իրան ստիպում ընդունել այդ  
հրաւէրը. ընդհակառակը միշտ ցոյց տալով, թէ  
Փարիզում Գրանսիական կառավարութիւնը  
իրան կարիք ունի և միայն 3 տարով արձակուրդ  
է տուել։ Վերջապէս եկաւ նա Թիֆլիս 1826  
թ. դեկտեմբերին, և հազիւ դեռ Դալրոցը ոտք  
դրած՝ ծանր հիւանդացաւ տիֆով։ Ինքը ար-  
դէն 60 տարեկան հիւանդու ծերունի լինելով՝  
շատ դանդաղ էր առողջանում, և հազիւ 1827-ի

օգոստոսին կարող եղաւ Փրանսերէնի դասերն  
սկսել: Ներսէսը այս ժամանակ գնացել էր,  
պարսկական պատերազմի դաշտը, դէպի Երեւան,  
և ահա արդէն հոկտեմբերից սկսեցին տըր-  
տունջների նամակներ հասնել նորան. մի կող-  
մից Ալամդարեանը, Գէորգ Արծրունին և Յ.  
Ճերմաղանեանը (այս երկուսը Թպրոցի հաւա-  
տարիմ խնամակալներն էին, Ներսէսից նշանա-  
կուած) գանգատում էին Քրպետից, նրա ան-  
չափ դրամական պահանջների և ցոյց տուած  
քիչ արդիւնքների պատճառով, միւս կողմից  
Քրպետն էր նրանց վրայ գանգատում: Ներ-  
սէսը, որ առիթ չէր ունեցել դեռ մօտից ճա-  
նաչելու Քրպետին՝ վերջինիս կողմն էր բռնում,  
պատուիրում էր նրա բոլոր պահանջները կա-  
տարել, նոյն-իսկ յանդիմանութիւն գրեց Ալամ-  
դարեանին, նմանեցնելով նրան մի տգէտի, որ  
ձու խարշել անգամ չգիտէ, բայց դուրս է գա-  
լիս ուրիշ լաւ իսոհարանների համադամ կերա-  
կուրները պախարակելու: Թիֆլիս վերադառնա-  
լով՝ նա նոյն ընթացքը բռնեց — Քրպետին ա-  
մեն կերպով շահելու. Թպրոցի տեսչութիւնն էլ  
նորան յանձնեց, միւնոյն ժամանակ Թպրոցի  
և բոլոր միւս գործերի վերահսկողութեան հա-  
մար նշանակեց Սիմէոն արքեպիսկոպոսին, Ա-  
լամդարեանին, Գէորգ Արծրունուն և Յ. Ճեր-

մազանեանին, որոնց խորհրդակցութեանը պէտք է զիմէր նաև Զրպետր։ Երբ Ներսէսը 1828-ի օգոստոսին հեռացաւ Թիֆլիսից, Բեսարաբիա դնալու՝ այնուհետև դարձեալ անմիաբանութիւն և շփոթութիւն ընկաւ Զրպետի և խնամակալների մէջ։ Զրպետը հետզհետէ սկսեց բարեկամանալ Ներսէսի թշնամիների հետ, դանգատ տուեց նրա վրայ, անելով 'այնպիսի' պահանջներ, որ նրանց ապօրինութիւնը ստիպուած էր ճանաչել նոյն-իսկ քաղաքական իշխանութիւնը, որ այն ժամանակ սաստիկ հակառակ էր Ներսէսին ու նրա կողմնակիցներին։ Զրպետը վերջապէս հասաւ այն դրութեան, որ Ներսէսի հզօր հակառակորդների մտերիմն ու խորհրդատուն դարձաւ, չքաշուեց նոյն-իսկ մատնութիւններ անելուց։ Ներսէսը հասկացաւ, թէ ի՞նչ օձ էր Զրպետը, որին բերեց սնուցեց իւր թեր տակ, բայց արգէն ուշ էր։

Զրպետի կարճատես տեսչութեան ժամանակ Դպրոցի դրութիւնը զդալի կերպով վատացաւ։ «Անցեալ (1828 թուի) սեպտեմբերի սկզբին, — դրում է Ալամդարեանը Ներսէսին, — Դպրոցը 400 աշակերտով լանձնեցի աղայ Զրպետին։ այս տարուայ (1829) մալիսին նաինձ վերադարձեց ուսումնարանը 150 աշակերտով, որոնք զետեղուած են Յ դասարանում,

փոխանակ առաջուալ 6 դասարանին»։ Այնպէս  
որ Ալամդարեանն ստիպուած էր իւր տարիներով  
շինածը, իսկ Քրպետի 9 ամսուալ ընթացքում  
կիսով չափ քանդածը նորից վերաշինել։ Նոյն  
իսկ սեպտեմբերին նա աշակերտների թիւը կա-  
ռղ ացաւ հասցնել 213-ի և խանգարուած բա-  
րեկարգութիւնն ու առաջադիմութիւնը նորից  
մտցնել նրա մէջ։ — Քրպետի 2 տարուալ և 3  
ամսուալ գործունէութեան համար՝ Թպրոցը նո-  
րան ոռնիկ և ճանապարհածախս վճարեց 4,486  
ըուբլի (արծաթ), և բացի սրանից՝ քաղաքա-  
կան իշխանութեան առաջարկութեամբ՝ տուեց  
նորան էլի 1,000 ը. և, Փրանսիա վերադառ-  
նալու համար, կառք գնելու՝ 250 ըուբլի։ Քր-  
պետը սակայն էլ Փարիզ չդարձաւ, մինչեւ  
կեանքի վերջը մնաց Թիֆլիսում, և կառավա-  
րութիւնը նորան կենսաթոշակ նշանակեց տա-  
րեկան 500 ը.։



Երկրորդ, մեծագոյն չարիքը, որ Թպրոցի  
վրայ ծանրացաւ շարունակ մօտ 20 տարի՝ քա-  
ղաքական հանգամանքներն էին։ Ռուս-պարս-  
կական պատերազմը վերջանալուց յետու կոմս  
Պասկեվիչի լարաբերութիւնը դէպի ներսէս

յանկարծակի փոխուեց։ Կոմսը բարձրագոյն կառավարութեան առաջ նկարագրեց Ներսէսին՝ իրեւ մեծամեծ ցնորական երազների լետևից ընկած, կառավարութեան շահերին վնասակարու վտանգաւոր անձնաւորութիւն և առաջարկեց նրան հեռացնել Կովկասի սահմաններից։ Այս առաջարկութիւնը կատարուեց, և Ներսէսը 1828-ին նշանակուեց Բեսարաբիայի թեմին առաջնորդ, ուր և մեկնեց գնալու նոյն թուի օգոստոսի 6-ին։

Այս նոր պաշտօնը մի քաղաքավար աքսոր էր, որտեղ Ներսէսը մնաց 14 տարի։ Ժողովուրդը, մանաւանդ Ներսէսի մտերիմները, սարսափահար եղան, տեսնելով իրանց սիրելի և երքեմն հզօր առաջնորդի այսպիսի անփառաւոր վախճանը, և քանի որ գործին քաղաքական կերպարանք էր տրուած՝ իրանք էլ կասկածում էին իրանց մասին, իրեւ Ներսէսի բարեկամներ։ Այս յուզուած դրութեան պատճառով Դպրոցը փակուեց, որովհետև ուսուցիչները վախենում էին դասերին յաճախել։ Թէև ահաբեկուած երևակայութիւնները հետզհետէ հանդարտեցան, և Դպրոցը, 20 օր փակ մընալուց լետով, նորից բացուեց, բայց հարուածը արդէն հասցրուած էր.—400 աշակերտներից հազիւ թէ ալժմ 200-ը շարունակեցին Դպրոց

գալ, բայց որ գլխաւորն է՝ իտուածը և սրբաբենաւուածը արդէն մուտք գործեցին Դպրոցի կառավարիչների սրտում։ Ներսէսի և նրա Դպրոցի բարեկամները լիրաւի կասկածի ենթարկուեցին և, ահեց, ծակ ու ծուկ մտան։ Ներսէսի հակառակորդները գլուխ բարձրացրին. ինքը Զըրպետը դարձաւ կառավարութեան սիրելին և չէր խղճահարում, օգտուելով հանգամանքներից, ապօրինի դրամական պահանջներ անել Դպրոցից, որոնց ճարահատեալ պէտք է բաւարարութիւն տային Ալամդարեանը, Գ. Արծրունին, Գ. Ճերմազանեանը և Սիմէօն արքեպիսկոպոսը, որոնց յանձնել էր Ներսէսը իւր Դպրոցի կառավարութիւնը։ Այս չորս անձը վերջապէս յայտնի հալածանքի սկսեցին ենթարկուել. կոմս Պասկեվիչը պահանջեց, որ Ալամդարեանը հեռացնուի Թիֆլիսից։ Որչափ յեծ և արդիւնաւոր էր Ալամդարեանի գործունէութիւնը Թիֆլիսում 1824—28 թուականներում, Ներսէսի հօրութեան ժամանակ՝ աւելի ևս գնահատելի է նրա հոգեկան արիութիւնը և աղնիւ հաւատարմութիւնը այս միջոցին՝ երբ Ներսէսի աստղը խաւարել էր, երբ հովիւը զարկուած լինելով՝ հօտի ոչխարները ցըռուել էին։ Այս դառն հանգամանքներում նա դարձեալ աշխատում էր անդադար սպառնացող Դամոկլեան

սրլի տակ, ամեն ջանք դործ էր դնում Գալրոցի մէջ կարգն ու առաջադիմութիւնը պահպանելու և դրամական միջոցներ հայթայիթելու և մինչև վերջը հաւատարիմ մնաց Գալրոցին և նրա հիմնադրին։ Այս աղետալի ժամանակներին վրայ հասաւ 1830-ի խօլերան. շատ հիմնարկութիւններ փակուեցին, որոնց թուում և ներսիսեան Գալրոցը 1830 թուի օգոստոսի 1-ին։ Ցաջորդ օրը Ալամդարեանը Գալրոցի և տպարանի բանալինները յանձնեց զերմագանեանին և ինքն, համաձայն ստացուած հրամանին՝ ուղեղորուեց իջմիածին։ Օգոստոսի 6-ին խօլերայից մեռաւ և Գալրոցի գլխաւոր հոգատարներից մէկը — Գէորգ աղայ Արծրունին։

Գալրոցը, փակուելու միջոցին, տարեկան 3,096 ը. արդիւնքի աղբիւր ունէր սեփական անշարժ կալուածներից, որ աւելի քան բաւական էր նրա այն ժամանակուայ ծախսերին։ Իսկ աշակերտների և ուսման վիճակը այս միջոցին՝ լաւ յայտնի չէ, որովհետեւ գրաւոր տեղեկութիւն չէ մնացել։ Գիտենք միայն, որ 1829 թ. հոկտեմբերին Գալրոցն ունեցել է 213 աշակերտ, բաժանուած երեք դասարանի։ Աւանդուելիս են եղել — հայերէն (քերակ., ճարտաս.), ուուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն լեզուներ, նկարչութիւն, թուաբանութիւն, քրիստոնէական վար-

դապետութիւն, պատմութիւն և աշխարհագրութիւն։ Ուսուցիչների տարեկան վարձն է եղել 1,513 ը.։ (Ինքը Ալամդարեանը և աշխարհագրութեան ու պատմութեան ուսուցիչ իշխան ի. Զ. Արդութեանը վարձ չեն եղել ստանալիս)։

Մի քանի խօսք էլ ասենք Ալամդարեանի յետագայ վիճակի մասին։ Ներս. Դպրոցի տեսչութիւնից հեռանայուց յետոյ, Թիֆլիսի հասկացող անձերի մի բազմաթիւ խումբ, գնահատելով նրա Դպրոցին մատուցած մեծ ծառայութիւնները՝ խնդրագրով դիմեցին ծերունի Եփրեմ կաթողիկոսին, որ Ալամդարեանին եղիսկոպոս ձեռնադրէ և նորից Թիֆլիս վերադարձնէ Դպրոցը կառավարելու։ Այս ժամանակ Եփրեմը արդէն հրաժարական էր տուել, և Յովհաննէս Կարբեցու կաթողիկոսական ընտրութիւնն էր կատարում, Ներսէսի և Ներսէսականների ոխերիմ հակառակորդի. միենոյն ժամանակ կոմս Պասկեվիչից հրաման էր ստացուել՝ Ալամդարեանին անպատճառ աքսոր ուղարկելու մասին։ Հասկանալի է ուրեմն, որ Թիֆլիսեցոց բաղձանքը չկատարուեց։ Ընդհակառակը, նա ուղարկուեց իբրև աքսոր Հաղբատի վանքը, ուր նա հասաւ՝ ծանր, երկարատև հիւանդութիւն քաշելուց յետոյ. հիւանդութիւնը Հաղբատում նորից կրկնուեց այնքան

ծանր կերպով, որ արդէն անյուսալի էին համարում նրա առողջանալը և նոյն-իսկ լուր տարածեցին թէ վախճանուել է։ Սակայն նա առողջացաւ, և 1831 թ. յունիսին, Ներսէսի միջնօրդութեամբ, փոխադրուեց Բեսարաբիա, Ներսէսի լշխանութեան տակ։ Ցաւալի է արձանագրել, որ այստեղ նրանց մէջ անբաւականութիւն ծագեց, որովհետև Ներսէսը, իւր սովորական մանրակրկիտութեամբ, մանրամասն հաշիւներ էր պահանջում Ներսիսեան Դապրոցի դրամական գործերի մասին, այն-ինչ Ալամդարեանը, որի ձեռքում գտնւում էր Դապրոցի ելեմուտքի միայն մի մասը՝ չէր կարող լիակատար գոհացում պատճառել Ներսէսին։ Վերջապէս Ներսէսը, նեղանալով Ալամդարեանի անաչառ գրութիւնից, որտեղ թուում էր իւր մատուցած ծառայութիւնները և յանիրաւի կրած զրկանքները՝ նրան, նրա խնդրի համաձայն, հեռացրեց Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքը, վանահօր պաշտօնով, որտեղ տարին դեռ չբոլորած, 1834 թ. մայիսի գիշերը, նա սպանուեց աւազակներից, որոնք մտել էին վանքը կողոպտելու։ Նա մեռաւ դեռ 38 տարեկան հասակում և թաղուեց վանքի եկեղեցու գաւթում։ Միք. Միանսարեանց (Քնար Հայկ. եր. 586—7) պատմում է, թէ «Ներսէսը նորընտիր կաթողիկոս,

անցանելով Պիտերբուրգից՝ եկաւ ալցելութիւն  
Ալամդարեանի գերեզմանին, սաստիկ արտաս-  
ռուեց և հեկեկալով ասաց. «Յարութիւն վարդա-  
պետ, թէպէտ դու ինձ շատ վշտացուցիր, բայց  
Աստուած քաղցր անէ դատաստանդ»։ բայց  
ասում են թէ ետոյ աւելացրուց. «Եթէ Աս-  
տուած ինձ զքեզ բաշխած լինէր, ես իմ ձե-  
ռօք կծեռնադրէի կաթողիկոս, որ ետոյ իմ  
տեղս դու նստէիր»։

Ալպիսի վախճան ունեցաւ Ներս. Դպրոցի  
անդրանիկ տեսուչը, այն բազմաշխատ և բազ-  
մաշարչար մշակը, որի անունով Դպրոցի սկըզ-  
բնական, թէև կարճժամանակեայ, բայց բեղ-  
մնաւոր շրջանը կոչուեց «Դար Ալամդարեանի»։  
Լաւագոյն գովիստը նրա մասին՝ Ներսէս կա-  
թողիկոսի վերը բերուած խօսքերն են, որ բըղ-  
խել են մեծ մարդու աննախանձ և արդարա-  
դատ սրտից։

Դպրոցը, կարճաժև փակումից յիտոյ,  
նորից բացուեց 1830-ի սեպտեմբերի 20-ին,

Սիմէօն արքեպիսկոպոսի և Գ. Շերմագանեանի  
նախաձեռնութեամբ։ Բայց ցաւալի տեսարան  
էր ներկայացնում։ Աշակերտներն և ուսուցիչ-

ները ցրուած էին. Հեռացած էր Ալամդարեանը, Հիմնադիրը հեռաւոր Բեսարաբիայում արգելուած: Ի լրումն չարեաց՝ Թիֆլիսի առաջնորդ էր նշանակուել Յովկաննէս Կարբեցի արքեպիսկոպոսը (յետոյ կաթողիկոս), որ փոխանակ ազգային շահերով ոգևորուելու և վտանգուած Դալրոցը ոտքի կանգնեցնելու՝ ըոլորովին հակառակ ընթացք բռնեց, որով թէ իւր արծաթսիրութեան յագուրդ կտար և թէ իւր ատելի Ներսէսին հարուած կհասցնէր: Յգտուելով տիրող տրամադրութիւնից՝ նա հրատարակեց, թէ Ներսիսեան Դալրոցը շինուած է եկեղեցապատկան գետնի վրայ և եկեղեցական գումարներով, այս պատճառով՝ նա պէտք է կոչուի «Ալամդարան Էջմիածնի ի Տփխիս» (որպէսզի «Ներսիսեան» անունը վերանայ նրա վրալից), իսկ նրա բոլոր գուքը՝ շինութիւնները, գումարները, այդին, նոյն-իսկ տպարանը և նրա մէջ տպուած գրքերը, պէտք է պատկանին առաջնորդին, որ աթոռի ներկալացուցիչն է: Այսպէս ասաց և կատարեց: Եւ երբ նորան լիշեցնում էին, թէ Ներսէսը այդ մեծածախս շինութիւնները անելու համար խոշոր պարտքեր է արել, որոնք պէտք է վճարուին շինութիւնների եկամուտներից՝ նա պատասխանում էր, թէ պարտքերը Ներսէսի անձնական պարտ-

քերն են, թող ինչպէս ուզում է վճարէ։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչպիսի խնամք կունենար Դպրոցի վրայ Յովհաննէս Կարբեցին, որ հետամուտ էր միայն նրա ստացուածքները իւրացնելու և ներսէսի անունը ջնջելու։ Արդարեւ, նոյն թուի գեկտեմբերին Դպրոցը, մնացած լինելով անառաջնորդ—աշակերտներն և ուսուցիչները ցրուելով ինքն իրան փակուեց։ Պէտք է ասել ի պատիւ Թիֆլիսի Հայ Հասարակութեան, որ ինչպէս առաջ և լետոյ էլ մի քանի անդամ այս անդամ էլ նախանձախնդիր հանդիսացաւ Դպրոցին և բողոքելով կուսակալին՝ խնդրեց, որ ժողովրդի նպաստներով շինուած Դպրոցը յանձնուի ժողովրդի խնամատարութեան։ Կուսակալն էլ նկատելով մի կողմից Յովհաննէսի շահասիրական ձգտումները և միւս կողմից ժողովրդի չափազանց գրգռուելը նրա դէմ՝ յարմար համարեց ժողովրդի խնդիրը կատարել և հրամալեց պատուաւոր հայերից կազմել մի ժողով, առաջնորդի նախագահութեան տակ, որին և յանձնել Դպրոցի կառավարութիւնը։ Այս ժողովը կոչուեց «Կօմիտետ բարեկարգութեան Դպրոցի Հայոց Տփխիսայ», որի անդամ ընտրուեցին իշխ. Յ. Ամատոնի, իշխ. Յ. Արդութեան, Ե. Փիթոյեան-Եազուլեան, րժ. Սէր-Ղուկասեան, Թ. Ղորդանեան, Գ. Քէդ-

խուղեան, թ. Խատիսեան, Մնացականեան, Ս.  
Արխողոմեան և Յ. Արծրունի: Այս ընտրու-  
թիւնը հաստատուեց 1831 թ. յունվարի 12-ին,  
և կօմիտետը պաշտօնապէս բացուեց, որի ձեռ-  
քով Դպրոցը վերաբացուեց նոյն 1831-ի փե-  
տրվարին:

Բայց սրանով Դպրոցի դրութիւնը չբարե-  
կարգուեց: Կօմիտետի անդամները Ներսէսական  
էին, Կարբեցին՝ Ներսիսի ոխերիմ Հակառա-  
կորդ. այս պատճառով խուլ մրցութիւն կար  
շարունակ կօմիտետի և առաջնորդի մէջ: Մինչ-  
դեռ կօմիտետը ցանկանում էր Դպրոցում կարգ  
ու առաջադիմութիւն մտցնել՝ առաջնորդը հե-  
տամուտ էր միայն՝ Հաշիւ պահանջելու Դպրոցի  
անցեալ տարիների դրամական գործերի և գոյ-  
քերի մասին: Իսկ Սիմէօն արքեպիսկոպոսը և  
Շերմազանեանը, ի Հարկէ, ոչ առանց Ներսէսի  
Համաձայնութեան, պատասխանում էին, թէ  
Դպրոցի բոլոր Հաշիւները ներկայացրած են Ներ-  
սէսին և իրանց մօտ ոչինչ չկալ: Ներսէսին  
դիմել ոչ կարբեցին և ոչ կօմիտետը չէին Հա-  
մարձակում:

Այսպէս թէ այնպէս՝ Դպրոցի դրութիւնը  
շատ անմիտթարական էր: Նոյն 1831-ի ա-  
մառը Թիֆլիսի հայ ազնուականութիւնը, յու-  
սահատուելով Դպրոցը բարեկարգ վիճակի մէջ

տեսնելուց՝ դիմեց կառավարութեան, խնդրելով  
որ գիմնազիալում աւանդուի նաև հայերէն լե-  
զուն, որպէսզի հայերն էլ իրանց որդիքը աշա-  
կերտութեան տան այնտեղ։ Այս խնդիրը յար-  
գուեց. 1831-ի հոկտեմբերից հայոց լեզուի դա-  
սատութեան շտատ սահմանուեց գիմնազի-  
այում, և Ներսիսեան Գալլոցից 80—90 աշա-  
կերտ միանդամից տեղափոխուեցին դիմնազիա։  
Այդ օրուանից ունեոր հայոց որդիքը դիմում  
էին գիմնազիա, իսկ Ներսիսեան Գալլոցի բա-  
ժին մնաց չքաւոր դասակարգը։

Գալլոցի օրէցօր անկումը տեսնելով կօմի-  
տետը նոյն տարուայ օգոստոսին գրաւոր դիմեց  
Յովկաննէսին, որ այդ ժամանակ արդէն հաս-  
տատուել էր կաթողիկոս և շուտով պէտք է  
գնար իջմիածին օծուելու, և բացատրեց, որ  
մինչև Գալլոցին չվերադարձնուին նրանից յա-  
փշտակուած եկամուտները՝ անհնար կլինի նրա  
գոյութիւնը պահպանել. Գալլոցը կգոցուի, կօմի-  
տետը կարձակուի, որի չար հետևանքները գու-  
շակել թողնում են նորին վեհափառութեանը։

Այս սպառնալիքն ազդեց, և նորընտիր կա-  
թողիկոսը, ճարակատեալ, Գալլոցին վերադար-  
ձրեց նրա քարվանսարայի եկամուտները, որ  
իրան էր սեփականացրելու և վայելում էր ա-  
ռանց հաշիւ տալու։ Արժէ մէջ բերել նրա

խօսքերը: «Արդ կամեցեալ իմ մէծ տանել զ՞ու-  
վանառորութիւն մէծի ԱՄուսոյն է վերայ այսը վար-  
ժարանի, — գրում է նա կօմիտետին, օգոստ. 29-ին,  
— ես ինքն ի յարգել զիսնդիր ձեր զայն՝ ի կող-  
մանէ Ս. Աթոռոյն բարեհաճի՞մ տանել զայն շնորհ,  
զի ամ ըստ ամէ արդիւնք շինուածոյն այնո-  
րիկ (քէրվանսարայի), որոց գումար ի տարին  
հասանէ արդ ց1,542 մանէթ, յաջորդաբար յա-  
ւելցին անխափան ի գումարս սեպհական ար-  
դեանց վարժարանի ի ճահաւոր պահպանու-  
թիւն նորա»:

Կարբեցին գնաց Էջմիածին, կօմիտետն  
սկսեց բարեկարգել Դպրոցը: Բայց անհամա-  
ձայնութիւնը, որ կար Ներսէսական կօմիտետի  
և կաթողիկոսի մէջ՝ հետզհետէ աւելացաւ ու  
սաստկացաւ և փոխուեց կատարեալ թշնամու-  
թեան ու հակառակութեան: Աւելացաւ և մի  
նոր հանգամանք. — կաթողիկոսը մտադրուեց  
Թիֆլիսի եկեղեցիների գումարները գրաւել, որ-  
պէս թէ Էջմիածնի պարտքերը վճարելու նպա-  
տակով. իսկ կօմիտետը մեծ ընդիմագրութիւն  
ցոյց տուեց և պահանջեց, որ այդ գումարներն  
յատկացնուին Դպրոցի պահպանութեան: Այս  
պահանջը նրանք ուղղեցին նոյն-իսկ կառավա-  
րութեան: Կաթողիկոսը, ազատուելու համար  
այս նոր և վտանգաւոր խմբի ոտնձգութիւն-

Ներից՝ որոշեց միանգամայն փակել Թպրոցը, որ  
Ներսէսականների օջախն էր համարւում, և ցըր-  
ուել կօմիտետը։ Կօմիտետն էլ իւր կողմից հետ-  
զհետէ ուժասպառ էր լինում. յուսահատուած  
դրւրս էին գալիս անդամները մէկը միւսի յե-  
տևից, և նորերը չէին ընտրւում։ Այս լարուած  
լարաբերութիւնների մէջ Թպրոցը հետզհետէ  
ընկաւ, և կօմիտետը որոշեց՝ 1836 թուից փա-  
կել նրան, որի մէջ հազիւ 70 աշակերտ էր  
մնացել ։ Շ ուսուցչով։ Այս անդամ Թպրոցը փակ  
մնաց տարի ու կէս ժամանակ։

Քիչ տեղեկութիւններ են մնացել Թպրոցի  
ներքին դրութեան մասին կօմիտետի այս կա-  
ռավարութեան ժամանակ։ Եղած տեղեկութիւն-  
ներից երևում է, որ 1831-ի դեկտեմբերին  
Թպրոցն ունէր 150 աշակերտ, բաժանուած 4  
դասարանի. քննութեան ժամանակ սրանցից  
միայն 35-ը փոխել են դասարանները։ Ուսու-  
ցիչների թիւը յայտնի չէ. տեսուչն էր Արգա-  
նեանց Յակոբ, կանդիդատ Մոսկվայի համալսա-  
րանի։ 1832-ի վերջերում աշակերտների թիւն  
հասել է 220-ի, բաժանուած հինգ դասարանի.  
ուսուցիչների թիւը՝ 12։ Աւանդուում էին հայե-  
րէն, ոռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն, թուր-  
քերէն, կրօն, պատմութիւն, աշխարհագրու-  
թիւն, թուարանութիւն, երգեցողութիւն, նը-

կարչութիւն։ Դպրոցի այս համեմատական լաւ  
վիճակը, շնորհիւ եղած երկպառակութիւնների,  
շուտով վատացաւ, և ինչպէս տեսանք՝ 1835-ի  
վերջը նրանում մնացել էին 70 աշակերտ 7 ու-  
սուցով, և այս ընկած դրութեան պատճառով  
էլ կօմիտետը ստիպուեց նրան փակել։

Ե.

1836 թ. մարտի 11-ին հաստատուեց  
«Քարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառա-  
վարութեան գործոց Լուսաւորչական Հայոց Ե-  
կեղեցւոյ ի Ռուսաստան», կամ «Պօլօժենիէն, որ,  
ի միջի այլոց, սահմանում է, — յօդ. 112. «Լու-  
սաւորչական Հայոց Եկեղեցու մանուկներին աս-  
տուածաբանական գիտութիւնների մէջ կրթե-  
լու համար՝ Էջմիածնի վանքում և Ռուսաս-  
տանի լուսաւորչական իւրաքանչիւր Հայոց վի-  
ճակրում հաստատում են Հոգևոր դպրոցներ»  
(սեմինարիա)։ Այս Պօլօժենիայի տրամադրու-  
թեան համաձայն՝ 1837-ի վետրվարի 22-ին  
բացուեց Էջմիածնի տինօդը և օգոստոսի 7-ին՝  
Թիֆլիսի կոնսիստորի։ Թիֆլիսի առաջնորդ և  
կոնսիստորի նախագահ նշանակուեց յայտնի Կա-  
րապետ արքեպիսկոպոսը, որ 1829 թուին Տաճ-  
կապտանից բազմաթիւ հայ գաղթականութիւն

Էր բերել Թուժաստան, որոնք բնակեցան Ախալ-  
ցխալի, Ախալքալաքի և մասսամք Ալէքսան-  
դրապոլի գաւառներում։ Կարապետ արքեպիս-  
կոպոսը 1837-ի մայիսին Թիֆլիս գալով՝ հա-  
մաձայն Պօլօժենիալի տրամադրութեան և Յով-  
հաննէս կաթողիկոսի հրամանին՝ իսկոյն ձեռ-  
նարկեց հոգեոր դպրոց (սեմինարիա) բանալու։  
Կաթողիկոսը արդէն որոշել էր անելիքը. Ներ-  
սիսեան Դպրոցի շէնքը և կալուածները պա-  
տրաստ կային. նրան հոգեոր դպրոց դարձնելով՝  
մի անգամից թէ Պօլօժենիալի պարտադրու-  
թիւնը կատարած կլինէր և թէ Ներսէսի ատելի  
անունը վերացրած։ Այս մտքով էլ նա առա-  
ջարկեց կովկասեան կուսակալ բարօն Թօդէնին՝  
հոգեոր դպրոցի վերածել Ներսէսի շինած Դը-  
պրոցը, այս մտքով էլ հրաման տուեց նորըն-  
տիր առաջնորդին։ Կուսակալն էլ իւր կողմից  
հաւանութիւն տուեց լիշեալ առաջարկութեան  
և ներքին գործերի մինիստրին ուղղած զրու-  
թեան մէջ ի միջի ալլոց առաջարկում էր «ըո-  
լորովին գոցել լիշեալ (Ներսիսեան) Դպրոցը, որի  
գոլութեանը պէտք էլ չկալ, քանի որ Թիֆլի-  
սում կան տէրութեան գիմնազիան և նորա-  
հետ պահածիօնը, նաև ծխական և գաւառական  
ուսումնարաններ...» Հայոց Դպրոցի շինութիւնը  
գործ դնել սեմինարիալի համար, իսկ խանութ-

Ները և քարվանսարան... շինել վիճակալին հասովիթ՝ յօժանդակութիւն և ի պահպանութիւն սեմինարիայի»:

Այս առաջարկութիւնը հաստատուեց ներքին գործերի մինիստրից։ Կարապետ արքեպիսկոպոսը, ենթարկուելով այս նոր կարգադրութեան՝ կօմիտետից պահանջեց Դպրոցը և հաշիւները։ Կօմիտետը 1837-ի յունիսին վերջին նիստի գումարուելով՝ որոշեց յանձնել առաջնորդին Դպրոցը իւր բոլոր գոյքով՝ ինչպէս որ կար, և յուլիսի 1-ից դադարեցնել իւր գործունէութիւնը և լուծուած համարուել։

Այսպէս ահա 1837 թ. յուլիսի 1-ից Ներսիսեան Դպրոցը պաշտօնապէս ճանաչուեց Վրաստանի Հայոց թեմի սեմինարիա և վերաբացուեց 1837 թ. օգոստոսի 23-ին, սակաւաթիւ աշակերտներով, Յ դասարանով և սահմանափակ ծրագրով։ Առաջնորդը սակայն հետամուտ լինելով նրա դրութիւնը բարըոքելու տեսուչ հրաւիրեց կօգմա Սպասկի-Աւտօնոմովին, որ նրա հաւանութեամբ յաջորդ 1838 թուի համար կազմակերպեց նոր ուսուցչական խումբ, բաղկացած 11 հոգուց, որոնցից մէկը, ինքը տեսուչը, ուռւ, մէկը (Եօսելեան) վրացի, միւս 9-ը հայ Սրանցից 4-ը—Յ. Կարինեանցը, Հ. Ճահնազարեանը, Գ. Տէր-Աղեքսանդրեանը, Գ. Տէր-Յով-

Հաննիսեանը ուսել էին Կարինում Կարապետ  
եպիսկոպոսի հիմնած գպրոցում, Յ-ը—Ստ. Ման-  
դիսեան, Յ. Պողոսեան, Ա. Սարգսեան՝ Ներ-  
սիսեան Դպրոցի սաներիցն էին, Յ. Օքքէլին  
Լազարեան ճեմարանից և Ա. Խանջալեանը Աս-  
տրախանի գիմնազիայից: Աւանդուելու էին կրօն,  
ռուսերէն, հայերէն, պատմութիւն, աշխարհա-  
գրութիւն, թուարանութիւն և հոգևոր երգե-  
ցողութիւն: Դասարանների թիւը 4 էր. առա-  
ջին երեքում՝ շաբաթական 32-ական դաս, չոր-  
րորդում՝ 34 դաս: Տեսչին և ուսուցիչներին ոռ-  
միկ սահմանուեց ամսական 144 ը.: Թուաց  
լեզուն, պատմութիւնը, աշխարհագրութիւնը,  
թուարանութիւնը պէտք է անցնուէին ռուսե-  
րէն լեզուով, իսկ կրօնը, հայոց լեզուն և երգե-  
ցողութիւնը՝ հայերէն: Բացի ուսման այս սահ-  
մանափակումներից՝ կար և աւելի կարեոր սահ-  
մանափակում—այն է, որ սեմինարիան պէտք է  
ընդունուէին հոգևորականների որդիքը և նը-  
րանք՝ որոնք յանձնառու էին լինում վերջը  
հոգևորական դառնալու. այնպէս որ սեմինա-  
րիան, համաձայն իւր նեղ կոչման, պէտք է  
ծառայէր միայն հայ հոգևորականներ պա-  
տրաստելու:

Այս ուղղութեամբ և ծրագրով էլ սկսեց  
ընթանալ Դպրոցը 1838 թուից սկսած, Բայց

թէ ուսումնասէր Կարապետ արքեպիսկոպոսը և  
թէ չիմնադիբ Ներսէսը Ալշնեվում գոհ չէին  
նրանից, մանաւանդ վերջին սահմանափակու-  
մից, որ Դալրոցի էական նպատակը — լուսաւո-  
րութիւն տարածել ազգի մէջ — չափաղանց նուա-  
գիցնում, գրեթէ ոչնչացնում էր: Առաջնորդը,  
որ թէ Կարինում և թէ Ախալցխայում հիմնել  
էր իւրանուն դպրոցներ՝ չէր կարող բաւակա-  
նանալ, որ Թիֆլիսի նման կենդրոն տեղում  
ալսպիսի սահմանափակ ծրագրով և միայն հո-  
գևորական պատրաստելու յատկացած դպրոց-  
լինի, մանաւանդ որ աշխարհականների որդոց  
համար առանձին հայոց ուսումնարան չկարւ  
Ուստի նա դիմելով սինօդին՝ առաջարկում էր  
շտատ՝ շատ աւելի մեծ և բարեկարգ կերպով  
դնելու համար այս սեմինարիան, որ պէտք է  
ունենար իսկապէս ճեմարանի ծրագիր և դրու-  
թիւն, տարեկան 5,950 ը. ծախսով, բաժա-  
նուած 3 լսարանի. պէտք է ունենար սեփա-  
կան գրադարան, հիւանդանոց, պէտք է աւան-  
դուէին ի միջի ալլոց՝ նաև ֆրանսերէն և լա-  
տիներէն: Այս սեմինարիային կից առաջարկում  
էր ունենալ ստորին ուսումնարան, որ աշա-  
կերտներ հասցնէր սեմինարիայի համար. հէնց  
այս «ստորին ուսումնարանը», որի վրայ տա-  
րեկան ծախս հաշուած էր 2,100 ը.՝ աւելի ըն-

դարձակ ծրագիր ունէր քան գոյսւթիւն ունեցող Սեմինարիան։ — Կարելի է գուշակել, որ սինօդը չհաստատեց այս ծրագիրը, որի ծախսը չափազանց մեծ էր թուում կաթողիկոսի աչքին։ Նոյնպիսի գժուարութեան հանգիպեց և մերժուեց առաջնորդի միւս միջնորդութիւնը, որ աշխարհականների որդիքն էլ Պայրոց ընդունուին։ Սինօդը, ներշնչուած Յովիաննէս կաթողիկոսից՝ պատասխանում է. «Այն ժամանակ կարելի է հոգեւոր ուսումնարանն ընդունել աշխարհականների որդոց՝ երբ Տփխիս քաղաքի նույրներով ուսումնարանի դրամական միջոցներն աւելանան. իսկ այժմ, համակերպուելով դպրոցի արդիւնքներին ու միջոցներին՝ առաւելապես պէտք է սովորեցնել հոգեւորականների որդոց, իսկ մինչև այն ժամանակ աշխարհականների որդիքը կարող են սովորել արքունական ուսումնարանում»։ Կարապետ արքեպիսկոպոսը դրաւոր բացատրում էր կաթողիկոսին, թէ «աշխարհականների որդիք ծանրութիւն չեն լինի ուսումնարանին, որովհետև ուսուցիչները վարձւուած են առարկանների և ոչ թէ աշակերտների թուի համեմատ. թէ ամենից բարձր պէտք է դասել ազգի լուսաւորութիւնը և հրզով չափ պէտք է աշխատել պալծառացնելու ուսումնարանը, որից կախուած է ազգի բարօրութիւնը»։

Աւոսումնասէր առաջնորդի ըոլոր թախանձանքն  
ու սրտաբուղիս խօսքերը ապառաժի էին բաղ-  
խում։ Երևում է, որ առաջնորդն էլ, տեսնե-  
լով որ Դպրոցը զարդացնելու և բարձրացնելու  
իւր ըոլոր ջանքերը ապարդիւն են մնում կա-  
թողիկոսի դիմադրութեան շնորհիւ՝ ինքն էլ  
բուսաբեկ՝ ձեռնթափ եղաւ նրանից, թողնելով  
որ շարունակուի այնպէս՝ ինչպէս և որքան կա-  
րող է։ Կարեոր է լիշել և այն, որ Դպրոցը  
վերաբացուելուն պէս՝ առաջնորդը խստիւ հրա-  
ման արձակեց երկու անգամ, որ Թիֆլիսի հո-  
գևորականները (քահանաց, տիրացու) թէ ի-  
րանց որդոց տան Դպրոց և թէ իրանք դան  
իրանց ուսման թերին լրացնելու, և այս նպա-  
տակով հաստատեց առանձին «դասատուն չա-  
փահաս հոգևորականաց»։ Այս դասատունը սկը-  
սեցին յաճախել, չնայելով առաջնորդի սպառ-  
նալիքին, միայն 11 քահանաց և 9 ուրարա-  
կիր։ Բայց օրանք էլ երկար չշարանակեցին։  
Տասնեւորս ամիս գոյութիւն ունենալուց լնտոյ  
1839-ին փակուեց «չափահասների դասատունը»,  
ունկնդիր չունենալու պատճառով։ Նոյն յուսա-  
բեկութիւնը նաև այստեղ։

Վերջապէս նորից խօսեց Թիֆլիսի հասա-  
բակութիւնը, որ չէր կարող հաշտ նայել այն  
դրութեան, որ Ներսէսի ջանքով, ժողովրդի

առատ նուիրաբերութեամբ, հիմնուած Դալրոցից գուրա վանուէին աշխարհականների որդիք, Ժողովաւրդը, որ առաջ այնքան սիրով կպաճ էր Դալրոցին՝ այժմ օտարացաւ նրանից. ոմանք նոյն իսկ զղացին, որ նուէրներ են տուել նորան: Եւ ահա հասարակութիւնից մի խումբ մարդիկ զիմեցին կառավարութեան և լայտնելով, որ ժողովաւրդը օժանդակած լինելով Դալրոցի շինութեան այժմ միանգամայն զուրկ է նրա մէջ իւր որդոց կրթութիւն տալու հնարաւորութիւնից՝ խնդրամ էին Դալրոցի տարեկան եկամուտների կէսը բատկացնել արքունական գիմնազիալինք, որ հայ տղալոց համար պէտք է բանալ մասնագիտական դասարաններ՝ բատկապէս վաճառականութիւն դասախոսելու: Կառավարութիւնը այս ցանկութեան մասին հազորդեց սինօդին, Յովհաննէս կաթողիկոսի մահից յետոյ, և միան ալժմ, նիւթական կորուստի սպառնալիքից վախեցած՝ սինօդը ակամայ զիջում արաւ, — «Խնդրել կառավարութիւնից թոյլ տալ, որ Թիֆլիսի հայոց հոգևոր ճեմարանում տեղի հայ վաճառականների որդիքն էլ սովորին աւանդուած առարկաները, որով սինօդին հնարաւորութիւն կտրաւի երախտահատոց լինելու նրանց մշտական ջերմեռանդրութեան համար դէպի իրանց մայրենի եկեղեցին»:

Ներսիսեան Թպրոցի, իբրև հոգեւոր սեմի-  
նարիալի առաջին տասնամեայ շրջանում ու-  
նեցած ներքին դրութիւնը բաւական անմխի-  
թար էր: Երեսում է որ Կարապետ արքեպիս-  
կոպոսը մի քանի անգամ ջանքեր անելով նրա-  
վիճակը լաւացնելու, բայց ամեն անգամ սինօ-  
դի և կաթողիկոսի կողմից դիմադրութեան  
հանդիպելով՝ էլ ձեռնթափ եղաւ և Թպրոցը  
մատնեց իւր բախտին: Այն ժամանակ կարգն-  
ու առաջադիմութիւնը հետզհետէ վերացան-  
տիրեց կամայականութիւն ուսուցիչների մէջ,  
աանձարձակութիւն աշակերտների մէջ: Առ հա-  
սարակ այս շրջանը յարմար կլինէր կոչել Ա-  
խալցխացոց դար, որովհետև Կարապետ եպիս-  
կոպոսը, առանձին սէր ու գութ տածելով դէպի-  
իւր հայունակից Կարնոյ դադիթականները՝ Թը-  
պրոցում ևս շատ պաշտօններ տուեց նոցա-  
Գերիշխող դեր սկսեց կատարել այս ժամանակ  
հռչակաւոր Յակոբ Կարինեանց վարժապետը,  
Կարնոյ գաղթականներից, որ միենոյն ժամա-  
նակ կոնսիստորի քարտուղար էր, բայց իւր  
ձեռքում ունէր թէ կոնսիստորը իւր առա-  
ջնորդով և թէ Թպրոցը: Եշակերտները կարգ

ու կանոն չէին ճանաչում. խմբովին բացակայում էին դասերից, մանաւանդ բարձր դասարանցիք. շաբաթ օրերը ինքնակամ տօն էին հռչակում. շաբաթը երեք-չորս տնգամ, ուսւցէնի դասերին, բացակայում էին. լայտարարում էին, թէ չեն ուզում սովորել այս կամ այն առարկան, չեն ցանկանում այս-ինչ անձին ուսուցիչ ունենալ: Կահ կարասիք և ապահի ջարդելը՝ քաջութեան մի նշան էր համարում. միմեանցից, նոյն-իսկ Դպրոցի գոյքերից գողանալը—սովորական երեոյիթ: Ոմանք իրանց համար ննջարան էին դարձրել դասարանները, որտեղ և զիշերում էին շարունակ տարիներով. ուրիշները օրերով անհետանում էին քաղաքի արուարձանի այգիներում և վատ կեանքի անձնատուր լինում: Աւելացնենք և այն, որ դասարաններում խառն նստած էին լինում Շ տարեկան մանուկներից մինչև 21 և աւելի տարեկան պատանիներ (կար և մի ամուսնացած աշակերտ, 30 տարեկան), և թէ ինչ ազդեցութիւն պէտք է ունենալին այս պարմաններում մեծերը փոքրերի վրայ՝ դժուար չէ դուշակել: Աշակերտներից յետ չէին մնում և ուսուցիչները: Կարինեանցը, հակառակ տեսչի կամքին, իշխում էր իրեւ բացարձակ տէր. վորխում էր ուսուցիչներին, նորերն էր նշանա-

կրամ ըստ իւր հաճուքին։ Նրա պաշտպանած ուսուցիչները, առանց թոյլտութեան, ամիսներով բացակայում էին, դասերին ուշանում էին, աշակերտներին, ամբողջ դասարանով, առանց տեսչի գիտութեան արձակում և առ հասարակ թոյլ և առանց եռանդի պարապում։ Ծեծը թագաւորում էր Թպրոցում։ Թպրոցի տեսուչը այս տասնամեակում Յովսէփի քահանայ Օրբէլին էր, Մոսկուայի Լազարեան ճեմարանում աւարտած և համալսարաններում դասեր լսած։ Նա բարի տրամադրութիւն ունէր, բայց ոյժ ու հեղինակութիւն չունէր մաքառելու Թպրոցում արմատացած չարիքների դէմ։ Նա քանիցս անգամ խիստ խօսքերով գրաւոր բողոք է ներկայացրել կոնսիստորին ուսուցիչների կամայականութեան և զեղծումների դէմ, բայց կոնսիստորը (որի մէջ իշխող դեր էր կատարում նոյն կարինեանցը, իբրև քարտուղար) ուշադրութիւն չէր դարձնում։ Նա թախանձում էր, որ կոնսիստորը կարգադրութիւն անէ իւր մատնանիշ արած չարիքների մասին, ազապէս ինքը ստիպուած կլինի հրաժարուել իւր պաշտօնից, որովհետև չէ կարող այլ ես պատասխանատու մնալ Աստծու և մարդկանց առաջ— և դարձեալ անտարբեր էր մնում կոնսիստորը։ Այսպիսի պայմաններում առաջադիմութիւն

սպասելը անկարելի է։ Կոնսիստորի տուած զեկուցումից երևում է, որ 1847 թուին Դրապրոցն ունէր ընդ ամենը երեք դասարան, լեզուներից միայն հայերէն և ուսւարէն։ աշակերտների թիւն եղել է 134։ Այս տասնամեաբ ընթացքում Դրապրոցն աւարտել են 61 աշակերտ, ուրեմն միջին թուով տարին վեց հոգի։ Դրապրոցը այս ժամանակ եկամուտ է ունեցել տարեկան միջին թուով 1,715 ր., որից 1,250 ր. սեփական կալուածներից, իսկ մնացածը եկեցիների նպաստներից, որ նշանակուեց կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ։

Դրապրոցի այս անմխիթար դրութեան ժամանակ էր, որ Ներսէսը, իբրև կաթողիկոս, հանդիսաւոր մուտք գործեց Թիֆլիս 1845 թ. դեկտեմբերի վերջերին։ Նա հեռուից էլ լաւ տեղեակ էր իւր հիմնած Դրապրոցի աննախանձելի դրութեան, և այնքան մեծ էր նրա սրբուացաւանքը, որ մի քանի ամիս Թիֆլիսում մնալով ոչ մի անդամ չալցելեց Դրապրոցը, որպէս զի աչքով չտեսնէ ու աւելի չմորմոքի սիրտը։ Նա գնաց իջմիածին ս. օծումն ստանալու և 1846 թ. վերջերին նորից դարձաւ Թիֆլիս՝ այժմ արդէն գործելու, չարիքներն արմատախիլ անելու։ Թողնելով միւս խոշոր կարգադրութիւնները՝ միայն Դրապրոցի վերաբերմամբ

լիշելու ենք, որ 1847 թ. փետրվարի 5 կոնդակով նա հաստատեց մի «կօմմիսիա վերագննութեան», բաղկացած հաւատարիմ աշխարհականներից, որին յանձնեց խստութեամբ քըննել Դիպոցի դործերն ու հաշիւները և կոնսիստորի հաշուապահութիւնն ու դործունէութիւնը Դիպոցի վերաբերմամբ։ Այս կօմմիսիան մի ընդգարձակ զեկուցագիր պատրաստեց, որի մէջ իրական փաստերով դուրս են բերուած բազմաթիւ զեղծումներ և պակասութիւններ Դրպացի վերջին տասնամեայ կեանքում։ (Զեկուցումը քաղուածօրէն բերուած է ընդգարձակ պատմութեան մէջ, Հատ. Ա. եր. 397—416): Համոզուելով, որ այդ դրութեամբ անկարելի է շարունակել և որ սովորական միջոցներով չեն վերանայ բոյն դրած չարիքները՝ կոմմիսիան, կաթողիկոսի բարեհաճութեամբ, 1847 թուի խօսերայի պատճառով, փակեց Դիպոցը, արձակելով ուսուցիչներին և աշակերտներին, որպէսզի կարելի լինի կտրել յարաբերութիւնը անցեալ շրջանի Հատ, խոկապէս ասելով՝ նոր ի նորու բանալ Դիպոցը։ Այսպէս մի տարի ժամանակ, մինչև 1848-ի յունիսը, Դիպոցը նորից փակ մնաց։

Հայոց պատրիարքական Տեղի ու առաջ առաջնա-  
շաբաթ ամսային օջախ Փաթուատունը ուժ խօսու-  
թական է գուառական հարավադարձ առաջնորդութեանը

Հիմնական փոփոխութիւնը, որ արաւ Հի-  
մնադիր Կաթողիկոսը նոր բացուելիք Թաղոցի  
համար՝ Հռոմեացութիւն հաստատելն էր։ 1848  
թուի մայիսին Հիմնադիրը մի բազմամարդ ժո-  
ղով գումարեց իւր մօտ քաղաքի հասկացող և  
զիրք ունեցող մարդկանցից, և բացատրելով  
հոգևորականների ու աշխարհականների համե-  
րաշխ գործակցութեան օգուտները՝ առաջարկեց  
ժողովին՝ ընտրել իւր միջից, Թաղոցը կառա-  
վարելու համար, մի քանի հաւատարիմ անձ,  
որոնց վրայ ինքն էլ իւր կողմից կաւելացնէ-  
երկու հոգևորական, և սրանք միասին խոր-  
հրդարան կազմելով՝ իրանց վրայ կվերցնեն  
Թաղոցի կառավարութեան գործը։ Ընտրութիւնը  
կայացաւ, և 1848 թ. յունիսի 4-ի կոնդակով  
Կաթողիկոսը հաստատեց ընտրուածներին, ո-  
րոնք էին իշխ. Ի. Արդութեանց, Ս. Մատի-  
նեանց, Դ. Արզանեանց, Մ. Լոմիձեանց, Գ.  
Հախվերդեանց, Ա. Բաստամեանց, Գ. Մանդի-  
նեանց։ Իւր կողմից Կաթողիկոսը սոցա ընկեր  
էր նշանակել և հաստատել Կար. Վ. Ճահնա-  
զարեանցին և Սահակ աւագ քահանայ Սահա-  
ռունիին։ Կոնդակով Կաթողիկոսն ինքն իրան

երաշխաւոր էր ցոյց տալիս, որ պէտք լինելիք բալոր ծախսերը կհօգացուին կամ կոնսիստորի միջոցով կամ էջմիածնական կալուածների կառավարիչ Պ. Խէրոդինեանցի ձեռքով։

Նորընտիր Հոգաբարձութիւնը յունիսի 7—9-ին նիստեր կազմելով՝ ժամանակաւոր կարգադրութիւն արաւ դասելիք և ուսուցիչների մասին։ Աշակերտներին քննութեան ենթարկելով՝ նրանց բաժանեց երկու դասարանի, առաջին և երկրորդ, զետեղելով առաջինում 100 աշակերտ, իսկ երկրորդում 20։ Քիչ ժամանակից առաջին դասարանն էլ բաժանեց երկու մասի, աւելի թոյլերին զետեղելով առանձին դասարանում, որ կոչուեց պատրաստական։ Որոշեց, որ ամառնալին տօթերի ժամանակ՝ որպէսզի աշակերտները պարապ չմնան՝ դասատութիւն լինի՝ առաւոտը 7—10 և ճաշից յատոյ 4—6 ժամերին։ Ժամանակաւոր ուսուցիչ հրաւիրուեցին Սահակ քահ. Սահառունին, Աստուածատուր քահ. և Միք. Պատկանեանը։ Տեսչութեան պաշտօնը վարել ժամանակաւորապէս յանձնն առաւ ինքը Հոգաբարձութիւնը, իսկ տնտեսական կառավարութիւնը յանձնեց Կարապետ վ. Ջանազարեանցին։

Աշակերտների վերաբերմամբ Հոգաբարձութիւնը կարգադրեց, որ ընդունուին Դպրոց 9—

12 տարեկանները. ունենան միատեսակ զգեստ։  
Ընդունելութիւնը լինի տարին մի անգամ, օ-  
գոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը. իւրա-  
քանչիւր դասարանում լինի մօտաւորապէս 50  
աշակերտ։ Օգոստոսի վերջերին, Կաթողիկոսից  
Հրահանգներ ստանալուց յետոյ, Հոգաբարձու-  
թիւնը վերջնականապէս կազմակերպեց ուսուց-  
չական խումբը և դասաւանդութեան առարկա-  
ները։ Աւանդուելու էին կրօն (ուսուցիչ՝ Ա. քահ.՝  
Սահառունի), սրբազան պատմութիւն (Առ-  
քիասեանց), հայերէն (Ա-ում Յ. Ճահնազարեան,  
իսկ Բ-ում Առ. Արարատեան), ռուսերէն (Ա-ում  
Սոլ. Վարդանեան, Բ-ում Մ. Պատկանեան),  
Ֆրանսերէն (Ա-ում Մէլէր, Բ-ում Բիլօն), Ժու-  
արանութիւն (Ա-ում Ս. Արամէլիքեան, Բ-ում  
Ելախով), ընդհանուր պատմութիւն (Բէգխա-  
նով) և աշխարհագրութիւն (Կիրիլենկօ) — ընդ  
ամենը երկու դասարանի համար՝ 12 ուսուցիչ,  
շաբաթական 40 դաս, (իւրաքանչիւր դասը  
2 ժամ տևողութեամբ)։ Ուսուցիչներին ունիկ  
նշանակուած էր տարեկան 1,800 ր.։ Բացի  
սրանից՝ պատրաստական դասարանի համար  
որոշուեց Հրաւիրել երկու ուսուցիչ, իւրաքան-  
չիւրը տարեկան 150 ր. ունիկով, իսկ կարգա-  
պահութեան վրայ հօկելու համար՝ կամ ուսու-  
ցիչներից երկու հոգու յանձնել վերակացու-

թիւնը կամ դրսից մի անձ հրաւիրել, այս պաշտօնի համար յատկացնելով 200 ր.: Ուրեմն Հոգաբարձութեան այս նախահաշուով՝ Դպրոցի ուսուցչական խմբի և վերակացութեան տարեկան ամբողջ ծախսը պէտք է լինէր 2,300 ռուբլի։ Սեպտեմբերի 5-ին տեղի ունեցաւ Դպրոցի հանդիսաւոր բացումը, որի առիթով բանախօսութիւն արաւ կար. վ. Ճահնազարեանցը, և սկսուեց կանոնաւոր պարապմունք։ Հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարելով ուսումնական մասի վրայ շարունակ հսկողութիւն ունենալ գործին տեղեակ մի անձի միջոցով՝ Կաթողիկոսի հաճութեամբ 1848 թուի աշնանը տեսուչ նշանակեց կարապետ վ. Ճահնազարեանցին, որին շուտով յանձնուեց և տպարանի վերատեսչութիւնը։ Դժբախտաբար կարապետ վարդապետը —որ յետոյ բարի անուն ժառանգեց նուրբար-Ճահնազարեան ռւսումնարանի բացումով կ. Պոլսում և հայ մատենագիրների «Ճար»-ի հրատարակութեամբ Փարիզում—այստեղ չարդարացրեց չիմնադիր Կաթողիկոսի և Հոգաբարձութեան ակնկալութիւնը։ Ծուտով շատ ծանր մեղադրանքներ բարդուեցին նրա վրայ, և նա, հազիւ կէս տարի տեսչութեան պաշտօն վարելուց յետոյ, 1849-ի յունիսի 28-ին հրաժարական տուեց իւր պաշտօններից և գրե-

թէ գաղտնի Թիֆլիսից փախչելով՝ ուղևորուեց  
կ. Պոլիս:

Բայց բաւական չէ որ Թպրոցը որբացաւ  
տեսչից, Հօդաբարձութիւնն էլ շուտով ցրուեց,  
անդամների հետզհետէ հեռանալովը զանազան  
պատրուակներով։ Այս քայլքայման իսկական  
պատճառը սակայն՝ Թպրոցի համար կանոնա-  
դրութիւն կազմելու հարցն էր, որի կարիքը  
վաղուց զգացւում էր և որի մասին ներսէտ  
կաթողիկոսը յաճախ խորհրդակցութիւն էր ու-  
նեցել Հօդաբարձուների հետ։ Եւ ահա Հօդա-  
բարձուները, Թպրոցը բանալուց յետոյ, հետա-  
մուտ եղան պատրաստելու ծրագիր Թպրոցի ու-  
սումնական և տնտեսական մասերի համար։  
Խորհրդակցութեան ժամանակ սակայն նրանք  
համաձայնութեան չեկան և խմբերի բաժանուե-  
լով՝ չորս տարբեր ծրագիրներ կազմեցին՝ Հի-  
մնադրի հաստատութեանը առաջարկելու։ Արդէն  
այս բաժանումը բաւական սառնութիւն պէտք է  
ձգէր Հօդաբարձութեան անդամների մէջ։ իսկ  
երբ կաթողիկոսը առաջարկուած ծրագիրներից  
և ոչ մէկը չհաստատեց՝ աւելացաւ և անձնա-  
կան վիրաւորանքի զգացմունքը, և Հօդաբար-  
ձուները, որը տկար ձևանալով, որը անձնա-  
կան գործերը պատճառ բերելով՝ հետզհետէ յետ  
կանգնեցան Հօդաբարձական պաշտօնից։ Այս

կարճատև Հոգաբարձութիւնը Կաթողիկոսից  
բնորոշուել է՝ «Ընտրեցեալք ի միմեանց և յետս  
կացեալք ըստ իւրաքանչյիւրոցն հաճոյից» սուր  
Նկատողութեամբ։

Առաջին անգածող փորձից յետոյ՝ 1849-ին  
Հիմնադիր Կաթողիկոսը Թաղրոցի կառավարու-  
թիւնը յանձնեց ուրիշ չորս հոգաբարձուների,  
որոնք էին իշխան Յ. Արզութեան, Դ. Թա-  
մամշեան, Գ. Խէրովինեան և Գ. Մանդինեան։  
Թամամշեանի առաջարկութեամբ և Կաթողի-  
կոսի հաճութեամբ տեսուչ հրաւիրուեց Պետեր-  
բուրգից Պետրոս Սամ. Ղանշեանցը, որին բա-  
ցի ճանապարհածախսից յատկացրուեց տարեկան  
500 ր. ոռմիկ։ Ղանշեանցը ծնուած էր Թիֆ-  
լիսում 1819-ին, ուսած Թիֆլիսի գիմնազիայ-  
ում, ապա աւարտած Մոսկվայի Լազարեան  
ճեմարանում։ Այնուհետև նա յաճախել է Մոսկ-  
վայի և Պետերբուրգի համալսարանների լեզ-  
ուագիտական և իրաւաբանական ֆակուլտէտ-  
ները և 1843-ին դուրս եկել համալսարանից՝  
«իսկական ուսանողի» տիտղոսով (երկրորդ աս-  
տիճան՝ համալսարանական ուսումն աւարտող-  
ների)։ Յետոյ նա ճանապարհորդել է Եւրոպա,  
եղել է Վենետիկ, Վիեննա, Փարիզ, որտեղ  
1848-ին Սօրբօնում լսել է աստուածաբանու-  
թեան դասընթաց, և 1849-ի սկզբներում վե-

բաղարձել Պետերբուրգ, որտեղից և հրաւիրուեց Թիֆլիս։ Ստացած լինելով բազմակողմանի ուստւմ, ճանապարհորդած լինելով լրաւառքուած երկիրներում՝ զանշեանցը ունէր շատ լուսամիտ և լայն հայեացքներ ուսման և կրթութեան մասին։ Միևնոյն ժամանակ, ինչպէս երեսում է նրա գործերից և ականատեսների գրաւոր ու բերանացի բազմաթիւ վկալութիւններից՝ նա մեղմ բնաւորութեան, բայց հաստատ համոզումների տէր էր, մի գաղափարական մարդ՝ որ ոչնչի հետ չէ յօժարում փոխել իւր համոզումները։ Այսպիսի լատկութիւններով օժտուած մի անձ՝ մեծ դիւտ պէտք է լինէր Դպրոցի համար, բայց ժամանակի հանդամանքներն այնպէս բերին, որ զանշեանցը չկարողացաւ իւր ցանկացածի չափ օգտակար լինել Դպրոցին։

Նոր տեսուչը հոկտեմբերին Թիֆլիս ժամանելով և լաւ ընդունելութիւն գտնելով ամենքից՝ այցելեց Դպրոցը և սկսեց ծանօթանալ նրա ուսումնական և բարոյական դրութեան։ Ճուտով նա համոզուեց, թէ անհրաժեշտ է հիմնաւոր փոփոխութիւններ անել թէ դասաւանդութեան առարկաների և թէ տիրող կարգերի վերաբերմամբ, և որպէսզի կարողանայ առանց խոչընդոտների գլուխ բերել հարկաւոր համարած բարեփոխութիւնները՝ նա ա-

ուաջարկեց, որ Թպրոցի կառավարութեան մէջ՝  
տնտեսական և ուսումնական մասերը միմեան-  
ցից բաժանուին և վերջինը անպայման իւր  
տնօրէնութեան յանձնուի։ Հոգաբարձութիւնը  
դժկամակեցաւ այս առաջարկութեան, կաթո-  
ղիկոսն էլ համամիտ էր Հոգաբարձութեան,  
որովհետև դժուարանում էր «միայնակ նորան-  
յանձնել այնպիսի ուսումնարանը, բազմաթիւ  
մանուկներով, ուսումնարանական այնպիսի հան-  
դամանքներում»։ Որչափ էլ ծերունի Հայրա-  
պետը աշխատեց լորդորել զանշեանցին, որ յետ  
կանգնի իւր առաջարկած պայմանից և գործէ  
խորհրդակցութեամբ հոգաբարձուների հետ, որ-  
չափ էլ խոստումներ արաւ նորան, 500 րուբ-  
լիի փոխարէն մինչև 1,000 ր. ոռնիկ առա-  
ջարկելով։ — Հնար չեղաւ. զանշեանցը մօտ 50  
օր տեսչութիւն անելուց յետոյ՝ թողեց Թպրոցը  
և վերադարձաւ Պետերբուրգ, անջնջելի քաղցր  
լիշտակ թողնելով աշակերտների սրտերում  
և նոյն-իսկ յարգանք ներշնչելով Հայրապե-  
տին, որ թէ այս դէպքում և թէ յետոյ, իւր  
բազմաթիւ գրադրութիւնների մէջ՝ միշտ յար-  
դանքով ու պատուով լիշտում է նրա անունը,  
ոչ մի արատ, կամ պակասութիւն չգտնելով  
նրա մէջ։ Իւր կարճ տեսչութեան օրերում զան-  
շեանցը, ինչպէս տեղեկանում ենք կաթողիկոսի

մի մասնաւոր կոնդակից առ բժշկ. Ս. Տէր-  
Ղուկասեանց՝ «փոխեց առաջին ուսուցիչներին  
և դասաւանդութեան եղանակը, նոր ուսուցիչ-  
ներ նշանակեց, միասին դասասացութիւնները  
(?) պակասեցնելով, որպէսզի աշակերտներին  
ծանրաբեռնութիւն ըլինի, ուսուցիչներից իւ-  
րաքանչյւրին վարձ նշանակեց (ըստ իւր հայե-  
ցողութեան). և մենք, —գրում է Հայրապետը, —  
բոլոր նրա կարգադրութիւններն ընդունեցինք,  
առանց ամենեւին մեր կողմից խօսք մէջ խառ-  
նելու. միայն առաջարկեցինք, որ Պալրոցի կա-  
ռավարութեան մէջ իրան խորհրդակից և վե-  
րատեսուչ ունենայ չորս հոգաբարձուներին. բայց  
նա չհամաձայնեց և բոլորովին թողեց Պալրոցի  
կառավարութիւնն ու տեսչական պաշտօնը»:

Ճանշեանցի Հեռանալուց յատոյ, 1850 թ.  
լունվարդից, Պալրոցի տեսչութիւնը ժամանակա-  
տրապէս յանձնուեց Գաբրիէլ քահանայ Պատ-  
կանեանին, որի ընտրութեանը հազիւ հազ զի-  
ջաւ Հայրապետը, յարգելով հոգաբարձու Խէրո-  
դինեանի միջնորդութիւնը, ոլովկետեւ ինքը  
շատ առիթներ էր ունեցել դժգոհ լինելու նրա-  
նից: Պատկանեանը այս պաշտօնը վարեց մին-  
չև 1851 թ. ապրիլ ամիսը, երբ նորը նորի երրեակ հոգաբարձութեանը հրաժարական տա-  
լով ուղևորուեց Պետերբուրգ: Նրա գործունէու-

թեան մասին իրրև տեսուչ՝ տեղեկութիւններ պակասում են. այսքանը ճիշտ է, որ նրա օրով բացուեց նաև երրորդ դասարան և որ աշակերտների թիւը հասաւ մինչեւ 300-ի:

Նոյն 1850 թուին տեղի ունեցաւ Գպրոցի պատմութեան մէջ նշանակութիւն ունեցող մի հիմնարկութիւն, այն է գիշերօթիկ որդեզրութիւնը, որ այն ժամանակ կոչում էր պէնսիոն: Գիշերօթիկ աշակերտները (որոնք կարող էին լինել թոշակաւոր, կիսաթոշակ կամ ձրի—որդեզիր Գպրոցի) ապրում էին Գպրոցի շինութեան մէջ, այնտեղ սնունդ ստանում և քնում և այնտեղից ստանում առհասարակ բոլոր կենսական և ուսումնական պիտուքները: 1850 թուին, ինչպէս երևում է Կաթողիկոսի վերոլիշեալ մասնաւոր կանգակից՝ գիշերօթիկների թիւն էր 23, և չիմնադիրը նպատակ ունէր նրանց թիւը հասցնել 30-ի: Թէ իսկապէս երբ և ում խօրհրդով սահմանուեց ու բացուեց գիշերօթութիւնը՝ յայտնի չէ. առաջին անգամ պէնսիօն անունը լիշտում է ներսէս կաթողիկոսի կոնդակում առ հոգաբարձու Պ. Խէրոդինեան, գրուած 1850 թ. լուլիսի 15-ին, և այնուհետև յաճախ լիշտակում է: Ինչպէս բոլոր գործերում այնպէս էլ գիշերօթիկների վերաբերութեամբ մեծ հոգացողութիւն էր ցոյց

տալիս բարերար Հիմնագիրը, շարունակ պատկւիրելով, որ արժանաւոր հսկողութիւն լինի նրանց ուսման, համեստ կացութեան, վարք ու բարքի և կերակուրների վայելուց պատրաստութեան վրայ:

Վե ազգային մատուցած չեն մատենամուր առողջութեան մատուցած ՓԱ. մաս մայն այլոցին մաս ով նաև այլու բառներու մաս ով այլու

Չորս հօգաբարձուների ժամանակաւոր կառավարութիւնից լիտոյ՝ Դավրոցի կեանքում սկըստում է, նոր շրջան 1851 թուից, Երրեակ Հոգաբարձութեան հաստատութեամբ:

Երրեակ Հօգաբարձութիւնը հաստատուեց 1851 թուի մարտի 8-ին, Ներսէս Կաթողիկոսի երեք, միւսնոյն բօվանդակութեամբ, կոնդակներով №№ 68, 69 և 70: Նորընտիր Հօգաբարձուներն էին Դաւ. Թամամշեան, Դաւ. Խէրոդինեան և Գէորգ. Մանդինեան, Կաթողիկոսի մտերիմ ծանօթներն ու հաւատարիմները, որոնց նա իւր բնտրութեամբ հաստատելով հօգաբարձական պաշտօնի մէջ՝ տուեց Արքօգոր իրաւունքներ Դավրոցի տնտեսական և ուսումնական մասների վերաբերմամբ: «Տամ ձեզ, — ասուած է այդ կոնդակներում, — զիմ կատարեալ կարթութիւն» միսխանակ իմ լինել իրեւ զիմ վերատեսուց և Հօգաբարձուց Դավրոցում կատարուե-

լիք բոլոր գործառնութիւնների, ինչպէս են  
ուսուցիչների և աշակերտների պարտականու-  
թիւնների ճշտիւ կատարելու, որդեգիրների նիստ-  
ու կացի ու սնունդի, մոմավաճառութեան, Թը-  
պրոցի տպարանի, ուխտատեղիների և դպրոցա-  
պատկան կալուածների վրայ։ Դպրոցի նիւթա-  
կան միջոցները ընդ միշտ ապահովելու նպա-  
տակով՝ Հիմնադիր Կաթողիկոսը նոյն կոնդակ-  
ներով նրա օգտին յատկացրեց Թիֆլիսի թեմի  
եկեղեցական մոմավաճառութեան և ուխտա-  
տեղիների արդիւնքները, բացի տպարանի և  
կալուածների արդիւնքներից, որոնք առաջ էլ  
պատկանում էին Դպրոցին։

Երբ 1853 թուի օգոստոսին Դաւ. Թա-  
մամշեանը մեռաւ՝ Կաթողիկոսը սեպտեմբերի  
8-ին № 343 կոնդակով նրա փոխարէն հոգա-  
բարձու ընտրեց Աղեքս. Թավլիրեանին, որ Եր-  
բակ Հոգաբարձութեան գործունեալ անդամն  
եղաւ։

Երբեակ Հոգաբարձութիւնը իւր գոյութիւնը  
պահպանեց 10 տարուց աւելի և լուծուեց 1861  
թուի նոյեմբերի 19-ին, երբ Մատթէոս Կա-  
թողիկոսի № 466 կոնդակով հաստատուեց Ա-  
ռաջին Հոգաբարձութիւնը, որ ընտրուեց և  
գործեց համաձայն նոյն Կաթողիկոսից հաստա-  
տուած Դպրոցի նոր կանոնադրութեան։

Երբեակ Հոգաբարձութիւնը պաշտօնի մէջ  
մտնելով՝ իբրև Դպրոցի դրամական գոլք ստա-  
ցաւ 55 ը. 47 կոպ. փող։ Բայց լոյս զնելով  
կոնդակում լիշուած եկամուտների աղբիւրների  
և մանաւանդ Հիմնադիր Կաթողիկոսի հոգացո-  
ղութեան վրայ՝ ջերմեռանդութեամբ գործի  
ձեռնարկեց։ Պէտք էր ամեն ինչ նոր ստեղծել,  
կանոններ սահմանել տնտեսական կառավարու-  
թեան, դպրոցական կարգերի, ուսման առար-  
կաների ևն վերաբերմամբ։ Հոգաբարձութիւնը  
անմիջապէս ձեռնամուխ եղաւ մանրամասն տե-  
ղեկութիւններ հաւաքելու, թէ ինչ տեղերում  
ինչ ուստատեղիններ կան, որոնց ձեռքով են  
կառավարում, ինչ եկամուտ են բերում. տպա-  
րանը ինչ դրութեան մէջ է, որչափ արդիւնք  
ունի։ Ստացած տեղեկութիւնների համեմատ՝  
նպատակայարմար կարգադրութիւններ արաւ,  
անհաւատարիմ պաշտօնեաների փոխանակ հա-  
ւատարիմ անձինք նշանակեց։ Նոյնպէս մոմա-  
վաճառութեան համար Կաթողիկոսից հաստատ-  
ուած Աագ Պահարանի վրայ օրինատր հսկո-  
ղութիւն նշանակեց։ Սահմանեց մուտքի և ելքի  
համար առանձին ժապավինեալ մատեաններ,  
իւրաքանչիւրը յատովկ պաշտօնեալի յանձնելով,  
որիւր տեսչութեան յանձնուած մասի արդիւնք-  
ները և ծախսերը նշանակէ։ Գործավարութեան

Նպատակայարմար կարդեր սահմանեց, որի շը-  
նորհիւ 1851 թուից սկսեալ Թաղրոցի գործա-  
վարութիւնը կանոնաւրութիւն ստացաւ և իւր  
անփական արխիվն ունի, որտեղից կարելի է  
քաղել Թաղրոցի պատմութեան պաշտօնական  
նիւթերը: Նկատելով որ Վրաստանում, Զէրքէ-  
գահայոց և Ռւտէացոց մէջ Հայերէն լեզուն բո-  
լորովին անհետացել է և նոյն-իսկ եկեղեցինե-  
րում տեղական լեզուներով են խօսում քարող-  
ները՝ չոգաբարձութիւնը հոգ տարաւ ազգային  
լեզուն արծարծելու նրանց մէջ, որի համար լա-  
ւագոյն միջոց համարեց՝ կրթուած հայախօս  
քահանայացուներ պատրաստել նրանց համար:  
Այս նպատակով նա աւելացրեց Թաղրոցի որդե-  
գիրների թիվը, 30-ից մինչև 60-ի հասցնե-  
լով, որոնք Թաղրոց մտնելիս դրաւոր խօստում  
էին տալիս՝ աւարտելուց յատոյ քահանալ ձեռ-  
նադրուել, (հակառակ դէպքում՝ պարտաւոր-  
ում էին վճարել իրանց վրայ Թաղրոցի ծախ-  
ած գումարը): Այս տասնամեակում աւարտած  
85 որդեգիրներից 37-ը յատկապէս ըերուած  
էին այս օտարախօս հայերի միջից, և նրանց  
մեծ մասը հետզհետէ քահանայ դարձան և  
փոքր ի շատէ նպաստեցին հայերէն լեզուի ար-  
ծարծուելուն այդ կողմերում: Որդեգիրների հա-  
մար չոգաբարձութիւնը հիմնեց հիւանդանոց,

որտեղ բոլոր այս տասն տարուայ ընթացքում  
բժշկական օգնութիւն ձրի մատակարարում էր  
բժ. Յար. Յովկաննիսեանց:

Հոգաբարձութիւնը մեծ հոգ տարաւ Պը-  
պրոցի արդիւնքներն աւելացնելու և դպրոցա-  
պատկան կայքերը նորոգելու կամ նորից շինե-  
լու վրայ: Նրա ժամանակ բազմաթիւ, մեծ և  
փոքր, նուիրատուութիւններ եղան յօգուտ Պը-  
պրոցին, մասամբ՝ յատուկ որդեգիրներ պահեյու  
համար և մասամբ Հոգաբարձութեան լիակա-  
տար տրամադրութեան տակ: Այստեղ անհնար-  
է չիշել այդ նուիրատուութիւնները. բաւական  
է ասել, որ այս Հոգաբարձութեան ժամանակ  
և սրա ջանքով կայացաւ ու գործադրուեց Աւ-  
Փիրուեանի մեծագումար կտակը, որ այն ժա-  
մանակ տարին 3000 ր. եկամուտ էր բերում,  
իսկ ներկայումս՝ մինչև 15,800 ր. տարեկան.  
Նրանց յորդորանքով գրուեց Յովս. Եֆէնդեանի  
կտակը, որ գործադրուեց կտակողի մահից յետոյ,  
1862-ին, որից Պայրոցին հասաւ 62,000 ր.  
գումար՝ յատկացրած գլխաւորապէս որդեգիրներ  
պահելու և որդեգիրներից ընտրեալներին ար-  
տասահմանում բարձրագոյն ուսում տալու: Ի-  
րանք հոգաբարձուներն էլ զանազան առիթ-  
ներով նուիրաբերութիւններ էին անում Պայրո-  
ցին, անշարժ կայքերով, դրամով, գրքերով և ն:

Անշարժ կայքերի նորոգութիւնների և նոր  
շինութիւնների մէջ լիշտատակելու է.—Նորից,  
առելի վայելուչ և ընդարձակ, շինուեց Թելէթի  
Ս. Գէորգ ուխտատեղի եկեղեցին, (որ բոլոր ուխ-  
տատեղիններից աւելի արդիւնք էր բերում Դը-  
պրոցին), և մօտը ուխտաւորների համար շի-  
նուեցին երեք եռալյարկ բնակարաններ 52 սե-  
նեակներով։ Նորից շինուեց Կրծանիսի Ֆիրա-  
նաւոր ուխտատեղի եկեղեցին (նոյնպէս արդիւ-  
նաւոր)։ Մցէւթում շինուեց Հայոց եկեղեցի,  
որի շինութեան նախաձեռնողը հանդիսացաւ  
Հոգաբարձութիւնը, Դպրոցի միջոցներից տակով  
1,000 ր. և հաւաքելով ժողովրդից 2,600 ր.։  
Սակայն յետով, Հոգաբարձութեան յորդորանքով,  
Յովս. Էֆէնդեանը այս գումարները վերադար-  
ձրեց Դպրոցին և ինքը շարունակեց եկեղեցու  
շինութիւնը, որ արժեց մօտ 14,000 ր.։ Գըն-  
ուեց փոշտավի կոչուած հին տունը (1854-ի  
վերջերում, 9,424 ր.), որը Հոգաբարձութիւնը  
նորոգեց և աւելացրեց արևելեան, արևմտեան  
և հիսխալին կողմի կրկնայարկ սենեակները։  
Սա այն շինութիւնն է, որի մէջ փոխադրուեց  
Դպրոցը 1859 թուի յունուարի 13-ին և շա-  
րունակում է մնալ մինչև ալիմ։ Իսկ հին գը-  
պրոցը (Ներսիսաշէն) վերանորոգելով՝ այնտեղ  
զետեղեց տպարանը և մի քանի սենեակները

վարձով տուեց: Հին դպրոցի հանդէպ Ներսէսի  
շինել տուած խանութները (քարվանսարայ կո-  
չուած) արդէն հնացած լինելով՝ նա փակել էր  
տուել, որ նորից շինէ. բայց սեփականութեան  
վէճեր ծագելով՝ երեք տարի մնացել էին ան-  
շէն, աւերակ դրութեան մէջ: Կաթողիկոսի  
վախճանելուց լետոյ՝ Սարդիս արքեպիսկոպոսի  
ջանքով վէճերը վերջացան, և Հոգաբարձու-  
թիւնը, նոյն արքեպիսկոպոսի յորդորանքով,  
ձեռնամուխ եղաւ նրանց շինութեան և տեղի  
կէս տարածութեան վրայ շինեց 21 երկյար-  
կանի խանութներ: Միւս կէսը Հոգաբարձու-  
թիւնը յատկացրել էր նոր դպրոցական շէնք  
կառուցանելու, որովհետև նկատել էր, փօս-  
տայի տունը իրըև դպրոցական շէնք՝ անյար-  
մարութիւններ ունի: Այս շինութեան համար  
արդէն զծագրել և հաստատել էր տուել պլան,  
բայց գործը խափանուեց: Հոգաբարձութեան  
դուրս գալովը պաշտօնից: Բոլոր ալս շինու-  
թիւնների վրայ Հոգաբարձութիւնը ծախսեց,  
ինչպէս երեսում է նրա տպած հաշիւներից,  
մոտ 97,000 ը.:

Այս գործունէութեան շնորհիւ Թպրոցի  
ել և մուտքը Երրեակ Հոգաբարձութեան տասն-  
ամեայ կառավարութեան ժամանակ խիստ մեծ  
առաջադիմութիւն արաւ: Գրեթէ ոչնչով սկսե-

լով՝ չողաբարձութիւնը, շնորհիւ երջանկալի-  
շատակ չիմնադրի ցուց տուսծ. աղբիւրներին  
(մոմավաճառութիւն, ուխտատեղիք), առատ  
նուէրներին, մասնաւոր բարերարների նուիրա-  
բերութիւններին և իւր սեփական ջանքերին՝  
իւր պաշտօնավարութեան տասնամեակում ընդ-  
հանուր մուտք ունեցաւ 251,649 ր., և ծախք  
նոյնքան ժամանակամիջոցում՝ 207,375 ր.,  
այսպէս որ բացի աւելացրած ու նորոգած  
կալքերից, որոնք այն ժամանակուսուց գնահա-  
տութեամբ արժէին աւելի քան երկու հարիւր  
հազար ըուբլի՝ թողեց մի հաշուէկշիռ, որի  
մուտքը ելքից գերազանցում էր աւելի քան  
44,000 ըուբլի գումարով։

Մուտքի գլխաւոր աղբիւրներից այս տասն-  
ամեակում ստացուած է. ուխտատեղիներից (կլոր  
թուերով) մոտ 40,000 ր., մոմավաճառութիւ-  
նից՝ 79,000 ր., կալուածներից՝ 12,000 ր.,  
տպարանից և գրավաճառութիւնից՝ 3,600 ր.,  
նուէրներից (դրամով) 71,000 ր., որից մոտ  
41,000 ր. նուիրել է ինքը չիմնադիր կա-  
թողիկոսը։

Ելքի գլխաւոր լողուածներն եղել են այս  
տասնամեակում. ոռնիկ պաշտօնատար ան-  
ձանց մոտ 37,000 ր., որդեգիրների ապրուստ՝  
43,600 ր., շինութիւններ և նորոգութիւն-

ներ՝ 97,000 ը., տպարան և գրքերի տպագրութիւն՝ 4,500 ը.: Էջմիածին ուղարկուած է Նելսէս. Կաթողիկոսի նուիրած գումարներից՝ 10,000 ը.:

Կարելի է ասել՝ այս տաճնամեակը տնտեսուկան կողմից Գլորոցի շինարարութեան շըրջանն է կազմում, երբ նրա տնտեսական ապահովութիւնը հաստատուն հիմքերի վրայ է դըրւում, որ այնուհետև հետզհետէ սկսում է բարգաւաճել, անշարժ կալքերի եկամուտների հետզհետէ աւելանալով և նորանոր նուիրաբերութիւններով։

Գլորոցի ուսումնական մասը ոչ նուազ արդիւնաւոր եղաւ։ Հօդաբարձութեան պաշտօնի մտած տարին Գլորոցն ունէր մի պատրաստական և երեք դասարան, որոնց մէջ, առանց որոշ ծրագրի, սովորում էին 167 աշակերտ, 14 ուսուցչով։ Այս ժամանակ Գլորոցում աւանդում էին քրիստոնէական վարդապետութիւն, հայոց լեզու, ուսուաց լեզու, տաճկաց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, եկեղեցական երաժշտութիւն, նկարչութիւն, Բայց բացակայում էին նոյն-իսկ տարրական կանոններ, որոնցով ուսուցիչները և աշակերտները ղեկավարուէին։ Ամեն մի դասարան ամեն մի առարկայից բաժաննում էր մի քանի խմբերի։

այնպէս որ, օրինակ, պատրաստականում կար խումբ՝ որ նոր էր սկսում ալբուբենը, մի ուրիշ խումբ՝ որ կարդում էր հեղեղով, մի երրորդ խումբ՝ որ սովորում էր վարժ ընթերցանութիւն («սաղմոսելով»). սրանց մէջ էլ մի քանիսը Աւետարանը նոր էին սկսում, այն-ինչ միւսները մի քանի տասնեակ գլուխներ արդէն կարդացել էին և սովորում էին վայելչագրութիւն։ Աշակերտ ընդունելու և արձակելու մասին կանոններ չկային. հարցաքննութեան համար ոչ ժամանակ էր որոշուած և ոչ կարգեր. արձակուրդ չկար. տօները նշանակուած չէին, այնպէս որ մի ուսուցիչ այս ինչ օրը տօն համարելով՝ իւր դասարանը արձակում էր, այն-ինչ միւսը պարապում էր։ Ֆեծը իրբե դաստիարակութեան և ծովերին ու անընդունակներին առաջադէմ դարձնելու միջոց՝ ճանաչուած ու որբագործուած էր։ Ի՞նչ առարկաներ պէտք է աւանդուէին Դպրոցում և ո՞ր դասարաններում—սահմանուած չէր. ումից էր կախուած այս կամ այն առարկան մտցնելը կամ դադարեցնելը—յայտնի չէր. բոլորը կախուած էր ժամանակի բերմունքից, յարմար ուսուցիչ ճարելուց կամ ճճարելուց ևն։

Այս անկերպարան դրութեան մէջ էր Գլ-պրոցը՝ երբ 1851 թուի մարտին Երբեակ չո-

զարարձութիւնը պաշտօնի մտաւ. իսկ 10) տարի՝  
յետոյ, երբ նա դուրս եկաւ պաշտօնից՝ Դպրոցն  
արդէն մի կազմակերպուած հիմնարկութիւն էր,  
որոշ կարգ ու կանոններով՝ որոնք որոշում էին  
Հոգաբարձութեան, տեսչի և ուսուցիչների իրա-  
ւունքներն ու պարտաւորութիւնները, դասա-  
ւանդելի առարկաները ըստ իւրաքանչիւր դա-  
սարանի, քննութիւնները, արձակուրդներն ու  
տօնները; Հաստատուեցին բարեկարգութեան կա-  
նոններ՝ աշակերտների նիստ ու կացին վերա-  
բերեալ, ուսուցիչների հերթակալութիւններ,  
վերակացուներ: Ծեծը, իբրև դաստիարակու-  
թեան օրինաւոր միջոց՝ խափանուեց: Կազմա-  
կերպուեց գրադարան, որ աշակերտներին մա-  
տակարարում էր ընթերցանութեան գրքեր:  
Այս տասնամեակի վերջերում Դպրոցում աւելա-  
ցաւ մի բարձր դասարան, չորրորդը. իսկ աշա-  
կերտների թիւը հասաւ 210-ի, 14 ուսուցիչ-  
ներով: Այս ժամանակ Դպրոցում աւանդում  
էին—քրիստոնէական վարդապետութիւն, բա-  
ցատրութիւն հին և նոր կտակարանի, հայոց  
լեզու և մատենագրութիւն, ուսաց լեզու,  
գաղղիացոց լեզու, թուարանութիւն, ալգերա,  
երկրաչափութիւն, ընդհանուր և հայոց պատ-  
մութիւն, աշխարհագրութիւն, վայելչագրու-  
թիւն: Այս տասնամեակում, բացի իւրաքան-

չիւր տարի առաջնին հարցաքննութիւններից՝  
եղել են և չորս անգամ հրապարակական հար-  
ցաքննութիւններ։ Այս ժամանակամիջոցում  
Դալրոցը բաց է թողել 124 ուսումնաւարտ սա-  
ներ, որոնցից 38 երթեեկ, իսկ 86-ը որդեգիր։

**ԺԲ.**

Բայց աւելի քան այս ներքին դարձացու-  
մը՝ հետաքրքրական է այս տասնամեալ շրջանը  
իբրև անցողական շրջան, որի մէջ երկու ուղ-  
ղութիւններ, հին և նոր, միմեանց ընդհար-  
ուեցին և պայքար մղեցին։ Սա մի երկունքի  
շրջան էր, որտեղ մանկավարժական նոր սկզբ-  
րունքներ, առարկաների լայն ծրագիր, իրա-  
ւունքների և պարտաւորութիւնների սահմա-  
նադրութիւն՝ առաջին անգամ երեան եկան՝  
հին Դալրոցի ու նորան յատուկ կարգերի տեղը  
բռնելու։ Այս բանը ի հարկէ դիւրաւ չյաջող-  
ուեց, և հինը առանց մաքառելու տեղի չտուեց։  
Հայեացքների ընդհարումների ժամանակ Դր-  
պրոցը յաճախ տատանման էր ենթարկւում,  
ալէկոծւում, երբեմն առանց ղեկավարի մնա-  
լով՝ աջ և ձախ շեղւում ուղիղ նպատակից։  
Բայց վերջ ի վերջու յուզմունքները դադարեցին,  
մտքերը հանդարտուեցին, և Դալրոցը դտաւ իւր

անշեղ ճանապարհը՝ նոր ժամանակներին համապատասխան ծրագրով և ուղղութեամբ, ինչպէս բնական էր սպասել:

Հին Դպրոցի պաշտպանն էր Ներսէս Կամողիկոսը, նորինը՝ նրա բարեհաճութեամբ Դըպրոցի տեսուչ հրաւիրուած Պետրոս Ղանշեանցը: Ներսէսը անցեալ դարի վերջերում ուսել էր Էջմիածնի ժառանգաւորաց դպրանոցում, տեսել և ընտելացել էր խալիքայական դպրոցների կարգերին և ուսմանը. բնական է ուրեմն, որ նրա մտքում կազմակերպուած դպրոցը մի որոշ չափով կը էր այս հին խալիքայական դպրոցի կնիքը: Վերը մենք լիշեցինք, որ Ներսէսը դեռ 1807 թուին մի ծրագիր էր կազմել Նոր-Խախիջևանում հիմնելիք ուսումնարանի համար: Ըստ այս ծրագրի<sup>\*)</sup> նրա մտադրած ուսումնարանը կատարեալ խալիքայական դպրանոց պէտք է լինէր, փոքր ինչ բարեփոխուած ձեռվէ: Այնուհետև տասնեակ տարիների ընթացքում աւելի կատարելագործուեց դպրոցի տիպը նրա մըտքում, բայց նորան միշտ հիմք էր ծառայում հին դպրոցի տիպը: Ուստի բնաւ զարմանալի չէ, որ Ներսէս Կամողիկոսը պաշտպան էր հին դպրոցի տիպին. զարմանալին այն է, թէ

<sup>\*)</sup> Մրագիրը ամբողջապէս բերուած է Ա. Երիցեանցի ընդարձակ Պատմութեան մէջ, եր. 11—23.

որչափ դիւրազգած էր նա դէպի ժամանակի պահանջները, որ կարողացաւ քայլ առ քայլ մօտենալ և հաշտուել նոր դպրոցական կարգերին, այն էլ իւր խորին ծերութեան շրջանում, երբ սովորութիւնները և հայեացքները խորապէս արմատանում են մարդու մէջ և այլ ևս դիւրաւ չեն փոփոխուում: Ընդհակառակը, զանշեանցը մանկութիւնից ուսել և սնուել էր լուսաւորուած շրջաններում և բարեկարգ դպրոցներում, յաճախել էր բազմաթիւ բարձրագոյն կրթական հիմնարկութիւններ, ճանապարհորդել և ապրել էր Եւրոպայի շատ նշանաւոր քաղաքներում, վերջապէս՝ աւելի նոր ժամանակի սերունդ էր, կէո դարով կրտսեր ներսէս կաթողիկոսից: Զանշեանցը, ուրեմն, բնականաբար հետևող պէտք է լինէր դպրոցական նոր ուղղութեան թէ՛ ուսման ծրագրի և թէ ներքին կարգերի վերաբերմամբ, և այսպիսով պէտք է ախոյեան հանդիսանար չիմնադրի հայեացքներին դպրոցական դործում: Բայց միւնոյն ժամանակ այս երկու անձնաւորութիւնները հոգով չափ սիրում էին Թալլոցը և նուիրուած էին նրա բարեկառութեան ու առաջադիմութեան. երկուսն էլ անկեղծ էին իրանց մտքերն արտակարգում, երկուսն էլ փոխադարձաբար յարգում էին միմեանց, մանաւանդ զանշեանցը,

որ պաշտում էր մեծագործ Հիմնադրի յիշա-  
տակն ու կամքը: Ներսէան էլ իւր կողմից այն-  
քան յարգում ու գնահատում էր զանշեանցին,  
որ չնայելով անստորագիր, նաև ստորագրու-  
թիւն կրող բազմաթիւ զրպարտութիւններին ու  
բամբասանքներին նրա կրօնական ուղղութեան  
մասին, չնայելով նրա դիմադրելուն իւր ծրա-  
գլրներին՝ այնու ամենայնիւ չէր սիրտ անում  
հեռացնելու նրան իւր Պայրոցից:

Մինչ ներսէս կենդանի էր՝ պայքարը հին  
և նոր ուղղութիւնների մէջ խուլ կերպով էր  
մղւում և օրինաւորութեան սահմանից դուրս չէր  
գալիս: Ղանշեանցի առաջարկած ծրագիրներին  
կամ կարգերին չէր հաճում կաթողիկոսը և իւր  
կողմից հրահանգ և ծրագիր էր տալիս. Ղան-  
շեանցն էլ սոցա չհամաձայնելով՝ հրաժարում  
էր տեսչական պարտաւորութիւնից: Երբեակ հո-  
գաբարձութիւնը երկուսի մէջ հանդիսանում էր  
միջնորդ և իւր յորդորներով ու աղերսներով  
աշխատում էր հաշտութեան բերել նրանց՝ եր-  
կուստեղ զիջումների հիման վրայ: Բայց երբ  
վախճանեցաւ Հիմնադիր կաթողիկոսը՝ դրու-  
թիւնը փոխուեց: Նրա ուղղութեան շարունա-  
կող հանդիսացաւ թեմիս առաջնորդ Պարգիս  
արքեպիսկոպոս Զալալեանցը, որ հանդուցեալ  
կաթողիկոսի չափ համբերողութեան ոգի չունէր:

Ճուտով կրօնական փափով հողի վրայ տարածալնութիւն ծագեց նրա և Պ. Ճանշեանցի մէջ, որ Դալրոցում շարունակ աւանդում էր կրօնի դաս՝ իւր տետրակներով։ Տարածալնութիւնը հետզհետէ աճելով՝ Ճանշեանցը 1857-ի հոկտեմբերին հրաժարուեց տեսչութիւնից և հեռացաւ Դալրոցից։ Նրա յարգողները և երիտասարդական խումբը, որ ներշնչուած էր չիւսիսափայլի մտքերով և հետեւում էր Ստ. Նազարեանցին ու Միք. Նալբանդեանցին, համախմբուելով կազմեցին առաջադիմական կուսակցութիւն և կուիւ յալտարարեցին Սարգիս արքեպիսկոպոսի և Երրեակ Հոգաբարձութեան դէմ, որ մտերմացել էր առաջնորդի հետ։ Այս կուիւր շատ անգամ օրինականութեան սահմանից անցնում էր, զաղափարականից իջնում էր անձնական վիրաւորանքների և մեղադրութիւնների... Նա վերջացաւ 1861 թուին նրանով, որ Երրեակ Հոգաբարձութիւնը և Սարգիս Ձալալեանցը պաշտօններից հեռացան. առաջնորդ նշանակուեց Մակար արքեպիսկոպոսը և Հոգաբարձու հաստատուեցին ժողովրդից ընտրուած 12 անձինք (= Առաջին Հոգաբարձութիւն), որոնք սկսեցին Դալրոցը կառավարել նոր կանոնադրութեամբ, որը մշակել էին իրանք և հաստատել էր Մատթէոս կաթողիկոսը։

ԺԳ.

Երբեակ Հոգաբարձութիւնը երբ պաշտօնի մտաւ Դպրոցի տեսուչն էր Գաբր. քահ. Պատկանեան. սակայն սա շուտով հրաժարուեց, և Հոգաբարձութիւնը ժամանակաւրապէս տեսուչ լնտրեց Դպրոցի երկու աւագ վարժապետներին — Յ. Կարինեանցին և Միք. Պատկանեանին, (1851, ապրիլին), որոնք համաձայնեցան առանց ռոճկի վարել այս պաշտօնը: Սրանք խաղաղ կերպով կառավարեցին Դպրոցը և պատրաստեցին կանոնադրութիւն, որով փոքր իշտէ մտցնառմ էին Դպրոցում կարգեր, ուսուցման եղանակ և առարկաների ծրագիր: Սակայն Հոգաբարձուները ի նկատի ունէին իրեւ հաստատ տեսուչ հրաւիրելու Պետր. Զանշեանցին. բայց կասկածելով, մի գուցէ կաթողիկոսը դժկամակի իրանց այս առաջարկութեան՝ դիմեցին կաթողիկոսի մտերիմ քժ. Կար. Ասսակեանցին և նրա միջոցով հարցը կաթողիկոսի կամքը: Վասակեանցը յայտնեց Հոգաբարձուներին, թէ Հայրապետը համաձայն է զանշեանցին հրաւիրելու, միայն այն պայմանով, որ նա ամեն ինչ գործէ Հոգաբարձութեան հետ խորհրդակցելով և ոչ թէ առա-

ջուայ նման մէն-մենակ: Կաթողիկոսի այս հա-  
ճութիւնն ու պայմանը չոգաբարձութիւնը հա-  
ղորդեց զանշեանցին Պետերբուրգ. բայց նա հրա-  
ժարւում էր այսպիսի պայմաններում տեսչական  
պաշտօնն ընդունել: Մի քանի ամիս գործը ձբգ-  
ձգուելուց յետոյ՝ չոգաբարձութիւնը վերջապէս  
առանձին գրութեամբ նրան ապահովացրեց, թէ  
իրանց կողմից նա ամենասիրալիք ընդունելու-  
թիւն կդառնէ և կարող կլինի ազատ տնօրինել՝  
ինչպէս կամենում է, որովհետև չոգաբարձու-  
թիւնը հաւատում է նորան: Այս խոստումն  
ստանալուց յետոյ միայն՝ զանշեանցը Թիֆլիս  
հկաւ և տեսչական պաշտօնն ստանձնեց, որի  
մէջ հաստատուեց քիչ յիտոյ, 1852 թ. ապրի-  
լի 26-ին, № 168 կոնդակով:

Նոր տեսուչը, ծանօթանալով Դպրոցի ու-  
սումնական դրութեան հետ՝ կարեոր փոփոխու-  
թիւններ մտցրեց դասարանների բաժանման,  
առարկաների դասաւանդութեան և դասերի բաշ-  
իման մէջ. մի քանի ուսուցիչ հեռացրեց և  
նորերին հրաւիրեց, նոր ռաճիկներ որոշեց՝ ա-  
ռաջուանից աւելի, վերակացուներ նշանակեց  
ևն: չոգաբարձութիւնը սիրով յանձն առաւ  
այս փոփոխութիւնները, և Դպրոցը խաղաղ  
կերպով շարունակեց իւր ընթացքը: Ցաջորդ  
(1853) տարուայ մարտին Դպրոցում հանդի-

սաւոր ակտ կատարուեց Հիմնադիր Կաթողիկոսի և բազմաթիւ հրաւիրուած այցելուների ներկայութեամբ, և աշակերտների առաջադիմութիւնը մեծ գոհութիւն պատճառեց հանդիսականներին։ Ակտի ժամանակ կարդացուած տեղեկագրից երևում է, որ Դպրոցն այդ տարին տւնեցել է մի պատրաստական և երեք դասարան, 376 աշակերտով, (թէպէտ ըստ քննական ցուցակների՝ աշակերտների թիւը շատ պակաս է այս թուից): Արանցից 28 եղել են Դպրոցի որդեգիր, 14 թոշակաւոր, իսկ 334 ձըրիավարժ երթևեկներ։ Ուսուցիչների թիւը եղել է 10, որոնք աւանդել են սրբազն պատմութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, հայոց և ուսաց լեզու և գրականութիւն, եկեղեցական պատմութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, բնագիտութիւն, վալելչագրութիւն և եկեղեցական երաժշտութիւն։ (Ղանշեանցը մտադիր էր յաջորդ՝ Գ. դասարանում մտցնել նաև ընդհանուր, ուսաց և հայոց պատմութիւն, մարդակազմութիւն, աշխարհագրութիւն, բայց չաջողուեց):

Ակտից յետոյ ուսումը շարունակուեց առաջուայ կարգով. միայն այս տարին Ղանշեանցը ինքը սկսեց աւանդել կրօն վերին (երրորդ) դասարանում։ Հայրապետը չհակառակե-

ցաւ սորան. բայց երևի Դպրոցի ուսման ընթացքը, և մանաւանդ զանշեանցի մտադրած նոր ընդարձակ ծրագիրը նրա ցանկութեան չէին համապատասխանում։ Ուստի նա 1854-ին մայիսի 19-ին առանձին կոնդակներով իւր մօտ (Թիֆլիսում) խորհրդակցութեան հրաւիրեց հոգաբարձուներին և զանշեանցին, ինչպէս և երկու աւագ վարժապետներին։ Խորհրդակցութեան հետևանքն եղաւ մի ծրագիր դասաւանդելի առարկաների մասին, կազմուած զանշեանցի և չոգաբարձութեան ձեռքով։ բայց ձերունի կաթողիկոսը հաւանութիւն չտուեց այս ծրագրին։ Այս ժամանակից սկսած՝ մեծ տարածայնութիւն է ծագում Ներսէս կաթողիկոսի և զանշեանցի մէջ դասաւանդութեան առարկաների մասին, որ տեսում է ամելի քան երկու տարի։ Միմեանց յաջորդում են մի շարք կոնդակներ, որոնց մէջ ծերունի չայրապետը իւր ցանկացած առարկաներն ու աւանդելու մեթոդն էր առաջադրում, և մի շարք ծրագիրներ չոգաբարձութեան կողմից։ Զանշեանցի մասնակցութեամբ, որոնց մէջ ի նկատ են առնելում չայրապետի առաջադրութիւնները և մեծ մասամբ բառացի կրկնուում, բայց պարունակում են մի քանի նոր առարկաներ։ Առանց մարդամասնութեան մէջ մտնելու այսքան լիշենք,

որ Ներսէս Կաթողիկոսը պատուիրում էր ուս-  
ման ծրագրից դուրս ձգել մարդակազմութիւն,  
եկեղեցական պատմութիւն, ընդհանուր, Հայոց  
և ռուսաց պատմութիւն, աշխարհագրութիւն,  
որոնք աշակերտները կարող են լետոյ էլ սո-  
վորի՝ զանազան հեղինակներ կարգավով։ Հա-  
կառակ էր նաև աստուածաբանութեան և քա-  
րոզութեան արուեստին, որոնց մասին կամե-  
նում էր նախ տեղեկութիւն ստանալ, թէ ինչ  
բովանդակութիւն պէտք է ունենան և ինչ  
ձեռնարկներով աւանդուին։ Իւր ծրագրած ա-  
ռարկաներն էին Հայոց և ռուսաց լեզու (ընթեր-  
ցանութիւն, վայելչագրութիւն, քերականու-  
թիւն, ճարտասանութիւն), ֆրանսերէնի ծա-  
նօթութիւն, չափաւոր թուաբանութիւն, առ-  
տնին բժշկականութիւն (որը համաձայնեց մըտ-  
ցնել՝ մարդակազմութեան փոխարէն), կրօն,  
լիակատար ընթերցանութեամբ հին և նոր Կը-  
տակարանների։ Նա հակառակ էր նաև ամառ-  
նային արձակուրդին, (Ճննդեան և զատկի ար-  
ձակուրդ արդէն իսկ չկար), գտնելով որ այս  
միջոցին աշակերտները կմոռանան սովորած-  
ները, և առաջադրում էր ամառուայ տօթե-  
րին էլ շարունակել պարապմունքը, միայն ա-  
ւելի թեթև կերպով, առաւօտեան և երեկոյ-  
եան հովերին։

Ճանշեանցը չկարողանալով համակերպիլ  
այս սահմանափակ ծրագրին՝ թողեց տեսչու-  
թիւնը և մնաց Դպրոցում իբրև լոկ ուսուցիչ  
կրօնի. Դպրոցը առանց ղեկավարի մնալով՝ սկը-  
սեց ընկնել իւր բարձրութիւնից։ Երբ Հայրա-  
պետի պահանջած ծրագիրը մտցրուեց՝ աշա-  
կերտներն սկսեցին հետզհետէ ցրուել, զգալով  
որ ժամանակառ են լինում Դպրոցում մնալով։  
Ուսուցիչները մնացել էին շուարած, չգիտենա-  
լով թէ ինչով պէտք է վերջանայ կրիզիսը։  
Իսկ ժաղովրդի մէջ սկսեցին տրտունջներ լսուել։  
Հոգաբարձութեան քանիցս անգամ գրութիւն-  
ներին, որոնցով լայտնում էր Դպրոցի ընկած  
դրութիւնը և շուտափոյլթ դարման էր խըն-  
դրում։ Կաթողիկոսը էջմիածնից պատասխա-  
նում էր, թէ շուտով Սարգիս արքեպիսկոպոս  
Քալալեանցին կուղարկէ, որի խորհրդակցու-  
թեամբ ամեն ինչ թող կարգադրեն։

Սարգիս արքեպիսկոպոսը հազիւ 1856-ի  
աշնանը եկաւ Թիֆլիս և մի քանի անգամ  
խորհրդակցութիւններ ունենալով Հոգաբարձու-  
թեան, Ճանշեանցի և Յ. Կարինեանցի հետ՝  
վերջապէս կազմեցին մի ծրագիր, որ լիովին  
բաւականութիւն էր տալիս Ճանշեանցին և  
նորան բաւական ընդարձակ իրաւունքներ շնոր-  
հում իբրև տեսչի։ Այս ծրագիրը, ինչպէս ա-

սուած է Հոգաբարձութեան 1857 թ. յունվարի 16-ի օրագրում 1856 թ. դեկտեմբերի 28-ին Սարգիս արքեպիսկոպոսը և Հոգաբարձուները ներկայացրել են ծերունի Հայրապետին, որ վերջին անգամ Թիֆլիս էր եկել, և նրանից հաւանութիւն են ստացել գործադրելու:

Այս օրագրի պատճենն ստանալով՝ Ճանշեանցը նորից ստանձնեց տեսչի պաշտօնը և սկսեց կարգի բերել Թաղրոցը: Բայց հազիւ մի քանի օր անցած՝

1857 թ. փետրվարի 13-ին վախճանեցաւ

Թաղրոցի Հիմնադիր

Երջանկայիշտառակ Ներսէս Ե. Կալետչինոսը և այնուհետև դարձեալ վրդովուեց Թաղրոցի խաղաղութիւնը:

Այս անգամ վրդովմունքի բուն պատճառը՝ Սարգիս արքեպիսկոպոսի այն կասկածն էր, թէ Ճանշեանցը, իբրև կրօնի ուսուցիչ՝ աշակերտներին չէ տալիս այն կրօնական ուղղութիւնը՝ ինչ որ հարկաւոր էր ըստ իւր հասկացողութեան: Դեռ Ներսէս կաթողիկոսը անստորագիր նամակներով տեղեկութիւն էր ստանում, թէ աշակերտները չեն հաւանում այս կամ այն հեղինակի գրուածքին, չեն հաւանում ճգնութեան, գտնում են որ աստուածաբանական գիտութիւնը հայոց մէջ աւելի քիչ է զարգացած՝ քան գերմանացոց մէջ:

ևն. որոնց պատճառով Հայրապետը դժգոհութիւն էր լայտնում հոգաբարձուներին։ Նրա վախճանելուց լիտով բամբասանքներն աւելացան, այն աստիճան, որ Սարգիս արքեպիսկոպոսի կողմնակիցները զանշեանցին և նրա աշակերտներին ու կուսակիցներին սկսեցին ուղղակի բրօք (պրօտէստանտ—բողոքական) անուանել։ Սարգիս արքեպիսկոպոսը կամենալով վերջ դնել այսրըստ իւր համոզման, կրօնական աններելի ազատամտութեան՝ իբրև թեմի առաջնորդ՝ 1857 թ. սեպտեմբերի 16-ին պահանջեց Հոգաբարձութիւնից տեղեկութիւններ, թէ Դպրոցը ի՞նչ դրութեան մէջ է գտնւում, քանի աշակերտ և ուսուցիչ ունի, ուսուցիչները լանուանէ ի՞նչ առարկայ են աւանդում ևն։ Հոգաբարձութեան պաշտօնական պատասխանից տեղեկանալով, — ինչ որ առանց այն էլ գիտէր, — թէ զանշեանցը աւանդում է կրօն ձեռագիր տետրակներով։ գտաւ որ այս բանը կրկնակի արգելուած է։ նախ՝ որ աշխարհականը իրաւունք չունի կրօնդաս տալու, և երկրորդ՝ որ չէ կարելի կրօն ուսուցանել հոգեւոր իշխանութիւնից չհաստառուած ձեռագիր տետրակներով։ Ուստի նա, դժուարանալով զանշեանցին ուղղակի արձակել, ինկատի ունենալով ժողովրդի ընդհանուր լարգանքը դէպի նա և դժգոհութիւնը իրանից։

բաւականացաւ պահանջելով, որ զանշեանցը հրաժարուի կրօնի դասատութիւնից և շարունակէ մնալ տեսուչ։ Այս առաջարկութիւնը եղաւ հոկտեմբերի 7-ին, առաջնորդի մօտ կայացած նիստում։ Վիճաբանութեան ժամանակ առաջնորդը ի միջի այլոց յայտնեց, թէ յունվարի 16-ի ծրագիրը, որ տրուած էր զանշեանցին իբրև Հանգուցեալ Կաթողիկոսի հաւանութիւնը դտած նրա վերջին կամքը՝ կեղծ է, նրա կամքը չէ։ Այս յայտնութիւնը այնպիսի խոր ազդեցութիւն գործեց զանշեանցի վրայ, որ նա դուրս եկաւ ժողովից և յաջորդ օրը հրաժարական տուեց թէ ուսուցչութիւնից և թէ տեսչութիւնից։

Գետրոս զանշեանցի հինգ ու կէս տարուայ (ապրիլ 1852—հոկտեմբեր 1857) տեսչութեան ժամանակ Դպրոցը, վերև բացատրուած արգելառիթների պատճառով, չկարողացաւ մեծանալ. դասարանների և աշակերտների թիւը նոյնը մնաց \*), նոր առարկաներ չաւելացան։ Բայց նրա բարոյական և մտաւորական ազդեցութիւնը

\* ) Նրա Դպրոցից հեռանալու միջոցին՝ առաջուայ նման Դպրոցն ունէր մի պատրաստական և երեք դասարան, որոնց մէջ ուսանում էին ընդ ամենը 189 աշակերտ և դաս էին աւանդում 16 ուսուցիչ, որոնց թուում և ինքը զանշեանցը

շատ մեծ եղաւ Դպրոցի վրայ: Լինելով կատարեալ բարեկիրժ մարդ և ճշմարիտ քրիստոնեայ, կենդանի հաւատով՝ նա մտցրեց Դպրոցում մեղմ բարքեր և վայելուչ յարաբերութիւն ուսուցչի և աշակերտի մէջ: Պատիժն ու ծեծը խապառ վերացուեցին: Զաղկիչը և սպառնալիքը չէին, որ նրա ժամանակ դրդում էին աշակերտին դէպի ջանասիրութիւն և կարգապահութիւն, այլ սէրն ու յարգանքը դէպի տեսուչը: Եթէ տեսուչը լրսէր մէկի յանցանքն ու վշտանոք՝ սա աւելի մեծ ցաւ կպատճառէր յանցաւոր աշակերտին՝ քան որևէ ծեծի ծեծի ու պատժի պատճառածը: Նա իբրև ընկեր էր վարւում աշակերտների հետ, մասնակից էր լինում նրանց խաղերին ու զբօսանքներին, և իւր առաքենի, անարատ վարքով կենդանի օրինակ էր հանդիսանում աշակերտներին և ուսուցիչներին: Նոյն բարոյական վարքն էր ներշնչում նա աշակերտներին և իւր կրօնի դասերով, որոնց մէջ կանգ էր առնում գլխաւորապէս Աստուածային Վարդապետի կեանքի և քարոզութիւնների վրայ: — Միւնոյն ժամանակ, իբրև հաստատ համոզման տէր մարդ՝ նա չկամեցաւ զիջանել չիմնադիր չայրապետի սահմանափակ ծրագրին, չնայելով իւր խորին յարգանքին ու սիրուն դէպի նա. և այն պալքարը Դպրոցի ուսման ծրագրի նկատմամբ, որ

սկսուեց նրա ժամանակ՝ շարունակուեց և նը-  
րանից յետով և սկզբնապատճառ դարձաւ Թը-  
պրոցի լախ ծրագրին, որ Մատթէոս կաթողի-  
կոսից հաստատուելով՝ գործադրութեան մէջ մը-  
տաւ 1861-թուի վերջիրից:

Այս երկու պատճառով՝ զանշեանցի տես-  
չութեան և ուսուցչութեան ժամանակամիջոցը՝  
Թպրոցի կեանքում վերածնութեան շրջան հան-  
դիսացաւ, որը ի պատիւ նորա արժան է կո-  
չել զանշեանցի դար:

## ԺԴ.

—

Զանշեանցի հրաժարուելուց յետով չոգա-  
բարձութիւնը, առաջնորդի համաձայնութեամբ,  
տեսուչ հրաւիրեց Յ. Արգանեանցին, որ 1830—  
35 թուականներում մի անգամ արդէն տեսուչ  
էր եղել Թպրոցին, ապա 1848-ին կազմուած  
չոգաբարձութեան անդամներից մէկն էր, լեզ-  
ուագէտ-գիտնականի համբաւ ունէր, պիտա-  
կան դպրոցներում պաշտօն էր վարում և սե-  
փական ուսումնարան էր պահում։ Արգանեան-  
ցը, չնայելով 800 ը. ոռձկին՝ մեծ դժուարու-  
թեամբ յանձն առաւ տեսչի պաշտօնը մտքերի  
այն ալէկոծութեան ժամանակ, գիտնալով որ  
ով էլ լինի նոր տեսուչը՝ չէ կարող գրաւել ու-

սուցիչների և աշակերտների համակրութիւնը, որոնք նուիրուած էին զանշեանցին: Հէնց նոյն օրը (հոկտեմբեր 17), երբ նա տեսուչ ընտրուեց՝ Թպրոցի ուսուցիչներից չորսը (Միք. Պատկանեան, Պետր. Սիմեոնեան, Յ. Խերջեան և Հ. Խիթարբէգեան) հրաժարական ներկայացրին, յայտնելով որ զանշեանցի հրաժարուելուց յետով իրանք անձեռնհաս են ուսուցչական պարտաւորութիւնը կատարելու: Բայց ահա սկսուեցին խլրտումները և աշակերտների մէջ. բարձր դասարանի որդեգիրները մէկը միւսի յետևելից սկսեցին լսընդիր տալ՝ Թպրոցից դուրս գալու, և Հողաբարձութիւնը պարտաւորուած էր ամենալաւ ատտեստատներով նրանց արձակել, որովհետև Թպրոցի լաւագոյն աշակերտներն էին նրանք: Սարդիս արքեպիսկոպոսը իւր մի դրութեան մէջ լիշում է, թէ ինքը կամենում էր վերին դասատան աշակերտներին բոլորին արձակել և Թպրոցը մաքրել, բայց որ Հոգաբարձութիւնը չէ յօժարել և յուսադրել է իրան, թէ դժողոհ աշակերտները կամաց-կամաց խելքի կգան ու կհնազանդին: Բայց այս յոյսը չիրականացաւ: Թպրոցում մնացող բարձր դասարանի աշակերտները շարունակ բողոքներով նոր տեսչի դէմ և անկարգութիւններով նորան խաղաղութիւն չէլին տալիս, այնպէս որ Արգանեանցը, հազիւ մի

տարի պաշտօն վարելուց յետով, 1858-ի նոյեմբերին, քննութիւններից անմիջապէս յետով, ստիպուած հրաժարական տուեց, որ և ընդունուեց Հոգաբարձութիւնից։ Արզանեանցը իւր պաշտօնավարութեան ժամանակ բացեց Պայրոցում Դր. դասարան, որը վաղուց ի նկատի կար բանալ։

Արզանեանցի փոխարէն տեսուչ ընտրուեց Յովհ. Ղայթմազեանցը (1858 թ. նոյեմբերի 26-ին), որ գրաքննիչի պաշտօն էր վարում այն ժամանակ։ Նա համաձայնեց առանց ոռճիկի ծառայել՝ մինչև նորընտիր Մատթէոս Կաթողիկոսի գալը։ Այս մօտալուտ գալստեան սպասելով՝ Հոգաբարձութիւնը փութացրեց հին փոստայի տան նորոգութիւնը, ուր պիտի փոխադրուէր Պայրոցը ներսիսաշէն հին դպրոցից, որ այլևս չէր կարող ծառայել իրեն դպրոց։ Տեղափոխութիւնը կատարուեց 1859 թուի յունվարի 13-ին, և այս առիթով Հոգաբարձութիւնը ճաշկերոյթ տուեց Թիֆլիսի հայ հասարակութեան։ Նոյն տարուալ յունիսի 14-ին հանդիսաւոր մուտք գործեց Թիֆլիս նորընտիր Մատթէոս Կաթողիկոսը, որ յունիսի 16-ին այցելեց Պայրոցը նոր շինութեան մէջ և փառաւոր ընդունելութիւն գտաւ։ Այցելութեան հանդէսը և այս առիթով խօսուած ճառը առանձին տետրակով լույս տեսան Կաթողիկոսի հրամանով։

Ղայթմազեանցի պաշտօնավարութեան մի-  
ջոցին Դպրոցի ներքին կեանքում զգալի փո-  
փոխութիւններ չեղան. բայց նա անտարակոյս  
մեծ արդիւնք ցուց տուեց նրանով, որ կարո-  
ղացաւ խաղաղութիւն և կարգ մտցնել Դպրո-  
ցում, որ վրդովուել էր ձանշեանցի հրաժարուե-  
լու պատճառով և շարունակում էր Արգանեանցի  
տեսչութեան ժամանակ: Այժմ Դպրոցը հան-  
դարտուեց և իւր խաղաղ զբաղմունքը շարու-  
նակեց: Նրա ժամանակ Դպրոցը, մի պատրաս-  
տականով և չորս դասարանով, ունէր 210—220  
աշակերտ, որոնցից 46—51 որդեգիր և թոշակա-  
տր, միւսները երթևեկ ձրիավարժ: Ուսուցիչների  
թիւն էր 14—17, որոնք աւանդում էին—քրիս-  
տոնէական վարդապետութիւն, հայերէն, ռուսե-  
րէն, ֆրանսերէն, հայոց պատմութիւն, ընդհա-  
նուր պատմութիւն, աշխարհազրութիւն, եր-  
կրաչափութիւն, բնագիտութիւն. թուաբանու-  
թիւն, վայելչագրութիւն: 1860 թ. յունիսի  
հարցաքննութիւնից յետոյ Դպրոցը տուեց 19  
ընթացաւարտ աշակերտ:

Սակայն այս ներքին խաղաղութիւնը նո-  
րից վրդովուեց 1861 թուի սկզբներում: Հոգա-  
բարձութեան և տեսչի մէջ տարածայնութիւն  
ծագեց այն պատճառով, որ վերջինս, չնայելով  
որ Կաթողիկոսից իրաւունք և պատուէր էր

ստացել Հոգաբարձութեան Նիստերին մասնակցելու՝ ժողովի չէր գնում և միւնոյն ժամանակ, առանց նախապէս Հոգաբարձութեան համաձայնութիւնն ստանալու՝ ինքնազլուխ կարգադրութիւններ էր անում, ուսուցիչներ փոխում և նորերը նշանակում։ Հոգաբարձութեան նախազգուշութեան՝ նա պատասխանեց հրաժարականով (1861, յունվարի 7): Նա բոլոր ժամանակ պաշտօն վարեց առանց ուոճկի։ Նրա հրաժարականի պատճառով աշակելտների մէջ խլրտում սկըսուեց, որովհետև չէին կամենում նրան ից զրկուել։ Մինչև անգամ եօթը որդեգիր գիշերով փախան Դպրոցից և ճանապարհ ընկան դէպի Էջմիածին, Կաթողիկոսից խնդրելու, որ Ղայթմազեանցը դարձեալ տիսուչ մնայ։ Նրանց յետ դարձրին, յորդորեցին որ կարգ ու կանոնի հպատակուին։ բայց երբ հնար չեղաւ՝ հարկ եղաւ, անկարգութիւններին վերջ դնելու համար, արձակել 9 որդեգիր։

Ղայթմազեանցից յետոյ ժամանակաւոր պաշտօնակատար ընտրուեց իս. քահ. Սահառունին (1861, յունվ. 10), ապա Գալ. Վարդ. Փափազեանը (վետրվ. 8)։ Սրա ընտրութեան պատճառով՝ Դպրոցից դուրս եկան մի քանի ուսուցիչներ, որոնց թուում և յախտնի Յակ. Կարինեանցը, որ 1838 թուից սկսեալ շարունակ պաշ-

տօն էր վարել Դավրոցում, լինելով հայկաբանութեան վարժապետ բարձր դասարաններում, տեսուչ, նոյն-իսկ ժամանակաւորապէս Հոգաբարձութեան անդամ։ Սակայն շուտով Փափազեան վարդապետը արձակուրդ խնդրեց, որպէսզի որդուն տանի բժշկելու, և Հոգաբարձութիւնը ժամանակաւոր պաշտօնակատար ընտրեց Մկրտ. քահ. Տէր-Գրիգորեանցին (ապրիլի 21)։ Այս մնաց պաշտօնի մէջ մինչև նոյն տարուայ գեկտեմբերի 1-ը, երբ նորահաստատ Հոգաբարձութիւնը պաշտօնի մէջ մտնելով՝ պաշտօնեաների մէջ փոփոխութիւններ արաւ։

## ԺԵ.

Երրեակ Հոգաբարձութեան դէմ ոտնձգութիւններ ու տրտունջներ սկսեցին բարձրանալ Ներսէս Կաթողիկոսի մահից լեռոյ անմիջապէս։ Մի կողմից Սինօդը, որ ձգտում էր ասպարէգից հեռացնել հանգուցեալ Հայրապետի՝ եկեղեցական կառավարութեան մէջ մտցրած աշխարհականներին՝ պահանջում էր նրան հրաժարեցնել Դավրոցի կառավարութեան գործից (Սինօդի հրամաններ 14-ից լունիսի 1857, № 1081 և 8-ից նոյեմբերի նոյն տարուայ, № 2166). միւս կողմից ժողովուրդը պահանջում էր նրա-

նից՝ հաշիւ տալ իւր տնտեսական գործունէութեան մասին և դուրս գալ պաշտօնից, քանի որ այդ պաշտօնը նորան յանձնող Հայրապետը վախճանուել է և, ուրեմն, դրանով նրա լիազօրութեան ժամանակը լրացել է։ Սինօդի պահանջի առաջն առաւ Սարգիս արքեպիսկոպոսը, որ մի ընդարձակ գրութեամբ յանուն տեղակալ Ղուկաս արքեպիսկոպոսի՝ ցոյց տուեց աշխարհականներին Դպրոցի կառավարութեան գործից հեռացնելու վատ հետևանքները և բացակալութիւնը բանիբուն և հաւատարիմ հոգևորականների, որոնց ժողովուրդը հաւատար իւր դրամները և նուիրաբերութիւններ անէր։ Իսկ ժողովրդի պահանջին՝ չոգաբարձութիւնը պատասխանում էր, թէ ինքը միայն նորընտիր կաթողիկոսին կտայ իւր հաշիւն ու հրաժարականը, իսկ ժողովրդին պարտական չէ հաշիւ տալու։ Ժողովրդի տրտունջը սաստկացաւ մանաւանդ շանշեանցի հրաժարուելուց յետու, երբ նրա բազմաթիւ բարեկամներն ու յարգողները միացան դժգոհների հետ չոգաբարձութեան դէմ, որ իւր կողմից միացել էր Սարգիս արքեպիսկոպոսի հետ։ Երբ Մատթէոս կաթողիկոսը Թիֆլիս ժամանեց՝ չողաբարձութիւնը նորան մատուցեց մանրամասն հաշիւներ իւր գործունէութեան բոլոր ճիւղերի վերաբերութեամբ և

միւնոյն ժամանակ հրաժարական խնդրեց։ Կաթողիկոսը խոստացաւ հաշիւները նայել էջմիածնում, բայց յուղորեց դեռ առ ժամանակ էլ վարել իրանց պաշտօնը, մինչև ինքը կարգադրութիւն անէ Թաղրոցի մասին։ Ա. Թաղիբեանը և Գ. Մանդինեանը անսացին Կաթողիկոսի յորդորին և շարունակեցին իրանց պաշտօնը, բայց Դ. Խէրոդինեանը այդ հրաժարականից յետով այլ ևս չմասնակցեց Թաղրոցի գործերին (1859, յուլիսի 1), այնպէս որ այնուհետև մօտ երկու տարի միայն երկու հոգաբարձու էին կառավարում Թաղրոցի գործերը։

Կաթողիկոսը էջմիածին գնալով՝ 1859-ի հոկտ. 4-ին № 181 կոնդակով պատուիրեց, որ Թիֆլիսի հասարակութիւնից ընտրուին 10 պատգամաւոր և Սինօդից ուղարկուած ատենագիր Ա. Թաղիանոսեանի մասնակցութեամբ քննեն Հոգաբարձութեան հաշիւները։ Պատուէրը կը կնուեց նայեմբերին. ընտրուեցին ժողովութիւնը պատգամաւորներ, սակայն նշանակուած օրը չիկան հաշիւները գննելու. ուստի Հոգաբարձութիւնը իւր բոլոր մատեանները յանձնեց Ա. Թաղիանոսեանի քննութեան։ Իսկ ժողովութիւնը պատգամաւորները իրանց կողմից ձեռք դարկին կազմելու մի հիմնական կանոնադրութեան ծրագիր, որ առաջարկեն Կաթողիկոսի

Հաստատութեան։ Թաղիանոսեանը իւր քննութեան հետևանքը 1861-ի մարտի 22-ին զեկուցումով ներկայացրեց Կաթողիկոսին, որ մակագրութեամբ յանձնեց Սինօդի քննութեան։ Թէ զեկուցումը և թէ Սինօդի քննութիւնը վկայում էին, որ Հոգաբարձութիւնը իւր իննամեալ տնտեսական կառավարութեան ժամանակ եղել է բարեխիղճ և արդիւնաւոր։ Այս հիման վրայ Սինօդը որոշեց՝ փակել Հոգաբարձութեան հաշուէտուութեան մասին գրագրութիւնը։ իսկ Կաթողիկոսը շնորհակալութեան և օրհնութեան կոնդակ ուղարկեց Հոգաբարձուներին։ (Հոգաբարձութիւնը նոյն տարին ինքն էլ, ի լիշտառակ իւր տասնամեալ կառավարութեան, Կաթողիկոսի նախընթաց բարեհաճութեամբ, տպագրեց «Տեսութիւն տասնամեայ գործողութեանց և հաշուոց Հոգաբարձուաց ներսիսեան չայոց հոգեւոր Ռազմականին Տփխիսալ, ի 1851—ց 1861 ամն», որի մէջ աւելի մանրամասն է հաշուէտուութիւնը տնտեսական մասին)։

Իսկ ժողովրդից ընտրուած մասնաժողովը,  
մշակելով Թպացիի կանոնադրութեան համար  
հիմնական կէտերը՝ յատուկ պատգամատրութեան ձեռքով (Կար. Վասակեան, Յ. Ղայթմազեան, Գր. Իզմիրեան, Միք. Միանսարեան,

Աւ. Սվեչնիկեան և Յովհ. Ալիքէգեան) մալիսի  
25-ին ուղարկեց Էջմիածին, Կաթողիկոսի հա-  
ւանութիւնը ստանալու համար։ Կաթողիկոսը,  
մի քանի յաւելումներ արաւ, ի միջի այլոց՝  
Դպրոցի անուան վրայ աւելացրեց «Ներսիսեան»  
կոչումը, «ի հոգեկան պարծանս երջանկայիշատակ  
սկզբնապատճառ Հիմնադրի նորին», ապա այդ  
հիմնական կէտերն ընդարձակելով՝ կազմեց կա-  
նոնադրութեան նախագիծ, որի մէջ մտցրեց և  
մի քանի յօդուածներ Հոգաբարձութեան և Յ.  
Ղայթմազեանի նախապէս ուղարկած նախա-  
գիծը։ Այս կանոնադրութիւնը լունիսի 9-ի կոն-  
դակով № 327 հաստատելով՝ ուղարկեց Թիֆ-  
լիս, պատգամաւորների ժողովին, և պատուի-  
րեց, որ Թիֆլիսի ծխականները, համաձայն այդ  
կանոնադրութեան, ընտրեն իւրաքանչիւր եկե-  
ղեցուց Յ պատգամաւոր, որոնք ժողով կազմելով  
ընտրեն 12 անդամ Հոգաբարձութեան և 4 կան-  
դիդատ, և առաջարկեն իրան հաստատելու։

Ընտրութիւնը կատարուեց և 1861 թ.  
օգոստոսի 6-ին ուղարկուեց Կաթողիկոսին հաս-  
տատութեան։ Հաստատութիւնը տրուեց Պատ-  
թէոս Կաթողիկոսի № 466 կոնդակով սեպ-  
տեմբերի 1-ին, և ընդունած Առաջին Հռոմեա-  
յան-Աւագ պաշտօնապէս գոյութիւն ստացաւ  
այս օրից։

ԺԶ.

Մատթէոս Կաթողիկոսի հաստատած Կանոնադրութիւնը, որով Ներսիսեան Դպրոցը նոր շրջանի մէջ մտաւ և կառավարում է մինչև ալժմ՝ հետեւեալ հիմնական կէտերն ունի:

Դպրոցը գտնուում է ամենայն հայոց Կաթողիկոսի և Եջմիածնի Սինօդի լիակատար տեսչութեան տակ և նպատակ ունի պատրաստել բարեկիրծ և արժանաւոր պաշտօնեաներ հայոց եկեղեցիների համար, ըստ ներքին կոչման և յօժարակամ ցանկութեան, և ուսուցիչներ ծխական ուսումնարանների համար։ Նա կառավարում է Հոգաբարձութեան ձեռքով, որ ընտրուում է Թիֆլիսի հայ հասարակութեան ծխական պատգամատորների ձեռքով չորս տարի ժամանակով և հաստատուում է Կաթողիկոսից։ Հոգաբարձութիւնը բաղկանում է 12 անդամից և 4 չորս կանդիդատից՝ նրանց փոխարինելու համար։ Նրա նախագահն է Թիֆլիսի թեմի առաջնորդը, իրեւ առաջին հոգաբարձու։ Հոգաբարձութեան անդամ է և Դպրոցի տեսուչը, որ ընտրուում է Հոգաբարձուներից և հաստատուամ է Կաթողիկոսից։ Բոլոր հարցերը Հոգաբարձութեան մէջ վճռուում են ձայների առաւե-

լութեամբ, և նախագահը ունի  $1\frac{1}{2}$  ձայն։ Հազարարձութեան պարտաւորութիւններն են — ուսման լնթացքի ձև կազմել և բաժանել ըստ դասարանների. թողլ տալ կամ կազմել դասագրքեր. վարձել և արձակել ուսուցիչներ, բացի կրօնական ուսմանց ուսուցիչներից, որոնք ընտրւում են առաջնորդից. ընդունել և արձակել որդեգիր և երթևեկ աշակերտներ, փոխել դասարանից դասարան և աւարտման ատտեստատ տալ. կազմել մատենադարան և բնական գիտութիւնների կաբինետ. Թպրոցի ել և մուտքի նախահաշիւներ կազմել. եկամուտներն ստանալ և ծախսերը անել. աճուրդներ նշանակել Թըպրոցի կալուածները կապալով տալու կամ պէտք եղած գործերը կատարել տալու. գնել պէտք եղած առարկաները. քննել Թպրոցի հաշիւները. Կաթողիկոսին հաշիւ ներկայացնել ըստ ուսումնական մասին, իսկ Սինոդին՝ ըստ տընտեսական մասին։ Տեսուչը հսկում է ուսուցիչների և վերակացուների՝ պարտաւորութիւնները ճշտիւ կատարելուն, աշակերտների վարք ու բարքի, Թպրոցի ներքին կացութեան, որդեգիրների սնունդի, զգեստի և այլ պիտուքների վրայ։ Տեսուչը նախագահում է Մանկավարժական ժողովին, որ բաղկանում է ուսուցիչներից և վերակացուներից և որոշումներ է կայացնում

բուն ուսումնական մասի վերաբերութեամբ, ո-  
րոնք տեսչի միջոցով առաջարկւում են Հոգա-  
բարձութեան քննութեան և հաստատութեան։  
Աշակերտները բոլորը ձրի պէտք է ուսում ստա-  
նան. նրանցից որը աղքատները, մանաւանդ  
հոգևորականների որդիներից, ընդունում են  
որդեգիր և պահւում են Թպրոցի հաշուով,  
թուով մինչև 30 հոգի։ Կարող են լինել և  
թոշակատու աշակերտներ, որոնք ծնողների  
կամ բարերարների հաշուով կրնակին և կը  
մնուին Թպրոցում, որդեգիրների հետ։ Թպրոցը  
ունի 6 դասարան, բացի պատրաստականից։  
Աւանդելի առարկաներն են — սրբազն պատ-  
մութիւն հին և նոր կտակարանաց. քրիստո-  
նէական վարդապետութիւն, բացատրութեամբ  
Հայաստանեաց Եկեղեցու ծէսերի և արարողու-  
թիւնների. Հայոց եկեղեցական պատմութիւն.  
Հայոց լեզու և պատմութիւն գրականութեան,  
ուսւաց լեզու և գրականութիւն, Փրանսիացոց  
լեզու և գրականութիւն, լատիներէն. մաթե-  
մատիկա. պատմութիւն հայոց, ուսւաց և ընդ-  
հանուր. աշխարհագրութիւն ընդհանուր, ուս-  
ւաց և Հայաստանի. բնագիտութիւն, բնական  
պատմութիւն, առտնին բժշկականութիւն. վայ-  
ելչագրութիւն, նկարչութիւն և երգեցողութիւն։  
Ֆիլիսոփան ուսումնարանները Թիֆլիսում՝ են-

թարկում են Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեան տեսչութեան:

Այս կանոնադրութիւնը, ինչպէս երևում է Սինօդի գրութիւնից 1864 թուի դեկտ. օ-ից № 1931՝ ստացաւ Նորին Կայսերական Բարձրութեան Կովկասեան փոխարքայի թոյլտուութիւնը՝ գործադրուելու համար, ինչպէս հաղորդուած է Սինօդին գլխաւոր կառավարութեան կառավարչի գրութեամբ 1-ից սեպտ. 1864, № 6878:

Միւս նախագիծը, որը կազմել էին երկու Հոգաբարձուները և տեսուչ Ղայթմազեանցը և որից մի քանի յօդուածներ միայն մտան վերուիշեալ հաստատուած կանոնադրութեան մէջ՝ թէ մշակման և թէ բովանդակութեան կողմից զգալի տարբերութիւններ էր ներկայացնում։ Օրինակ, ըստ այն նախագծի՝ թեմական առաջնորդը և Դպրոցի տեսուչը աւելի լայն իրաւունքներ ունին. Մանկավարժական ժողով չկայ, այլ տեսուչը կարող է, եթէ կամենայ՝ խորհրդի հրաւիրել ուսուցիչներին. որդիգիրները անշուշտ պէտք է հոգևոր կոչումի մէջ մտնեն. Հոգաբարձութիւնը բաղկանում է օ անդամից, որոնցից հինգը ընտրում են պատգամաւորների ձեռքով, Յ տարի ժամանակով. վեցերորդն է տեսուչը, ևն։

ԺԷ.

Առաջին Հոգաբարձութեան անդամներն էին—Գաբր. Ղորղանեանց, Ստ. Ղամբարեանց, Իշխ. Գր. Բէհրուդեանց, Կար. Վասակեանց, Յար. Յովհաննիսեանց, Յար. Մարկոսեանց, Դաւ. Մելիքեանց, Գաբր. Խատիսեանց, Ստ. Մարգսեանց, Ռոմ. Նաղիրեանց, Աւ. Սվեչնիկեանց, Նազ. Նազարբէգեանց. իսկ կանդիդատներ՝ Գր. Քահ. Տէր-Բարսղեանց, Լէօն Էլիմիրգեանց, Դան. Իզմիրեանց և Յովհ. Ալիբէկեան։ Արանք թէև հաստատուեցին 1861 թուի սեպտեմբերի 1-ին, բայց Մարգիս արքեպիսկոպոսի դէմ ծագած կուլտները քանի շարունակւում էին՝ չկամեցան պաշտօնի մէջ մտնել։ Երկու Հոգաբարձուները վերջին նիստ ունեցան հոկտեմբերի 6-ին և գրաւոր դիմելով առաջնորդին՝ Խնդրեցին Դպրոցն իւր գուքերով ստանալ իրանցից, որովհետև նորընտիր Հոգաբարձուները «ըստ ինչ-ինչ արգելառթից» չեն մրտնում պաշտօնի մէջ։ Դպրոցը իւր կայքերով հոկտ. 12-ին յանձնուեց Մարգիս արքեպիսկոպոսին. իսկ սա շուտով թեմական առաջնորդութիւնից դուրս գալով պէտք է մեկնէր դէպի էջմիածին, ուստի Դպրոցը նոլեմբերի 6-ին

յանձնեց Մկրտիչ Քահ. Տէր-Գրիգորեանցին։  
Սարգիս արքեպիսկոպոսի մելնելուց յետով  
միայն, Կաթողիկոսի նոլեմբեր 19-ի № 614  
կոնդակի յորդորանքի համաձայն, նոր Հոգա-  
բարձութիւնը ստանձնեց իւր պաշտօնը 1861  
թուի դեկտեմբերի 1-ին։

Սարգիս արքեպիսկոպոսից յետով թեմի ա-  
ռաջնորդ նշանակուեց Մակար արքեպիսկոպոսը,  
որ և ըստ կանոնադրութեան եղաւ նախագահ  
առաջին Հոգաբարձութեան։

Հոգաբարձութեան առաջին գործը պէտք է  
լինէր բնականաբար՝ ծանօթանալ Դպրոցի տըն-  
տեսական և ուսումնական դրութեան հետ։ Այս  
նպատակով նա անմիջապէս դիմեց դպրոցական  
եկամուտների բոլոր կառավարիչներին, պահան-  
ջելով մանրամասն տեղեկութիւններ ու հաշիւ-  
ներ իւրաքանչիւրի կառավարած բաժնի վե-  
րաբերութեամբ։ յանկարծական վերազննութիւն  
կատարեց գանձարանի հաշուէմատեաններին,  
որոնք գտաւ ստոյգ և կանոնաւոր դրութեան  
մէջ։ Ընդհանուր հարցաքննութիւն նշանակեց  
աշակերտներին, ծանօթանալու համար նրանց  
պատրաստութեան և իւրաքանչիւր ուսուցչի  
արդիւնաւորութեան հետ։ Յանկացած տնտե-  
սական և ուսումնական տեղեկութիւններն ստա-  
նալուց յետով՝ համապատասխան կարգադրու-

թիւններ արաւ։ Տնտեսական կառավարիչներից մի քանիսին փոխեց, գանձապահ մնաց Մկրտ. քահ. Տէր-Գրիգորեանցը, որ միևնուն ժամանակ տպարանի էլ վերատեսուչ էր։ Մկրտ-տիչ քահանան ապա հրաժարական տուեց իւր երկու պաշտօններից էլ, և Հոգաբարձութիւնը գանձապահ և տպարանի կառավարիչ ընտրեց Թաղ. քահ. Խօջաէնիաթեանին, պատուիրելով կարգի բերձը և բանեցնել տպարանը, որ մատ-նուած էր անգործութեան։ 1862 թուի եր-կրորդ կէսին ձուլուեց տպարանի համար մօտ 37 պուլ տառ, և տպարանն սկսեց նորից գոր-ծել։ 1866-ի նոյեմբերին գանձապահութիւնը յանձնուեց Գ. քահ. Տէր-Բարսղեանցին։

Դպրոցի ուսումնական վիճակը Հոգաբար-ձութիւնը գտաւ միջակ դրութեան մէջ. կային շատ թոյլ, բայց և շատ լաւ դրուած առար-կաններ, ընդհանրապէս բաւարար բայց կարգու-կանոնի վերաբերութեամբ շատ ցաւալի գտաւ դրութիւնը, «որ չէ կարելի գրով յալոնել և ոչ բերանացի պատմել»։ Հօգաբարձութիւնը, տես-չի կետ խորհրդակցելով՝ որոշեց ուսման դասըն-թացը, կանոնադրութեան համաձայն, 6 դա-սարանի վրայ բաժանել, և առարկաների ըստ դասարանների բաշխումը կանոնաւորելու համար՝ առ ժամանակ Դ. դասարանը փակեց և նրա-

Նում սովորող աշակերտներին փոխազրեց Գ. դասարան, միաժամանակ որոշեց բանալ Ա. դասարանի զուգընթաց բաժանմունք։ Արձակեց Յ ուսուցիչ, որոնց առարկաները թոյլ էին նկատուել. նրանցից մէկին՝ նաև ոչ-զովելի վարքի պատճառով, և միջոցներ ձեռք առաւ՝ Գպրոցում ներքին կարգ ու լաւ վարք հաստատելու։

Գպրոցի համար նոր շինութիւն անելու էլ հետամուտ եղաւ Հոգաբարձութիւնը, որովհետեւ ներկայ շէնքը գտնում էր դպրոցի համար անյարմար, ինչպէս և երրեակ Հոգաբարձութիւնը։ Փողի պակասութիւն զգալով՝ Հոգաբարձութիւնը բանակցութիւն սկսեց Յովս. Իֆէնդեանի կտակակատարների հետ, (որոնցից մէկը անդամ էր նաև Հոգաբարձութեան), այն պայմանով, որ կտակակատարները, Գպրոցի կայքերի գրաւականով, կտակուած գումարը փոխ տան Հոգաբարձութեան, չափաւոր տոկոսով՝ 1,000 աշակերտի համար դպրոցական շէնք կառուցանելու նպատակով (1863, սեպտեմբեր-դեկտեմբեր), Բանակցութիւնները յաջող ելք ունեցան. Կաթողիկոսը հաւանութիւն տուեց Հոգաբարձութեան մտադրութեան. կտակակատարները արդէն 10,000 ր. յանձնեցին Հոգաբարձութեան ի հաշիւ փոխառութեան։ Բայց յայտնի չէ գործերից թէ ինչ պատճառով՝ Հոգաբարձութիւնը

1864-ի դեկտեմբերին, նկատելով որ նոր շինութեան գործը դեռ անորոշ և անստուգ է՝ երկուստեք համաձայնութեամբ ոչնչացրեց պայմանը, ստացած փողի մի մասը վերադարձնելով կտակալատարներին, իսկ միւսը պարտք պահելով իւր վրայ:

Թիֆլիսում գտնուող ծխական-եկեղեցական ուսումնարանները ըստ Կանոնադրութեան ենթարկուած էին Հոգաբարձութեան տեսչութեան: Նոյն իրաւունքը դարձեալ Հառտատեց Մատթէոս Կաթողիկոսը 1862 թ. սեպտեմբերի 2-ին № 280 կոնդակով, յորդորելով հոգ տանել և բարեկարգել նրանց: Հոգաբարձութիւնը նախ տեղեկութիւններ հաւաքեց գոյութիւն ունեցող ծխական-եկեղեցական ուսումնարանների մասին: Երևեց, որ այդ ժամանակ Թիֆլիսում կար 7 ծխական ուսումնարան—Մողնու Սուրբ Գէորգ, Բերդի Կաթողիկէ եկեղեցու, Սուրբ Սարգսի, Ճամքօրեցոց եկեղեցու, Սուրբ Մինասի, Սուրբ Կարապետի և Սուրբ Նշանի, իւրաքանչիւրը երկու ուսուցչով, և բոլորը միասին 236 աշակերտով: Այնուհետեւ Հոգաբարձութիւնը այս ծխական ուսումնարանների համար սահմանեց ծրագիր ուսանելի առարկաների, հոգ տարաւ յարմար ուսուցիչներ գտնելու, իւրաքանչիւր ուսումնարանի երկու ուսուցչին սահմանեց տարե-

կան 300 ր. ոռճիկ, որ գերազանցում էր մինչև ցայն վճարուած ոռճիկները: Կարգադրեց որ ծախսուելիք գումարները նախապէս իւրաքանչիւր եկեղեցուց մտցնուին Թպրոցի գանձարանը, որպէսզի Հոգաբարձութիւնը ըստ այնմ իւր կարգադրութիւնները գործ դնէ: Այս իմաստով թուղթ գրեց Կոնսիստորին (Նոյեմբեր 16, 1862), խնդրելով հոգ տանել, որ այդ գումարները զըստ կուին Հոգաբարձութեան, որ ապա իւր տեսչութեան տակ կառնէ լիշեալ ուսումնարանները: Կոնսիստորի կողմից կարգադրութիւն չեղաւ, և ծխական ուսումնարանների մասին Հոգաբարձութեան հոգացողութիւնը մնաց առանց գործնական հետևանքի:

Նոյն Կոնսիստորը 1866 թ. օգոստոսին յայտնեց Հոգաբարձութեան, թէ որովհետև սրա անդամները ժամանակ չունին վերահսկելու թիւ-լէթի, զաւնաբաթի, կրծանիսի և բոլնիսի ուխտատեղիների վրայ՝ ուստի ինքը առել է նրանց իւր հսկողութեան տակ և հրամանագրել է նըրանց վերատեսուչներին, որ վերանորոգութեան անունով հաւաքուած և հաւաքուող նուէրները ուղարկեն իրան, Կոնսիստորին՝ ուխտատեղիների շինութեան և վերանորոգութեան վրայ գործ դընելու համար: Հոգաբարձութիւնը մերժեց ենթարկուել այս կարգադրութեան, և այս առի-

թով տարածայնութիւն ծագեց Հոգաբարձութեան անդամների և նախազահ Մակար արքեպիսկոպոսի մէջ։

Դպրոցի ել և մուտքը փոքր ինչ ընդարձակուեց այս Հոգաբարձութեան կառավարութեան ժամանակ. 1861-ի մուտքն էր (կլոր թուերով) 25,300 ր., իսկ ծախքը՝ 22,500 ր., 1867-ին մուտքը հասաւ 33,900 րուբլի, իսկ ծախքը՝ 32,100 ր.։

1861—67 թուականներում Դպրոցի հաշուով տպուեցին — «Պարլէի զրոյցները», թարգմանութիւն կամսար Յձնեցու, և Ս. Պալասանեանի «Պատմութիւն ազգային զրականութեան» (առաջին և միակ հատորը)։

### ԺԵ.

Աւսումնական մասին գալով՝ նախ լիշենք Հոգաբարձութեան կարգադրութիւնները տեսուչների վերաբերմամբ։ Գեռ պաշտօնի մէջ չմտած՝ Հոգաբարձութիւնը տեսուչ էր ընտրել իւր անդամակիցներից Կար. Վասակեանցին, որ և հաստատուեց պաշտօնի մէջ 1861 թուի նոյեմբեր 19-ի կրնդակով, № 615։ Մօտ երկու տարի պաշտօն վարելուց յետոյ Վասակեանցը, նշանակուելով Սինօդի, պրօկուրօր՝ թողեց տեսչու-

թիւնը և Հոգաբարձութեան անդամութիւնը  
(10 օգոստ. 1863): Նրա փոխարէն տեսչի  
պաշտօնակատար ընտրուեց Դպրոցի ուսուցիչնե-  
րից Գար. Մուրատեան (այժմ Մելքիսեղեկ արք-  
եպիսկոպոս): Յաջորդ տարուայ մարտի 24-ին  
տեսուչ ընտրուեց Հոգաբարձութեան անդամնե-  
րից բժ. Յարութիւն Յովհաննիսեան, համա-  
ձայն Կաթողիկոսի առաջադրութեան և նախա-  
գահի խնդրին, որ տեղիք տուեց տարածախու-  
թիւնների, ինչպէս քիչ յետոյ կտեսնենք: Յով-  
հաննիսեանը, ծագած տարածախութիւնների  
պատճառով նոյն տարուայ յուլիսի 30-ին հրա-  
ժարուեց տեսչութիւնից և միանդամայն Հոգա-  
բարձութեան անդամութիւնից: Ժամանակաւոր  
պաշտօնակատար ընտրուեց Գար. Հէջուքեանց,  
որ իւր վիճակի և իրաւունքների անորոշութիւ-  
նը տեսնելով՝ 1865-ի յունվարին խնդրեց Հո-  
գաբարձութիւնից՝ կամ իրան տեսչական իրա-  
ւունքներ տալ, կամ ուրիշ մէկին ընտրել հաս-  
տատուն տեսուչ: Հոգաբարձութիւնը, որովհե-  
տեւ իւր պաշտօնավարութեան ժամանակը մօտ  
էր լրանալու՝ ըընտրեց հաստատուն տեսուչ,  
այլ ժամանակաւոր տեսուչ նշանակեց Յովս.  
Փոնդոյեանցին, մինչև նոր Հոգաբարձութեան  
հաստատութիւնը: Եւ որովհետեւ այս վերջինս  
յետաձգուեց Մատթէոս Կաթողիկոսի վախճա-

նելու պատճառով՝ ուստի Փոնդոյեանը, 2 տարի  
պաշտօն վարելուց յետոյ, հրաժարական տուեց  
(1867, յունվ.), և պաշտօնակատար ընտրուեց  
Դպրոցի ուսուցիչներից Յակ. Էլիմիրզեանց, մին-  
չև նորընտիր Գէորգ Թ. Կաթողիկոսի գալուստը:  
Տեսուչների այս յաճախակի փոփոխութիւ-  
նը, որ անտարակոյս չէր կարող նպաստաւոր  
լինել Դպրոցի բարեկարգութեան և առաջադի-  
մութեան՝ հետևանք էր գլխաւորապէս այն  
տարածայնութեան, որ ծագեց իրաւունքի գոր-  
ծադրութեան վերաբերութեամբ Հոգաբարձու-  
թեան և ծայրագոյն հոգեւոր իշխանութեան  
մէջ, որ գուցէ բացատրուի Կանոնադրութեան  
դեռ նոր գործադրուելուց առաջացած թիւրի-  
մացութեամբ։ Մատթէոս Կաթողիկոսը, հաս-  
տատելով Դպրոցի Կանոնադրութիւնը, որով ու-  
սուցիչներ ընտրելու և արձակելու, ինչպէս և  
տեսուչ ընտրելու իրաւունքը ամբողջապէս վե-  
րապահուած էր Հոգաբարձութեան՝ երկու ան-  
դամ ինքը շեղուեց Կանոնադրութիւնից, միջա-  
մտելով Հոգաբարձութեան իրաւունքին։ Առա-  
ջին անգամ, երբ Հոգաբարձութիւնը 1862-ի  
սկզբին արձակեց մի ուսուցիչ թոյլ պարապ-  
մունքի և ոչ-գովելի վարքի պատճառով՝ Կա-  
թողիկոսը կոնդակով պատուիրեց Հոգաբարձու-  
թեան, որ դարձեալ այն ուսուցչին յանձնեն

նրա դասերը: Հոգաբարձութիւնը այս առիթով  
որոշեց (օրագիր 1862, 8 փետրվարի) «մի կողմ  
դնելով անձնական պատիւր»՝ կատարել կաթո-  
ղիկոսի կամքը, բայց միևնույն ժամանակ յայ-  
տնել չայրապետին, թէ իրանց արձակածը այն-  
պիսի մէկն է եղել, որին չէ կարելի մէկ օր  
անգամ մօտ թողնել Դավրոցին. ուստի խնդիր  
Վեհափառից, որ հրամայէ դարձեալ արձակել  
նրան: Երկրորդ դէպքը վերաբերում էր տեսչի  
ընտրութեան: Երբ Կ. Վասակեանցի հեռանա-  
լուց յետու Հոգաբարձութիւնը, ժամանակաւոր  
պաշտօնակատար ընտրելով, հետամօտ էր տես-  
չացու մի յարմար մարդ գտնելու ահա ստա-  
ցուեց կաթողիկոսի կոնդակը 1864 թ. յուն-  
վարի 5-ից № 8, որով պատուիրում էր տե-  
սուչ ընտրել բժ. Յար. Յովկաննիսեանցին, Հո-  
գաբարձութեան անդամներից: Այս անգամ Հո-  
գաբարձութիւնը հարկ համարեց պաշտպանել  
իւր իրաւունքը և փետրվարի 29-ին № 60 գրու-  
թեամբ յայտնեց կաթողիկոսին, որ դժուարա-  
նում է կատարել նրա պատուէրը, որովհետև  
դրանով խախտում է կանոնադրութիւնը, որը  
ինքը չայրապետն է վաւերացրել: Այս գրու-  
թեան ի պատասխան՝ առաջնորդն ստացաւ կա-  
թողիկոսից կոնդակ № 156, մարտի 8-ից գըր-  
ուած, որի մէջ երկայնամլու չայրապետը բա-

ցատրում էր, թէ նպատակ չէ ունեցել խախտել իւր վաւերացրած սկզբունքը, այլ հօգալով Թաղրոցի առաջադիմութեան մասին և լաւ ճանաչելով իւր առաջարկած անձի բարեմասնութիւնները՝ ցանկալի էր գտնում նրա տեսչութիւնը. այժմ էլ առաջնորդին պատուիրում էր՝ «առանց տարածայնութեան» լուծել տեսչական հարցը, և հայրական լորդուներ էր տալիս հոգաբարձուներին՝ սիրով և համաձայնութեամբ գործելու: Այս կոնդակի հիման վրայ առաջնորդը ինդրեց Հոգաբարձուներից, որ կատարեն կաթողիկոսի նախկին տնօրէնութիւնը և տեսուչ հրաւիրեն բժ. Յար. Յովհաննիսեանցին: Հոգաբարձութիւնը, այսպիսի դրութեան մէջ, համաձայնութիւն յայտնեց, բայց մի ընդարձակ, պատճառաբանուած գրութիւն ուղարկեց. Կաթողիկոսին, որի մէջ բացատրելով Տէ՛ իշխանութեան կարևորութիւնը, Երէու իշխանութեան անյարմարութիւնը, որից շատ երկպառակութիւններ կարող են ծագել՝ ինդրում էր, որ դրանից յետոյ տեսչի և ուսուցչի ընտրութիւնը վերապահուի միայն Հոգաբարձութեանը: Այսուհետեւ մի կողմից Հոգաբարձութեան լիազօրութեան ժամանակի վերջանալը, միւս կողմից Պատթէոս Կաթողիկոսի վախճանելը պատճառեղան, որ հաստատ տեսչի ընտրութիւնն ու

Հաստատութիւնը ձգձգուեց մինչև նոր Հոդա-  
բարձութեան հաստատութիւնը:

Թպրոցի ներքին կեանքում այս Հոդաբար-  
ձութեան ժամանակ՝ նշանակելու է այն, որ  
Գ. դասարանը ժամանակաւոր կերպով փակուե-  
լուց յետոյ՝ 1862-ին վերաբացուեց, ուր, քըն-  
նութիւններից յետոյ, փոխադրուեցին Գ. դասա-  
րանի աշակերտները, (որոնք բաղկացած էին  
բուն Գ. դասարանի և փակուած նախկին Գ.  
դասարանի աշակերտներից): Յաջորդ թուին բա-  
ցուեց Ե. դասարան, որ առաջին անգամ 12  
ընթացաւարտ տուեց 1864-ին: (Այս ընթաց-  
աւարտների թուումն էին ի միջի այլոց Յովհ. Զիգիանեան, Լ. Թիւակիեան, Յար. Արէլեան,  
Աղ. Ղազազեան, Միս. Արամեան, որոնք բոլորը  
յետոյ բարձրագոյն կը թութիւն ստացան): Իսկ  
Զ. դասարանը բանալը չյաջողուեց այս Հոդա-  
բարձութեան:

Թպրոցի գլազարանը այս միջոցին հարըս-  
տացաւ Յովհ. Լիքէնդեանի կտակած գրքե-  
րով: Հոդաբարձութեան պատուէրով կազմուեցին  
առանձին ցուցակներ ընթերցանելի և վաճա-  
ռելի գրքերի:

ԺԹ.

Գէորգ Դ. Կաթողիկոսի գալուց և հաստատուելուց լեռով՝ Հոգաբարձութիւնը յոյս ունէր, որ նոր ընտրութիւն կնշանակուի, և իրանք, որ Շ տարուց ի վեր պաշտօնի մէջ էին և արդէն թուով շատ պակասել՝ կարձակուին պաշտօնից։ Բայց նրա սպասածի հակառակը դուրս եկաւ։ Նորընտիր Կաթողիկոսը 1868 թ. փետրվ. 9 կոնդակով յանուն առաջնորդին՝ յորդորում էր Հոգաբարձութեանը, որ պաշտօնը շարունակէ և Դալրոցը կարգի բերէ ըստ տրնտեսական և ուսումնական մասին։ Հոգաբարձութիւնը այս առիթով նիստ ունեցաւ փետրվարի 18-ին և մի ընդարձակ օրագիր կազմեց, որի մէջ սաստիկ գանդատւում է առաջնորդի վրայ, որ ուխտատեղեաց վերաբերութեամբ խախտեց Հոգաբարձութեան իրաւունքը, զ վեց տարուայ ընթացքում ոչ մի օժանդակութիւն և խրախուս ցոյց չտուեց Հոգաբարձութեան։ Դալրոցը բարեկաբարգելու համար, և այժմ ոչ մի միջոց ձեռք չէ առնում, որ նոր ընտրութիւններ կատարուին։ Դալրոցի անբարեկարգ դրութեան «միակ պատճառը՝ նոր Հոգաբարձուների ընտրութեան յետաձգումն է», — ասում է նա.

սրանով խախտւում է ժողովրդի իրաւունքը,  
իսկ առաջնորդը չէ ուզում լսել և յարգել այդ  
իրաւունքը։ Այս օրադրի պատճէններն ուղար-  
կելով առաջնորդին և Կաթողիկոսին՝ Հոգա-  
բարձութիւնն ամբողջապէս դադարեց այլ ևս  
նկատերին գալ, այնպէս որ առ ժամանակ նիս-  
տեր կայացնում և հարցերը վճռում էին միայն  
առաջնորդն ու տեսչի պաշտօնակատարը։

Այս ազգու բողոքն ու միջոցը ունեցան ի-  
րանց հետևանքը։ Ճուտով նշանակուեց նոր Հո-  
գաբարձական ընտրութիւն, որ և հաստատուեց  
1868 թ. ապր. 13-ին № 122 կոնդակով։ Այս  
նոր ընտրուած Երէրորդ Հոգաբարձութեան ան-  
դամներն էին—Գր. քհ. Տէր-Բարսղեան, Թալի.  
քհ. Խոջանիաթեան, իշխ. Միք. Բէկրուդեան,  
Ստ. Բաստամեան, Միք. Տէր-Գրիգորեան, Գր.  
Իգմիրեան, Բարս. Խոջայիեան, Յով. Խանջեան,  
Սոլ. Վարձելեան, Հէջ. Հէջուքեան, Նիկ. Ալա-  
դաթեան, Յովհ. Զիթախեան. իսկ փոխանորդ-  
ներ—Ղ. քհ. Խարազեան, Զաք. Գրիգորեան,  
Յովհ. Տէր-Յովսէփեան և Խաչ. Առվանեան։  
Հոգաբարձութիւնը պաշտօնի մէջ մտաւ մայ-  
իսի 4-ին։

Նոր Հոգաբարձութիւնը անմիջապէս հե-  
տամուտ եղաւ ծանօթանալու Պարոցի տնտե-  
սական դրութեան հետ և նշանակեց վերադննու-

թիւն հաշիւների, մոմավաճառութեան, պահարանի, ուխտատեղնաց, կալուածների ևն։ Նա կառավարիչների մէջ փոփոխութիւններ արաւ, և գանձապահութեան պաշտօնն յանձնեց Յովկ։ Չիթախեանին, իսկ կալուածների վերատեսչութիւնը՝ Թ. քահ. Խոջանիաթեանին։ Այս Հոգաբարձութեան չորսամեալ գործունէութեան մէջ լիշելու արժանի են հետևեալ կարգադրութիւնները։

Դպրոցական կալուածները մինչև այդ ժամանակ կառավարում էին տնտեսական կերպով և ցանկալի արդիւնք չէին տալիս։ Հոգաբարձութիւնը մտցրեց կապալի սկզբունքը համաձայն Կանոնադրութեան 48 յոդուածին։ Նոյնպէս մոմավաճառութիւնը, որ առաջ կատարում էր Աւագ պահարանից, Հոգաբարձութեան նշանակած մարդու ձեռքով՝ շօշափելի արդիւնք չէր տալիս և շատ անդամ ծախսը եկամուտից աւելի էր լինում։ Եկամուտի այս աղբիւն էլ որոշեց կապալով տալ։ Մոմավաճառութիւնը առաջին անգամ կապալով տրուեց 1868-ի օդոստոսին, տարեկան 7,000 րուբլիով։ Իսկ երկրորդ կապալի ժամանակ, 1870 թ. յովկոսին, կապալագինն իջաւ 5,500 ը. տարեկան, (որ յետոյ դարձեալ սկսեց աւելանալ)։ Վերանորոգեց ամբողջապէս հին դպրոցի շէնքը,

որ քայլքալուել, անպէտք էր դարձել. ներքեւի  
յարկում շինեց 27 կրպակ, որոնք վարձով տըր-  
ուեցին, իսկ վերի յարկը վերանորոգուելուց յետոյ  
կապալով տըրուեց, տարեկան 1,500 բուբլիով:

Տպարանը, որ 1865 թուից մնացել էր  
անգործ՝ որոշեց օգտակար դարձնել: Նախ Ստ.  
Նազարեանցի ձեռքով նրան կարգի բերեց,  
ապա 1870 թ. սկզբին կապալով տուեց Հ. Ին-  
ֆիաճեանցին, տարեկան 100 բուբլիով:

Դպրոցի եկամուտներն ու ծախսերը այս  
չողաբարձութեան ժամանակ աւելացան: 1868  
— 1871 թուերում, ժապաւինեալ մատեանների  
հիման վրայ, Դպրոցի ընդհանուր արդիւնքն  
է եղել միջին թուով տարեկան աւելի քան  
33,000 բուբլի:

Ա.

Ուսումնական մասը շատ անմխիթար դրու-  
թեան մէջ գտաւ չողաբարձութիւնը: Յաճա-  
խակի փոփոխուող տեսչի պաշտօնակատարները  
չէին կարողանում մի յայտնի ուղղութիւն մըտ-  
ցնել, հաստատ ուսուցչական խումբ կազմակեր-  
պել և տեսական գործունէութիւն ունենալ, ա-  
ռանց որոնց անկարելի է առաջադիմութիւնը:  
Թէ ո՞րչափ թոյլ էր առաջադիմութիւնը. Դը-

պլոցում՝ կարելի է գուշակել նրանից, որ Ու-  
սուցչական ժողովը մայիսի 7-ին վճռեց՝ բոլոր  
աշակերտներին թողնել միևնույն դասարաննե-  
ցում, բացառութեամբ մի քանիսին. իսկ բարձր  
(Ե.) դասարանի աշակերտներին իրաւունք տալ՝  
մի տարի էլ մնալ նոյն դասարանում։ Տարե-  
կան հարցաքննութեան մասին կարծիքները  
տարբերուեցին. մեծամասնութիւնը գտաւ, որ  
աւելորդ է հարցաքննութիւն անելը։ Հոգաբար-  
ձութիւնը սակայն, նկատելով որ նոր է մտել  
պաշտօնի մէջ և առանձնապէս կարիք ունի  
ծանօթանալու Դպրոցի ուսումնական վիճակի  
հետ՝ չընդունեց Ուսուցչական ժողովի այս վճիռ-  
ներից և ոչ մէկը, այլ որոշեց հրապարակա-  
կան հարցաքննութիւն անել և ըստ այնմ կար-  
գադրել փոխադրութեան խնդիրը։ Հարցաքըն-  
նութեան հետևանքն այն եղաւ, որ Դպրոցից  
արձակուեցին 53 աշակերտ, իստ տարուեցին 12,  
փոխադրուեցին պատրաստականից և առաջին  
դասարաններից ընդ ամենը 14 աշակերտ. միւս  
դասարաններից փոխադրուողներ չեղան։

Հարկաւոր էր լուրջ ուշադրութիւն դար-  
ձնել ուսումնական մասի վրայ և նրան բար-  
ձրացնել ընկած զրութիւնից, որի համար կա-  
րևոր էր հրաւիրել իրբեւ տեսուչ մի փորձուած  
և հեղինակաւոր անձ։ Յուլիսին Հոգաբարձու-

թիւնը տեսչի պաշտօնակատարութիւնից արձակեց Յ. Ելիմլրզեանցին և հետամուտ եղաւ յարմար տեսչացու գտնելու։ Նա վերջ ի վերջու կանդ առաւ պրօֆ. Ստեփանոս Նազարեանցի վրայ և Կաթողիկոսից նախապէս հաճութիւն ստանալով՝ բանակցութիւններ ոկսեց նրա հետ։ Նազարեանցը հէնց առաջին անդամից համաձայնութիւն յատնեց Հոգաբարձութեան պայմաններին, բայց մի ժիւրիմացութեան պատճառով հարկ եղաւ նորից գրաւոր բանակցութիւններ անել, այնպէս որ Նազարեանցը հաղիւ 1869 թ. սեպտեմբերին ստանձնեց տեսչի պաշտօնը, որի մէջ հաստատուեց նոյն տարուակ նոյեմբերի 11-ին, № 367 կոնդակով։

Նոր տեսչի հետ խորհրդակցելով՝ Հոգաբարձութիւնը որոշեց տարեկան հանդէս (ակտ) կատարել հոկտեմբերի 12-ին, որի ժամանակ տեսուչը Հոգաբարձութեան հրաւէրով կարդաց պատշաճաւոր ճառ. նոյնպէս կարդացուեց «քաղուածք գործառնութեան Հոգաբարձութեան ըստ ուսումնական և տնտեսական մասանց յօրէ մօւտ գործելոյ նոցա»։ Այս ակտի նկարագրութիւնը տպաւեց 1870-ի սկզբին։

Նոր տեսուչը վերակաղմեց ուսուցչական խումբը, որի անդամների թիւը հասաւ 14-ի, որոնցից 10-ը հին էին, իսկ չորսը նոր։ Աերջին-

ների թուումն էր ինքը տեսուչը, որ ստան-  
ձնեց հայերէնի և հալոց մատենագրութեան  
դասերը Ե. դասարանում։ Նա բարեկարգեց Ման-  
կավարժական ժողովը, որ նրա ժամանակ իոչ-  
ւում էր Պետագողեան ժողով։ Թէպէտ կանո-  
նագրութեամբ սահմանուած էր Ուսումնական  
խորհուրդ (= Մանկավարժական ժողով), բայց  
մինչև Ստ. Նազարեանցի ժամանակ այս ժողովը  
չէր գործում կանոնաւրապէս, չէր ունենում  
սահմանուած հերթական նիստեր, և շատ ան-  
գամ նրա իրաւունքների ու պարտաւորութիւն-  
ների սահմանները փոխւում էին՝ տեսուչների  
կամ չոգաբարձութեան միջամտութեամբ։ Իսկ  
Ստ. Նազարեանցը Մանկավարժական ժողովի  
Համար ներքին բարեկարգութիւններ ոահմա-  
նեց և նրա նշանակութիւնը բարձրացնելով  
տուեց նորան այն դիրքը, որ բնականապէս նա  
պէտք է ունենար իրեւ մի հիմնարկութիւն,  
որ ամենից մօտ է կանգնած ուսումնական գոր-  
ծին, ամենից մօտ ծանօթ է Դալրոցի ուսու-  
մնական կարիքներին և ամենից աւելի ձեռքն-  
կաս է միջոցներ որոնելու ուսումնական դրու-  
թիւնը բարելաւելու Համար։ Նազարեանցի նա-  
խագահութեամբ 1869 թ. սեպտեմբերի 17-ին  
կայացած նիստում Պետագողեան ժողովը որո-  
շեց ի միջի ալլոց — ամիսը մի անգամ նիստեր

ունենալ. — նշանակել մի քարտուղար, որ արձանագրէ ժողովի որոշումները. — գնել կարևոր զբքեր և կազմել Փիզիքական և բնական գիտութիւնների համդերձանք. — ըերել տալ ուսուցիչների ընթերցանութեան համար լրագիրներ և օրագիրներ ուսուերէն և եւրոպական լեզուներով. — աշխարհաբարի դասատուութիւնը մտցնել դպրոցի Ա—Բ դասարաններում, իսկ գրաբարն օկսել Գ. դասարանից. — աշակերտներին ուսուերէն խօսակցութեան մէջ վարժեցնելու համար հրաւիրել առանձին վարժիչ. — որովհետև ծխական ուսումնարանները համարւում են իբրև նախապատրաստական դասարաններ Ներս. Դպրոցի համար՝ ուստի նրանց ենթարկել Ուսուցչական ժողովի վերահասութեան, ևն: Այս միևնույն նիստում ժողովը առաջարկում է երկու անձ՝ իբրև վարժիչ և ուսուցիչ ուսուաց լեզուի:

Մանկավարժական ժողովի այս նիստը, որ իւր որոշումներով դգացնում է Ստ. Նազարեանցի ղեկավարութիւնը՝ միևնույն ժամանակ նշանաւոր է նրանով, որ ցոյց է տալիս, թէ որչափ լայն իրաւունքներ և պարտաւորութիւններ տուեց նորան նոր տեսուչը, ուրեմն թէ որչափ բարձր է գնահատում նա խորհրդակցական եղանակը ուսումնական մասի վերաբերմամբ: Այս որոշումները տեսուչը հետզհետէ

Ներկայացրեց Հոգաբարձութեան, և նրանցից  
մեծ մասը իրագործուեց։ Բայց սրանից սահ-  
մանուեց, որ աշակերտներին և ուսուցիչներին  
հանգստութիւն տալու համար՝ ձմեռնային ար-  
ձակուրդ լինե դեկտեմբերի 23-ից մինչև յուն-  
վարի 8.—որ աշակերտները Դպրոց մտնելիս՝  
ներկայացնեն ծննդեան և պատուաստի վկայա-  
կան.—թոյլ տրուեց աշակերտական թատրո-  
նական ներկայացում ձմեռուայ արձակուրդի  
ժամանակ։

Ուսուցչական խումբը գործում էր համե-  
րաշխութեամբ, և շուտով Դպրոցի ուսումնա-  
կան մասը բարելաւ վիճակի հասաւ, որ ե-  
րեսում է հարցաքննութիւնների հետևանքնե-  
րեց. (1869-ին փոխադրուեցին 54, արձակուե-  
ցին 24. 1870-ին փոխադրուեցին 53, արձա-  
կուեցին 28. 1871-ին փոխադրուեցին 75, ար-  
ձակուեցին 9):

Ուսուցչական խումբը ցանկութիւն ունէր՝  
օր առաջ բացուած տեսնել և Զ, դասարանը,  
որ թէպէտ սահմանուած էր կանոնադրու-  
թեամբ, բայց դեռ չէր բացուել՝ միջոցների  
պակասութեան պատճառով։ Եւ ահա 1870  
թուի սեպտեմբերին տեսուչը և նրա հետ 6  
ուսուցիչ—Զաք. Գրիգորեան, Պետր. Ալմէ-  
նեան, Միք. Սալամբէգեան, Ամիր. Մանդի-

նեան, Մարտ. Սիմէօնեան և Ստ. աւ. քէ. Մանդինեան,—գրաւոր յայտարարութիւն տուին Հոգաբարձութեան, թէ իրանք յանձն են առնում ճրիաբար պարապել Զ. դասարանում, միան թէ բացուի այդ դասարանը: Սակայն Հոգաբարձութիւնը, համաձայն առաջնորդի կարծիքին, բարւոք չհամարեց այդ դասարանը բանալ՝ ճրի դասատուութեան պայմանով: Այս կերպով Զ. դասարանի բացումը յետաձգուեց:

### ԲԱ.

Երկրորդ Հոգաբարձութիւնը ուշադրութիւն դարձեց և. Թիֆլիսի ծխական ուսումնարանների վրայ, որոնք, կանոնադրութեան 34-րդ յօդուածի զօրութեամբ, ենթարկուած էին անմիջապէս հոգաբարձական խորհրդարանի տեսչութեան: Իւր ընտրութեան տարին, 1868-ի հոկտեմբերին, որոշելով զբաղուել նրանց բարեկարգութեամբ՝ իւր անդամակից Գր. քէ. Տէրբարսղեանցին յանձնեց տեղեկութիւններ հաւաքել նրանց թուի, ուսուցիչների և աշակերտների, աւանդուող առարկաների և այլ հանգամանքների մասին: Տէրբարսղեանցի հաւաքած տեղեկութիւններից երևեց, որ այդ ժամանակ Թիֆլիսում եղել են Շ ծիական դպրոց

տղայոց համար և 2՝ աղջկանց համար։ Սրանք  
առ հասարակ եղել են անբարեկարգ դրութեան  
մէջ, չեն ունեցել տեսուչներ և ուսման ծրա-  
գիր. մի տեղ աւելի, ուրիշ տեղ պակաս են  
եղել սովորեցնելիս։ Ուսուցիչները կախուած են  
եղել եկեղեցիների երէցփոխներից, որոնք շատ  
անդամ ուոճիկները ժամանակին չէին տալիս։  
Ուոճիկներն եղել են ամսական 5 րուբլիից մին-  
չեւ 17 րուբլի։ Այս ուսումնարաններից միայն  
մէկը, Ս. Գէորգինը, կարողացել է աշակերտ-  
ներ պատրաստել Դպրոցի Ա. դասարանի հա-  
մար. միւսները, ինչպէս փորձը ցոյց է տուել՝  
չեն կարողացել։ Հոգաբարձութիւնը այս մա-  
սին խորհրդակցելով՝ դեկտեմբերի 20-ի նիստին  
հրաւիրեց Թիֆլիսի եկեղեցիների երէցփոխնե-  
րին և որոշեց՝ իւր տեսչութեան տակ առ-  
նել 6 ծխական ուսումնարան, այն է Մողնու-  
կաթողիկէ Ս. Գէորգի, Աւետեաց եկեղեցու,  
Հաւլաբարի Ս. Կարապետի, Ս. Մինասի և  
Ճամքորեցոց Ս. Աստուածածնի ծխական ու-  
սումնարանները, որոնցից Աւետեացը և Ճամ-  
քորեցոցը նոր պէտք է բացուէին։ Որոշուեց, որ  
իւրաքանչիւր ուսումնարանում լինի երկու ու-  
սուցիչ, որոնց վարձ տրուի միասին տարեկան  
360 րուբլի. չունեոր եկեղեցիներին նպաստ  
տան ունե որները։ Ուսումնական մասի տես-

չուլթիւնը յանձն էր առնում Հոգաբարձութիւնը, իսկ տնտեսականը թողնում էր երէցփոխների վրայ, բայց այն պայմանով, որ երկուսն էլ կարողանան փոխադարձ հակել միւս մասի կանոնաւորութեան վրայ: Այս օրադրին, բացի նախագահից և անդամներից, ստորագրել են 13 երէցփոխներ: Այս կերպով 1869 թուի սկզբից Հոգաբարձութիւնը սկսեց խնամք տանել ծխական ուսումնարանների բարեկարգութեան վրայ, հրաւիրեց ուսուցիչներ և իւր անդամներից երկուսին նշանակեց տեսուչ այս ուսումնարանների վրայ: 1870 թուի ամառը Հոգաբարձութիւնը մի ուսումնարան էլ բացեց Թէլէթում, աեղի հայ մանուկների համար: Սակայն այս գործառնութեան մէջ Հոգաբարձութիւնը դժուարութիւնների հանդիպեց եկեղեցիների երէցփոխների կողմից, որոնք կամ չէին վճարում ուսումնարանների պահպանութեան համար որոշուած գումարները, կամ ուշացնում էին վճարը: Հոգաբարձութիւնը դիմեց Գէորգ Կաթողիկոսին, խնդրելով նրա կարգադրութիւնը: Կաթողիկոսը կարգադրեց, որ ծխական ուսումնարանները հանուին Հոգաբարձութեան տեսչութիւնից և յանձսուին ծխականների և երէցփոխների իշխանութեան: Հոգաբարձութիւնը հսկէ նրանց միայն ուսու-

մնական մասի վրայ։ Այս առիթով բանակցութիւններ լինելուց յետով՝ Հոգաբարձութիւնը 1871 թ. յունվարին որոշեց հրաւիրել ծխական ուսումնարան ունեցող եկեղեցիների երեցփոխներին և նրանց գրաւոր կերպով պարտաւորեցնել, որ ուսուցիչների ոռջիկներն անխափան վճարեն։ Այս ծխական ուսումնարանները նկատուած էին իրեւ պատրաստական դասարաններ Ներսիսեան Դպրոցի համար, և երբ նրանք բարեկարգուեցին և նրանց թիւն աւելացաւ, յաշողակ աւարտողներն այնքան շատացան, որ Դպրոցի Հոգաբարձութիւնն հարկադրուած էր 1869-ին բանալ Ա. դասարանի զուգընթաց։ 1870 թուին այս ծխական ուսումնարաններից, չնայելով «ամենախիստ» քննութեան՝ Դպրոցի Ա. դասարանները մտան Յ9 հոգի։

Դպրոցի աշակերտների ընդհանուր թիւը այս տարիներում տատանուում էր 120—140-ի մէջ. որոնցից 25-ը որդեգիր էին բարերարների հաշուով, մօտ 10-ը՝ թոշակաւոր, մնացածները ձրիավարժ երթեել։

իբ.

Տեսչի և ուսուցական խմբի խաղաղ գործունէութիւնը վրդովուեց հետևեալ միջադէպով։

Հոգաբարձու իզմիրեանը 1871 թուի մարտին  
մի յայտարարութիւն տուեց իւր երկամսեալ հեր-  
ժակալութեան մասին, որի մէջ ցոյց էր տալիս  
զանազան պակասութիւններ ուսուցիչների և  
վերակացուների մէջ, մանաւանդ այն՝ որ ու-  
սուցիչները բաճախ բաց են թողնում դասեր, և  
ուսումնարանի կառավարութիւնը առհասարակ  
շատ թոյլ է։ Հոգաբարձութիւնը այս գեկուց-  
ման հիման վրայ ազգաբարութիւն զրեց ու-  
սուցիչներին, որ «այնուկետև իրանց խիղճը  
արթուն պահեն գործակատարութեան մէջ»,  
յայտնելով որ բաց թողուած դասերի համար  
ունիկներից կհանուի դասին 1 ր. 50 կոպ.։  
Այս առիթով ուսուցչական խումբը, բացառու-  
թեամբ չորսի (որոնց մէջն էր և տեսուչը) մի  
քաղաքավար, բայց խիստ գրաւոր բողոք տուեց  
Հոգաբարձութեան և հիմնաւոր ապացուցներ  
բարելով իւր բարեխղճութեան՝ ցաւ յարոնեց  
իզմիրեանի անյարմար և անվայել վարմունքի  
մասին, և ուրախութիւն՝ ունիկներից բարձում  
անելու կարգադրութեան առիթով, որով իրանք  
նիւթապէս կտութեն, բայց իրանց բարեխղճու-  
թիւնը կասկածի չի ենթարկուի։ Հոգաբարձու-  
թիւնը դժուար դրութեան մէջ ընկաւ, ուսու-  
ցիչների բողոքը շատ վիրաւորական էր հոգա-  
բարձուի համար, բայց միւնոյն ժամանակ՝ սա

ինքն էր առկիթ տուել այդ բողջքին, ոչ այն-  
չափ հիմնաւոր փաստերի վրայ կազմած լինելով  
իւր գեկուցումը։ Վերջապէս Հոգաբարձութիւնը  
որոշեց տեսչին յայտնել, որ ուսուցիչները ա-  
ռանց հակառակութեան կատարեն Հոգաբար-  
ձութեան կարգադրութիւնը, յիշեցնելով որ ո-  
մանք անհոգ են եղել իրանց պարտականութիւն-  
ները կատարելու մէջ։ Միևնոյն ժամանակ նա  
արձանագրութեան մէջ յիշեց, որ Իզմիրեանի  
վարմունքը գտնում է խիստ, և թէ պէտք էր  
խնայել ուսուցիչների պատուասիրութիւնը, ի  
նկատի առնելով նրանց անցեալ վաստակները։

Թէև այս միջադէպը այսպէս էլ անցաւ  
առանց լուրջ անբաւականութիւնների, բայց  
ծանր տպաւորութիւն գործեց Ստ. Նազարեանցի  
վրայ, որի կառավարութիւնը շատ թոյլ էր գը-  
տել Իզմիրեանը և որի մասին նոյնպէս յալ-  
տնել էր, թէ 6 օրում 4 դաս է բաց թողել։ Պա-  
տուասէր տեսչի համար՝ սա առաջին հարուածն  
եղաւ, որի վրայ շուտով աւելացաւ երկրորդը։  
1871 թ. լուլիսի 1-ին հոգաբարձու իշխան Ս.  
Քէհրուդեան գեկուցում տուեց քննութիւնների  
հետևանքի մասին, որի մէջ ի միջի այլոց յալ-  
տնեց, թէ հայերէն լեզուն Ա—Թ. դասարան-  
ներում գերազանց է եղել, իսկ Ե.-ում, (որտեղ  
ուսուցիչն էր Ստ. Նազարեանցը) ոչ համապա-

տասիսան։ Նոյն օրն և եթ Ստ. Նազարեանցը  
հրաժարական տուեց ու գնաց Մոսկվա։

Հոգաբարձութիւնը յուշիսի 8-ին նոր տեսուց հրաւիրելու մասին խորհրդակցելով՝ կանգ առաւ Պետր. Ճանշեանցի վրայ և նրան միաձայն քնտրեց տեսուց (երբորդ անգամ), իսկ մինչեւ նրա հաստատուելը՝ տեսչի պաշտօնակատար ընտրեց Պետր. Ալմէոնեանցին։ Ճանշեանցից համաձայնութիւն ստանալով՝ Հոգաբարձութիւնը օգոստոսի 5-ին դիմեց Կաթողիկոսին, խընդրելով նրա հաստատութիւնը։ Օգոստոսի 19-ին առաջնորդը յայտնեց Հոգաբարձութեան, թէ Կաթողիկոսը իրան գրել է, թէ անձանօթ լինելով Ճանշեանցի անցեալ գործունէութեան՝ դժուարանում է նրան հաստատել կամ չհաստատել. ուստի առաջարկել է իրան, առաջնորդին, որ անձամբ ծանօթանալ Ճանշեանցի անցեալի հետ և տնօրինէ արժանը. սակայն ինքը, առաջնորդը, ի նկատ առնելով, որ տեսչի հաստատութիւնը կախուած է միայն Կաթողիկոսից՝ իրան իրաւունք չէ համարում կարգադրութիւն անել տեսչի մասին, այլ գրել է Կաթողիկոսին նպաստաւոր վկայութիւն Ճանշեանցի մասին և խնդրել է հաստատել Հոգաբարձութեան ընտրութիւնը։ Բայց այս հաստատութիւնը այնպէս էլ չստացուեց։

Պետք. Սիմէոնեանցի պաշտօնակատարութեան ժամանակ Դպրոցը շարունակեց իւր խաղաղ ընթացքը. Հոգաբարձութեան յանձնարարութեամբ մշակուեց ծրագիր, որ և սկսեց գործադրուել \*): Այսուհետեւ քննութիւններից յետոյ, տեսչի պաշտօնակատարի առաջարկութեամբ, որդեգիրներին Հոգաբարձութիւնը ամարանց ուղարկեց՝ Կրծանիս, որ և այնուհետև սովորութիւն դարձաւ: Նոյն անձը սեպտեմբերին զեկուցեց Հոգաբարձութեան, որ կարիք կայ Դպրոցում ունենալու սեփական պատրաստական դասարան (նախակրթարան): Հոգաբարձութիւնն ընդունեց այս առաջարկութիւնը, և հոկտեմբերի 1-ից բացուեց նախակրթարանը, որտեղ մի ամսուայ ընթացքում հաւաքուեց 55 աշակերտ: Այստեղ պարագմունքն առ ժամանակ առանց ծրագրի էր: Հոգաբարձութիւնը կազմեց մասնաժողով՝ պատրաստականի համար ծրագիր մշակելու և միևնույն ժամանակ յայտարարեց, որ մասնաւոր անձինք էլ, իբրև կոնկուրսի, առաջարկեն իւրանց ծրագիրները: Բայց դեռ ծրագիրների քըն-

\*.) Ծրագրի յանրամասնութիւնը աւելորդ ենք հայարում բերել այս համառօտ պատմութեան մէջ, քանի որ տեսակն չէ եղել Անուհետև էլ առաջարկուել և ընդունուել են բազմաթիւ ծրագիրներ, բայց այնու ամենայնիւ ծրագրի խնդիրը մինչև այսօր էլ դեռ բաց է:

նութեանը չհասած՝ Երկրորդ Հոգաբարձութեան ժամանակը լրացաւ, և նա դուքս եկաւ պաշո, տօնից։ Նրա գործերի մէջ լիշենք և այն, որ Դպրոցի համար տպագրեց Ստ. Նազարեանցի, կաղմած «Գործնական առաջնորդ ուսումնասիրութեան ռուս լեզուի ի պէտս հայկագեան մանուկների» ձեռնարկը, որին Մանկավարժական ժողովը հաւանութիւն էր տուել։

### ԻՊ.

Երրրդ Հոգաբարձութիւնը, որ հաստատուեց Կաթողիկոսի № 432 կոնդակով 1872 թ. հոկտ. 1-ին և պաշտօնի մտաւ հոկտեմբերի 26-ին՝ բաղկանում էր հետևեալ անդամներից —ՂԱ. քահ. Խարազեան, Մուշ. քահ. Տէր-ՂԱ. ոնդեան, Յովհ. Զիթախեան, Անտ. Ղորդանիան, Գէորգ. Աքիմեան, Յովհ. Ամիլիաղեան, Գր. Արծրունի, Գր. Խղմիրեան, Գր. Քուչարեան, Գր. Ջալալեան, Յունուկեան, Յովհ. Խատիսեան և իս. Պապով։ Կանդիդատներն էին — Մարկ. Ռոտինեան, Թուր. Զալալեան, Գուստ. Քալանթարեան և Պետր. Խանդամեան։

Նոր Հոգաբարձութիւնը գանձապահ, և տնտեսական կառավարիչ ընտրեց Ղ. ք. Խարազեանին, անշարժ կալքերի վերատեսուչ Մ.

ք. Տէր-Ղւռնդեանին և Յ. Ամիրաղեանին, իսկ  
զրադարանապետ՝ Գր. Արծրունուն, որ յետոյ ալոր  
պաշտօնից հրաժարուելով՝ զրադարանի կառա-  
վարութիւնը յանձնուեց նախ Մուշեղ քահա-  
նային և ապա տեսչին:

Ոյս Հոգաբարձութեան գործունէութեան  
մէջ լիշտակելու արժանի դիմաւոր կէտերն են  
ըստ տնտեսական մասին՝ հաշուապահութեան  
կանոնաւորումը և Դպրոցի համար նոր շինու-  
թիւն անելու փորձերը:

Դպրոցը, հաշուապահութեան տեսակէտից,  
մի բարդ և դժուար կառավարելի հիմնարկու-  
թիւն է, որ ունի մուտքի և ելքի բազմաթիւ  
յօդուածներ, օրինակ՝ մուտք—մոմավաճառու-  
թիւն, ուխտատեղիներ, անշարժ կայքերի կա-  
պալներ, թոշակներ, պատրաստ դրամների տո-  
կոսներ, գրքերի վաճառումից արդիւնքներ,  
նուիրատուութիւններ ևն: Ելք—ոռմիկներ, որ-  
դեգիրների մնունդ, զգեստ, լուսաւորութիւն,  
վառելք, դիւանական ծախսեր, թոշակներ,  
գրքերի տպագրութիւններ, դասական պիտոյք-  
ներ, գրադարանի և Փիզեքական կարինետի-  
ծախսեր, կայքերի նորոգութիւններ, ապահո-  
վագրութիւն, ժամոցաղբամ, ծխական ուսու-  
մարաններին նպաստ ևն: Եւ այս յօդուածնե-  
րից շատերը բաղկանում են դարձեալ մի քանի

կէտերից. օրինակ՝ ուխտատեղիների մուտքը՝  
1872-ին՝ 17 կէտից էր բաղկացած, կալուած-  
ների մուտքը՝ 28 կէտից. նորոգութիւնների-  
ծախսը նոյն թուին՝ 7 կէտից, նոյնպէս և  
ապահովագրութիւնը, ոռմիկները և այլն։ Այս-  
պիսի բարդ գործ կանոնաւորապէս կառավարե-  
լու համար անհրաժեշտ է օրինաւոր և ճիշտ-  
հաշուապահութիւն, որով կորուստների և սխալ-  
ների առաջն առնուի և մշտական կօնտրօլի  
հնարաւորութիւն լինի։ Հոգաբարձութիւնը նոր-  
սիստեմի հաշուապահութիւն և հաշուապահու-  
թեան նոր մատեաններ մտցրեց, նոյնպէս և  
րարեկարդեց Դպրոցի ել և մուտքը, չափաւո-  
րելով ծախսերը։ Նրա ժամանակ Յ. Եֆէն-  
դեանի երկու կտակալիատարները, կտակի շօրդ-  
յոդուածի զօրութեամբ, Հոգաբարձութեան կա-  
ռավարութեան յանձնեցին կտակուած գումար-  
ներից յօդուտ Դպրոցի հասանելիք մասը, որ  
կազմում էր այն ժամանակ 62,000 լուբլի։  
Դպրոցի շինութիւնը, որ գնուած էր 1854-  
ին, առաջ փոստի կայարան էր. այստեղ փոխա-  
դրուեց Դպրոցը Ներսէս կաթողիկոսի շինութիւ-  
նից (Կին դպրոց) և շարունակում է մնալ մինչեւ  
այժմ՝ թէեւ մեծամեծ անյարմարութիւններ-  
ունի, թէ ընդհանրապէս և թէ մանաւանդ  
լրբեւ դպրոցական շինութիւնն իեւ Մատ-

թէսս Կաթողիկոսը 1863 թուին № 455 կոնդակով թոյլ էր տուել Դպրոցի համար նոր շէնք կառուցանել Վանքի եկեղեցու մօտ գտնութղ դպրոցապատկան գետնի վրայ, բայց միջոցների պակասութեան պատճառով յիտաձգուած էր իրագործութիւնը: Նոր Հոգաբարձութիւնը որոշեց իրագործել այս միտքը և լրում տալ Դըպրոցի անհրաժեշտ պահանջին: Հազիւ Դպրոցի կառավարութիւնն իւր ձեռքն առած՝ նա անմիջապէս գործի ձեռնարկեց, յանձնարարելով իւր անդամներից մէկին՝ պատրաստել տալ նոր շինութեան մակարդակը: Մակարդակը 1873 թուի յունիսին պատրաստուեց ճարտարապետ Զալշցմանի ձեռքով, և նրա հաստատութիւնը նահանգական իշխանութեան կողմից՝ ստացուեց յաջորդ 1874 թուի օգոստոսին: Մնում էր մկսել շինութիւնը. բայց որովհետև այսպիսի մեծածախա շինութիւն անելու համար պատրաստ գումար չկար, ուստի Հոգաբարձութիւնը որոշեց իֆէնդեանի գումարից փոխ առնել 3,000 ըուբլի, հիմքը ձգել և բարձրացնել մինչև գետնի մակերեւոյթը և թողնել շարունակութիւնը ապագային, պեսի յարմար ժամանակի: Այս որոշումը սակայն գլուխ չեկաւ, երևի՝ որպէսի նկատուեց նրա անգործնականութիւնը. Ուրեմն Հոգաբարձութեան այս

Ճեռնարկութիւնը, բարի ցանկութեան և գրաւոր աշխատութեան սահմանից այս կողմը չանցաւ, և դարձեալ բաց մնաց Դպրոցի նոր շենութեան խնդիրը, որ այնուհետև էլ յաջորդող բոլոր Հոգաբարձութիւնների հոգսի և ջանքերի առարկան է եղել, բայց, ի մեծ վնաս Դպրոցի բարդաւաճման և վայելչութեան՝ մինչև այսօր էլ դեռ մնում է չիրագործուած:

Այս Հոգաբարձութեան ժամանակ 1876-ին լրացաւ Դպրոցի տպարանի հինգամեայ կապալը, և որովհետև Հ. Խնդիրանեանցը չկամեցաւ նորից կապալով առնել և ոչ գնել՝ ուստի Հոգաբարձութիւնը որոշեց նրան փակել: Մի քանի տարի փակուած մնալուց, փոշուուելուց ու ժանգոտուելուց յետոյ՝ մնացորդ պէտքական մասերը ծախուեցին Մ. Ռոտինեանցի տպարանին: Այսպէսով վերջացաւ Ներսիսեան Դպրոցի տպարանը, որ սկիզբ էր առել Ամստերդամում դեռ 1662 թուին և Թիֆլիս տեղափոխուելով իբրև առաջին հայ տպարան՝ մեծ ծառայութիւն էր մատուցել տպագրական գործին իւր աւելի քան յիսնամեալ գոյութեան ընթացքում Թիֆլիսում:

Դպրոցի ելևմուտքի մէջ այս Հոգաբարձութեան չորսամեայ կառավարութեան շրջանում զգալի փոփոխութիւն չեղաւ, եթէ չհաշուենք Էֆէնդեանի գումարի Դպրոցին յան-

ձնուելը, որի տոկոսները առաջ կտակակատար-  
ներն էին գործ դնում որոշուած նպատակով,  
իսկ այնուհետև այս պարտականութիւնը սկը-  
սեց կատարել Հոգաբարձութիւնը: 1875 թուին  
մուտք եղել է 32,600 ր., ելք՝ 29,400 ր.:  
Պէտք է միայն նկատել, որ մուտքի յաւելումը,  
ինչպէս և առաջուայ տարիներում, ոչ թէ  
ստացուել է այդ տարուայ իսկական եկամուտ-  
ների յաւելումից, այլ նախընթաց տարուայ  
մնացորդից. 1875 թուի իսկական մուտքն եղել  
է 28,300 ր., այնպէս որ Դպրոցը դէֆիցիտ է  
ունեցել այդ տարին:

ԱԴ.

Ուսումնական մասի վերաբերութեամբ Եր-  
րորդ Հոգաբարձութեան կարգադրութիւնների  
մէջ առաջին տեղը բռնում է տեսչական խնդիրը:  
Հոգաբարձութիւնը նոր պաշտօնի մտնե-  
լիս, 1872 հոկտեմբերին՝ տեսչի պաշտօնակա-  
տար էր Պետր. Սիմէոնեանցը, որ մնաց նոյն  
պաշտօնում դեռ էլի աւելի քան մի տարի:  
1873 թ. գեկտեմբերին Հոգաբարձութիւնը, ի  
նկատ առնելով, որ ծխական ուսումնարանները  
հետզհետէ բազմանում են և կարիք ունին  
պատրաստուած ուսուցիչների՝ որոշեց ընտրել

Հաստատուն տեսուչ, որ կարողանայ Դպրոցում  
ուսուցիչներ պատրաստել նրանց համար։ Այս  
ոկզբունքն ընդունուելուց յետով՝ փակ քուէար-  
կութիւն եղաւ Պետր. Սիմէռնեանցի համար,  
որ ընտրուեց. ապա բաց քուէարկութեամբ,  
8 ձայնով 1-ի դէմ, տեսուչ ընտրուեց Անդրէաս  
Արծրունին։ Որոշուեց այս քուէարկութեան հե-  
տևանքն յայտնել Վեհափառ կաժողիկոսին և  
խնդրել նրա հաստատութիւնը։ Այս ընտրու-  
թիւնից մի քանի օր յետով Պետր. Սիմէռն-  
եանցը հրաժարական տուեց տեսչի պաշտօնա-  
կատարութիւնից, և ժամանակաւոր պաշտօնա-  
կատար ընտրուեց Հոգաբարձու Ռուբէն Հասան-  
Զալալեանցը։

Առաջնորդը, որ ներկայ չէր եղել այս ըն-  
տրութեան՝ դժգոհ մնաց նրանից, և չոգաբար-  
ձութիւնը ճարահատեալ համաձայնեցաւ նորից  
ընտրութիւն կատարելու՝ առաջնորդ-նախագա-  
հի ներկայութեամբ։ Ընտրութեան նիստը տե-  
ղի ունեցաւ 1874 թուի յունվարի 12-ին։ Մա-  
կար արքեպիսկոպոսը եկաւ ժողով՝ հետը բե-  
րելով հայրապետական կոնդակ՝ որով իրան հրա-  
հանգ էր տրուտ տեսուչ ընտրելու մասին, և  
յարտարարեց, թէ ինքը եկել է ժողով ոչ իբրև  
նախագահ չոգաբարձութեան, այլ իբրև վի-  
ճակի առաջնորդ, և համաձայն է տեսչի ըն-

տրութիւն կատարելու քուէարկութեամբ, միայն  
այն պայմանով, որ հոգաբարձուները խոստանան  
չընտրել Անդր. Արծրունուն, աւելցնելով թէ  
«Անդր. Արծրունի ըստ ուսման և բարոյակա-  
նութեան արժանաւոր անձն է, սակայն ինքն  
չկարէ համաձայնել առ ընտրութիւն նորա ըստ  
յայտնի ինքեան պատճառանաց»։ Հոգաբարձու-  
թիւնը, առանց ընտրութիւն կատարելու, կաղ-  
մեց այս մասին օրագիր «ի տեղեկութիւն յա-  
պագային» և ստորագրելով օրագիրը՝ ցրուեց<sup>1)</sup>։

Այս միջադէպից յետոյ ժամանակաւոր պաշ-  
տօնակատար Ռ. Հասան-Ջալալեանցը հրաժար-  
ուեց. նշանակուեցին Ղ. ք. Խարազեանց և Գ.  
Աքիմեանց, իբրև երկու հերթակալներ՝ վերա-  
հասու լինելու ուսումնական մասին ցնոր տնօ-  
րէնութիւն։

Տեսչի ընտրութիւնը այսպէս առ կախ մը-  
նաց դեռ եօթն ամիս էլ, և միայն օդոստոսի  
16-ին Հոգաբարձութիւնն համաձայնութեան

---

1) Անդր. Արծրունու ընտրութեան դէմ հոգեւոր իշ-  
խանութեան բռնած այս ընթացքը բացատրելու համար  
կարեւոր է յիշել, որ „Մշակ“ լրագիրը, որի խմբագիր Գր.  
Արծրունին անդամ էր Հոգաբարձութեան սկսել էր ար-  
դէն իւր խիստ քննադատութիւնները եկեղեցական վար-  
չութեան մէջ տիրող կարգերի դէմ, և „Արարատ“ ամսա-  
գիրը յարձակւում էր նրա խմբագիր վրայ՝ իբրև ազգի և  
եկեղեցու թշնամու վրայ։

եկաւ և ընտրեց Սեդր. Մանդինեանին, որ և  
տեսչական պաշտօնի մէջ մտաւ սեպտեմբերի  
մէկից և հաստատուեց պաշտօնում Կաթողիկո-  
սի կոնդակով նոյն ամսի 19-ին:

Թէպէտ տեսչական հարցի կրիզիսը անցաւ,  
բայց յունվարի 12-ի լիշտակելի նիստի տպա-  
տրութիւնը չանցաւ, և շուտով ներկայացան  
առիթներ, որոնք լարեցին յարաբերութիւնը չո-  
դաբարձութեան անդամների մէջ, սրա մի մա-  
սի և տեսչի մէջ, սրա և աշակերտների մէջ:  
Դպրոցի ներքին խաղաղութիւնը վրդովուեց և  
ծագեցին անկարգութիւններ:

Պաշտօնի մէջ մտնելուց հազիւ մի ամլս  
անցած՝ նոր տեսուչը բողոքեց չոգաբարձութեանը  
մի ուսուցչի դէմ, թէ չէ կամենում կարգա-  
պահութեան ենթարկուել և տեսչի հեղինակու-  
թիւնը ճանաչել: Երկար վարանումներից յետոյ  
այս ուսուցչը արձակուեց: Այնուհետև, 1875  
թ. սկզբներին երկու հոգաբարձու (Մուշեղ քա-  
հանան և Գր. Աքրծրունին) գրաւոր ընդարձակ  
գեկուցումներ տուին չոգաբարձութեան, որոնց  
մէջ ցոյց էին տալիս բազմաթիւ պակասութիւններ  
տեսչի մէջ և պահանջում էին նրան արձակել:  
Այս գեկուցումները մնացին առանց հետևան-  
քի: — Դ. դասարանի աշակերտները գրաւոր բո-  
ղոք ներկայացրին տեսչի դէմ. — սրա հետևանքն

եղաւ 14 աշակերտի արձակուելը Թ. դասարանից: Դապրոցի միւս բարձր դասարաններում էլ խլրտումներ սկսուեցին, որոնց առաջն առնուեց խիստ միջոցներով: Հոգաբարձութեան այն մասը, որ գործերն այսպէս էր կարգադրում մի անգամ, մայիսի 1-ին, առանց անդամների օրինական թուի, մի վերակացու արձակեց պաշտօնից և մի ուրիշ անձ նրա տեղ նշանակից: Միւս հոգաբարձուները, որոնք ներկայ չէին այդ նիստին՝ լեռոյ ստորագրեցին օրագրի տակ լրանց առանձին կարծիքը՝ թէ նիստն ապօրինի է և վճիռն անվաւեր: Այսուհետև մի քանիսը դադարեցին ալլևս նիստերն յաճախելուց: Յունիսի 6-ի օրագրի տակ Մուշեղ քահանան գրում է. «Հոգաբարձութիւնը կալանում է երեք անդամներիդ մէջ» (այսինքն Ղևոնդ ք. Խարազեանի, Գ. Աքիմեանի և ի. Պոպովի, ի հարկէ նախադահի հետ միասին): «Եթէ դուք կարողանում էք ամենածանր հարցեր վճռել, այն է կարճել քննութիւնները, արձակել Դապրոցը, ուրեմն էլ բնչ հարկաւոր է այսպէս թեթև հարցի վճիռը» (այսինքն հերթակալ հոգաբարձու նշանակելու) «մաս ածել դռնէ դուռ»:

Քահանայ-հոգաբարձուի զեկուցումը տեսչի դէմ և այս նկատողութիւնը հոգաբարձութեան ապօրինի գործառնութեան դէմ՝ անպատճ

չմնացին: Յունիսի 19-ի նիստում կարդացուեց կոնսիստորի հրամանը, թէ կոնսիստորը Մուշեղ քահանային քննութեան է ենթարկել՝ «ի մասին տալոյ նմա կարծիս իբրու զանյարմարութենէ և, զանընդունակութենէ տեսչի Թըպրոցին և խրատելոյ զաշակերտս Պ. դասարանի՝ անհնագանդ կալոյ ուսումնական բարեկարգութեան և չտալոյ զհարցաքննութիւն և յետ այնորիկ խուվութիւն և աղմուկ յարուցանելոյ ընդդէմ հոգեոր կառավարութեան», և հրամայում է «դադարեցուցանել զնա ի քահանայագործութենէ և յանդամակցութենէ Դպրոցիս ժամանակաւրապէս»: Հոգաբարձութիւնը կարգադրում է այս առկիթով. «ընդունել զհրաման կոնսիստորին՝ իբրև զհրաման հոգեոր իշխանութեան՝ տուեալ ազգային հոգեոր Դպրոցիս վերաբերութեամբ ըստ հոգեոր մասինն, և համարել զադարեցեալ յանդամութենէ Դպրոցիս զՄուշեղ քահանայն Տէր-Ղևոնդեան, ցտնօրէնութիւն ծայրագոյն հոգեոր իշխանութեան»: Այս վճիռն ստորագրել են Մակար արքեպիսկոպոսը, որ Հոգաբարձութեան նախագահն էր և միւնոյն ժամանակ կոնսիստորի ատենապետը և լիշեալ հրամանը արձակողը, Ղ. ք. Խարագեան, Գ. Աքիմեան, Ի. Պոպով և Յ. ք. Սուզանաձեան, որ տեսչի բացակայութեան պատ-

ճառով նշանակուած էր ժամանակաւոր պաշտօնակատար: Բարեբախտաբար Վեհ. Կաթողիկոսը ճանաչեց ժողովրդի ընտրած և բարձրագոյն հոգևոր իշխանութեան հաստատած հոգաբարձուի կոչման անբռնաբարելիութիւնը, ուստի հրամայեց Աինօդին գրել Հոգաբարձութեանը՝ թողնել Մուշեղ քահանային անդամակցութեան պաշտօնի մէջ (Օրագիր 9 յունվ. 1876):

Դպրոցի ներքին դրութիւնը հետզհետէ խաղաղուեց գլխաւորապէս այն պատճառով, որ տիրող կարգերից անբաւական հոգաբարձուները հետզհետէ հեռացան: Քիչ աղդեցութիւն չունեցաւ կրքերի հանդարտման վրայ և Գարիել արքեպիսկոպոս Այվազեանը, որ Մակար արքեպիսկոպոսի փոխարէն նշանակուելով Վրաստանի և Իմէրէթի թեմի առաջնորդ՝ դարձաւ նաև նախագահ Հոգաբարձութեան: Երբ նա առաջին անգամ նախագահեց (22 ապրիլի, 1876)՝ հեռացած հոգաբարձուներն ևս պարտք համարեցին նիստի գալ: Նրա միջնորդութեան շնորհիւ Հոգաբարձութիւնը զիջաւ՝ Թ. դասարանից արձակուած աշակերտներին վկայական տալ՝ «շատ լաւ» վարքով: Մրանից քիչ յետոց էլ լուծուեց Երրորդ Հոգաբարձութիւնը, որի պաշտօնավարութեան ժամանակը յրացել էր:

Այս քառամեակում Դալրոցը լսուածադիմեց  
մի դասարանի և աշակերտների թուփի աւելա-  
նալով և ուսուցման լաջողութեամբ։ Արդէն  
նախորդ Հոգաբարձութիւնը որոշել էր բանալ  
պատրաստական դասարան (տ. եր. 140)։ Ներ-  
կայ Հոգաբարձութիւնը իրագործեց այդ միտքը։  
Բացուելիք դասարանի համար ներկայացրուե-  
ցին ծրագիրներ՝ Մանկավարժական ժողովի,  
Հոգաբարձական մասնաժողովի և մասնաւոր ան-  
ձերի կողմից։ Համեմատական քննութեամբ՝  
լաւագոյն ճանաչուեց Վ. Շահվերդեանի առա-  
ջարկածը, որ պարունակում էր մանրամասնօրէն  
թէ՛ աւանդուելիք առարկաները և թէ դասա-  
տուութեան եղանակն ըստ նոր մէթոդի։ Ուստի  
Հոգաբարձութիւնը Վ. Շահվերդեանին 1873 թ.  
փետրվարին հրաւիրեց ուսուցիչ պատրաստական-  
ների համար, որոնք արդէն բացուած էին նա-  
խորդ տարուայ հոկտեմբերից առանց որոշ ծրա-  
զրի։ Ճուտով պատրաստական դասարանը երկու,  
ապա երեք բաժանմունք ունեցաւ, որոնց մէջ  
սովորում էին մինչև 80 երեխալ։

Միւս դասարաններում էլ աշակերտներին  
թիւը շատացաւ, (բոլորի մէջ միջին թուով յօտ  
150 աշակերտ), որոնց առաջադիմութիւնը, ի  
նկատ առնելով փոխադրուողների տոկոսը՝ նախ-  
ընթաց տարիներից բարձրացաւ. (միջին թուով

տարեկան փոխադրուել են 71 աշակերտ, կամ  
47%:

Զ. դասարան բանալու համար Պետր. Ալ-  
մէռնեանցը իւր պաշտօնակատարութեան ժա-  
մանակ նորից հարց յարուցեց, յայտնելով Հոգա-  
բարձութեանը, թէ ուսուցիչները խոստացել են  
ձրի պարապել այդ դասարանում եթէ բացուի:  
Սակայն Հոգաբարձութիւնը այս անգամ էլ այդ  
առաջարկութիւնը չընդունեց միևնույն պատճա-  
ռարանութեամբ՝ որով բացասել էր Ստ. Նա-  
զարեանցին:

Այս քառամեակում Թպրոցը իւր միջոցնե-  
րով տպագրեց Վ. Շահնվէրդեանի «Նկատողա-  
կան ուսումն» և Ն. Տէր-Ղևոնդեանի «Մայրե-  
նի լեզուի» Ա. և Բ. մասերը, (Էֆէնդեանի գու-  
մարով, համաձայն կտակի 18-րդ յօդուածին):

### ին.

Չորրորդ Հոգաբարձութիւնը հաստատուեց  
1876 թ. մայիսի 25-ին կաթողիկոսի № 167  
կոնդակով և պաշտօնի մէջ մտաւ նոյն ամսի  
31-ին: Նա բաղկացած էր հետեւեալ անդամ-  
ներից.—Յար. Մարկոսեան, Աբգ. Յովհաննի-  
սեան, Գ. Եւանգուլեան, Խո. Պոպով, Մարկ.  
Գոլուխանեան, Գր. Քոչարեան, Պլ. Գուրգէն-

բէզեան, Պօղ. Ղամբարեան, Սող. Մելիք-Մեհրաբեան, Խաչ. Քալանթարեան, Գ. Աքիմեան, Գասպ. Նահապետեան. որոնց կանդիտատներն էին Ղ. քահ. Խարազեանց, Գաբր. Սունդուկեան և Գաբր. Հախվերդեան:

Հոգաբարձութեան նախադահն էր Գաբրիէլ արքեպիսկոպոս Արվազեանը:

Դպրոցական գրքերի կառավարութեան մէջ մտնելով՝ նոր Հոգաբարձութիւնն, ըստ սովորութեան, կազմեց մասնաժողով՝ անշարժ կալուածների և Գալուոցի տնտեսական դրութեան ծանօթանալու համար. վերաստուգեց գանձարանի հաշիւները, որոնք ուղիղ գտնելով՝ գանձապահ թողեց դարձեալ Ղ. ք. Խարազեանին: Նոյնպէս տեսչին յանձնարարեց՝ Մանկավարժական ժողովի համահաճ խորհրդով զեկուցում տալ ուսումնական դրութեան մասին:

Նրա չորսամեայ կառավարութեան միջոցին նշանակելու են հետևեալ կարգադրութիւններն ու գործերը:

Կազմուեց կանոնադրութիւն՝ որդեգիրներ և թոշակաւորներ ընտրելու մասին. (1876, օգոստոս):

Նախադահ Գաբրիէլ արքեպիսկոպոսի առաջարկութեամբ՝ որոշուեց փետրվարի 14-ին, (Տեառն ընդ առաջ-ի տօնին) երջանկայիշատակ

Հիմնադրի մահուան տարեղարձի յաջորդ օրը, ամեն տարի հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել Վանքի եկեղեցում Թաղրոցի Հիմնադրի ներսէս Կաթողիկոսի և բոլոր բարերարների համար. նոյն օրը կատարել և Թաղրոցի տարեկան ակտը. (1879, փետրվար):

Տեսչի պաշտօնակատուարի առաջարկութեամբ՝ ուսուցիչների դասագինն աւելացրուեց— առաջին 12 դասի համար՝ իւրաքանչիւր դասին տարեկան 60 ր., յաջորդ դասերին համար՝ 50 ր., բացի գրութեան, գծագրութեան, նըկարչութեան և ձայնագրութեան դասերից, որոնց դասագինը ըստ առաջնոյն մնաց 50 ր. (1879, յունիս):

Նոր շինութիւն անելու խնդիրը նոյնպէս արծարծուեց, որի համար և ընտրուեց Հոգաբարձութեան անդամներից յատուկ մասնաժողով (1876, նոյեմբեր). բայց այս անդամ էլ չիրագործուեց այդ միտքը, և Հոգաբարձութիւնը, չկամենալով շինութեան յատկացուած տեղը պարապ. թողնել առանց արդիւնքի՝ որոշեց ժամանակաւոր խանութներ շինել տախտակից. (1879, նոյեմբեր):

Ելեմուտքի կողմից՝ Թաղրոցը մի քայլ էլ առաջ գնաց այս քառամեակում: Եկամուտի աղբիւրների, մասնաւորապէս կալուածների կա-

պալի աւելանալով, ինչպէս և նուիրաբերութիւններ ստացուելով՝ տարեկան զուտ մուտքը հասաւ մինչև 35,900 ր. (1879). սորան համապատասխան մեծացաւ և ծախսը, որ հետեւնք էր դասարանների աւելանալուն և դասագնի բարձրանալուն։ Նուիրաբերութիւնների մէջ լիշելու է առանձնապէս 4,000 ր. գումարը, որը նախկին հոգաբարձու Յ. Զիթախեանը հանդանակելով Թիֆլիսի քաղաքացոց մէջ՝ ներկայացրեց Հոգաբարձութեան այն պայմանով, որ նրա տոկոսով մի որդեգիր պահուի յանուն նախկին առաջնորդ Մակար արքեպիսկոպոսի (1877, նոյեմբեր)։

## ի Զ.

Ուսումնական մասում Դպրոցը այս քառամեակում մեծ առաջադիմութիւն արաւ, թէ դասաւանդութեան առարկաների ընդլայնուելով ու կանոնաւորուելով և թէ դասարաններ աւելանալով։

Տեսուչ Ս. Մանդինեանը 1876-ի օգոստոսին ներկայացրեց Հոգաբարձութեան իւր կազմած ուսման ծրագիրը, իբրև նախադիմ։ Հոգաբարձութիւնը ծրագրի էական կէտերին համաձայնելով՝ առաջարկեց որ տեսուչը Մանկավար-

ժական ժողովի հետ միասին մանրամասն մշակէ  
Դպրոցի ուսման ծրագիրը և առաջարկէ իւր  
Հաստատութեան։ Այնուհետև Մանկավարժա-  
կան ժողովը, տեսչի նախադահութեամբ, երկար  
դրազգական ալլ լուրջ խնդրով, և 1878-ի փե-  
տրվարին ներկայացրեց Հոգաբարձութեան իւր  
աշխատութեան հետևանքը. ոակալն վերջինս  
չընդունուեց, որովհետև, Հոգաբարձութեան հա-  
մոզմամբ, դժուար էր նրան գործադրել՝ համա-  
պատասխան ուսուցիչներ ու ձեռնարկներ չկ-  
նելու պատճառով։ Հոգաբարձութիւնը իւր կող-  
մից տուեց հրահանգներ՝ ծրագիր մշակելու,  
նախորոշելով դասարանների և դասաւանդուելիք  
առարկաների թիւը։ Նորից սկսուեց աշխատան-  
քը, և 1880 թ. մայիսին նոր ընտրուած տե-  
սուչ Արշ. Նահապետեանը Հոգաբարձութեան  
ներկայացրեց նախորդ տեսչի օրով մշակուած և  
կազմուած ծրագիրը, որ և ընդունուեց։ Նոյն-  
պէս երեք անգամ (1878, 79, 80 թ.) մշա-  
կուեցին կարգեր՝ տարեկան հարցաքննութիւն-  
ներ կատարելու։ Կազմուեցին դասագրքերի ցու-  
ցակներ, Մանկավարժական ժողովի հաւանու-  
թեամբ, որոնք հաստատուեցին Հոգաբարձու-  
թիւնից։ Կազմուեց գրադարանի ցուցակ ևն։  
Առ հասարակ նկատում է երկու տեսուչների և  
Մանկավարժական ժողովի կողմից անընդհատ

գործունէութիւն՝ Թպրոցի ուսումնառութեան  
դրութիւնը բարձրացնելու և բարեկարգելու:

1876-թուին բացուեց Երկրորդ դասարանի  
զուգընթացը. 1877-ին բացուեց վերջապէս Զ.  
դասարանը, որ նախկին երկու Հոգաբարձու-  
թիւնների օրերով չէր յաջողուել. 1878-ին բաց-  
ուեց նաև ի. դասարան—բոլորը տեսուչ Ա.  
Մանդինեանի առաջարկութեամբ և ծրագրով:  
ի. դասարանը յատուկ նպատակ ունէր ուսուց-  
չացուներ պատրաստելու, ուստի նրանում ան-  
ցնում էին գլխաւորապէս մանկավարժութեան  
նպաստող առարկաներ: Աշակերտները Ս. Ման-  
դինեանի ղեկավարութեամբ փորձառական դա-  
սեր էին տալիս պատրաստականներում: Այս կեր-  
պով Թպրոցը 1880 թուին ունէր երեք պա-  
տրաստական դասարան—ստորին, միջին և վե-  
րին, և եօթն դպրոցական դասարան—Ա—ի,  
որոնցից Ա. և Բ. դասարանները ունէին զուգ-  
ընթացներ. ուրեմն ընդ ամենը 12 դասարան,  
որոնց մէջ ուսանում էին 376 աշակերտ: Տա-  
րեկան հարցաքննութեան ժամանակ սրանցից  
փոխազգուեցին կամ աւարտեցին 99 ( $26\%$ ),  
վերաքննութիւն ստացան 122 ( $32,5\%$ ), մնա-  
ցին դասարանում 122 ( $32,5\%$ ) և արձակուե-  
ցին 33 ( $9\%$ ): Վերաքննուողների թիւը փո-  
խաղուողների հետ հաշուելով, (ինչպէս ալ-

ուած է նախընթաց տարիների համար, հետևելով ուսումնական վարչութիւնների սիստեմին), կստանանք առաջադէմների 58,<sub>5</sub>%, ընդդէմ 41,<sub>5</sub>% անառաջադէմների:

Տեսչական անխուսափելի փոփոխութիւնը այս հոգաբարձութեան ժամանակ էլ տեղի ունեցաւ, չնայելով հոգաբարձութեան և տեսչի մէջ եղած համերաշխութեանը: 1878-ին յունիսին Մանկավարժական ժողովում տարածայնութիւն ծագեց. մի քանի ուսուցիչներ, դրժգոհն լինելով Ս. Մանդինեանի մի վարմունքից՝ — (մի թոյլ աշակերտի բաւարար թուանշան էր դրել և փոխադրել, հակառակ առարկայի ուսուցչի վատ թուանշանին և Մանկավարժական ժողովի կամքին) — դուրս եկան ժողովից: Նրանց վրայ գանգատուեց տեսուչը հոգաբարձութեան. նրանք բացատրեցին իրանց ժողովից հեռանալու պատճառը: Հոգաբարձութիւնը նոցա լիշեցրեց իրանց պարտականութիւնը և յորդորեց, որ շարունակեն ժողովներին յաճախել, միևնույն ժամանակ բացատրելով տեսչի, իբրև Հոգաբարձութեան անդամի, իրաւունքները և յալտնելով նորան իւր վստահութիւնը: Բայց այս միջոցը չօգնեց: Յուլիսի 19-ին Ս. Մանդինեան զեկուցեց Հոգաբարձութեանը, թէ մի քանի ուսուցիչներ անհամապատասխան են իրանց կոչ-

մանը և արգելք են առաջադիմութեան։ Պէտք  
է նրանց արձակել, այլապէս ինքը հրաժար-  
ում է։ Հոգաբարձութիւնն այս անգամ դրժ-  
ուարացաւ արձակել մի խումբ երկար տարիներ  
ծառայող ուսուցիչներ, մանաւանդ որ տեսուչը  
նրանց դէմ առաջ դժգոհութիւն չէր յայտնում,  
ուստի ընդունեց Ս. Մանդինեանի հրաժարա-  
կանը։ Միայն առաջարկեց նորան, որ մնայ  
Դպրոցում իբրև ուսուցիչ մանկավարժութեան  
և ղեկավար է. դասարանցոց փորձառական  
գասերին, նոյն նախկին ռոճկով, և Ս. Ման-  
դինեանը համաձայնեց։ Ասկայն շուտով (1879  
յունվար), նա հրաժարուեց այս պաշտօնից էլ։  
Նրա հեռանալով փակուեց և է. դասարանը,  
որի գլխաւոր ուսուցիչը և ղեկավարն էր նա։

Ուսումնական գործի կառավարութիւնը  
ժամակաւորապէս յանձնուեց հերթակալ հոգա-  
բարձուներին։ Ապա 1878-ի հոկտեմբերին տեսչի  
պաշտօնակատար ընտրուեց Արշակ Նահապե-  
տեանը, որ մի տարուայ պաշտօնավարութեան  
յաջող փորձից լետով, 1880 թուի փետրվարին  
ընտրուեց տեսուչ և հաստատուեց այս պաշտօ-  
նում մարտի 19-ին, կաթողիկոսի № 119 կոն-  
դակով։ Նրա գործունէութիւնը իբրև պաշտօ-  
նակատար և տեսուչ Զորբորդ Հոգաբարձու-  
թեան ժամանակ՝ համառօտ լիշտուեց վերևում։

Ա.

Հիմքերութ Հոգաբարձութիւնը հաստատուեց  
1880 թ. դեկտեմբերի 5-ին կաթողիկոսական  
№ 536 կոնդակով և պաշտօնի մէջ մտաւ նոյն  
ամսի 17-ին։ Այս Հոգաբարձութեան անդամ-  
ներն էին—Յովկ. Զիթախեանց, իշխ. Կոստ.  
Բէհըուղեանց, իշխ. Նապ. Ամատունի, Պլ. Գուր-  
գէնը գեան, Դաւ. Ղորղանեան, Աբգ. Յովկան-  
նիսեան, Գէորգ Եւանգուլեան, Գէորգ Աքի-  
մեան, Աւ. Բաբայեան, Մարկ. Ռոտինեան, Պող.  
Ղամբարեան, Յովկ. Զիգիանեան. Խոկ կանդի-  
դատներ՝ Յար. Մարկոսեան, Աղ. Մելիք-Ազար-  
եանց, Ն. Խոսրովեանց և Վ. Մութաֆեանց։  
Հոգաբարձութեան նախագահն էր սկզբում  
Գաբրիէլ արքեպիսկոպոս Ալվագեանը, իսկ նրա  
վախճանուելուց յետով թեմակալ առաջնորդ նը-  
շանակուեց Արքստակիէս եպիսկոպոս Սեդրակեա-  
նը, որ և իրու նախագահ Հոգաբարձութեան  
առաջին անգամ նիստի եկաւ 1883 թ. փետր-  
վարի 28-ին։

Այս Հոգաբարձութեան ժամանակ կատար-  
ուած գործերից լիշելու արժանի են ըստ տըն-  
տեսական մասին հետևեալները։  
Գանձապահութեան պաշտօնը, որ առաջ

կատարում էր Հոգաբարձութեան անդամ Ղև.  
Ք. Խարազեանցը և ներկայ Հոգաբարձութեան  
ժամանակ շարունակեց մի քանի ամիս՝ Հոգա-  
բարձութիւնը առաւ նրանից, և որովհետև ան-  
դամների միջից ոչ ոք չէր յօժարում վարել  
այս պաշտօնը՝ ուստի որոշեցին հերթով կա-  
տարել, այնպէս որ ամեն մի Հոգաբարձու իւր  
հերթակալութեան ամսին լինէր նաև գանձա-  
պահ (1881, յունիս): Այս կարգը շարունակուեց  
երկու տարի ու կէս, և Հոգաբարձուները համոզ-  
ուեցին, որ շատ անյարմարութիւններ ունի,  
Հաշիւների բարդութեան պատճառով: 1883 թ.  
դեկտեմբերին որոշուեց այս կարգը վերացնել և  
հաստատուն գանձապահ ունենալ, և որովհետև  
Հոգաբարձուներից դարձեալ ոչ ոք յանձն չա-  
ռաւ այս պաշտօնը՝ ուստի հարկ եղաւ դրսից  
վարձել գանձապահ, որ և այնուհետև շարու-  
նակուեց մինչեւ ալսօր: Վարձուած առաջին  
գանձապահն եղաւ Թադէոս քահ. Խոջաէնիաթ-  
եան, որին յանձնուեց նոյնպէս ծախսաբարու-  
թեան և մուտքի աղբիւրների վերակացութեան  
պարտաւորութիւնը, առանձին հրահանգով:  
Սակայն այս երկուս ու կէս տարուայ հերթով  
գանձապահութիւնը անհանելի հետևանքներ  
ունեցաւ, որոնց պատճառով մի քանի տարի

գրագրութիւններ և հաշիւնների ստուգութիւններ ու քննութիւններ կատարուեցին:

Դպրոցի նոր շինութեան խնդիրն էլ արծարձեց Հոգաբարձութիւնը և ընտրեց մասնաժողով՝ այս խնդրով զբաղուելու: Վանքի մօտի դպրոցապատկան գետինը անյարմար համարուելով՝ որոշուեց գնել Դպրոցի հարևան շինութիւնը և Դպրոցի շինութեան հետ կցելով ընդարձակել: Սակայն վաճառողները իրանց յատնած պայմանին չմնացին, ուստի Հոգաբարձութիւնը դադարեցրեց այս մասին պայմանախօսութիւնը: Սրանով էլ վերջացաւ շինութեան հարցը, առանց այս անդամ էլ լուծուելու. այսինչ Դպրոցի հետզհետէ զարգանալը և աշակերտների ամելանալը ամելի ևս ստիպողական էին դարձնում մեծ և յարմար դպրոցական շինութեան պէտքը: Այնքան նեղուածք էր Դպրոցի շէնքը, որ Հոգաբարձութիւնն ստիպուած եղաւ պատրաստական դասարանները տեղափոխել հին (Ներսիսաշէն) դպրոցի վերնայարկը (1883, դեկտեմբեր) և որդեգիրների նընջարանի ու հիւանդանոցի համար վարձել Դպրոցի դիմաց առանձին բնակարան (1885, սեպտեմբեր):

Ուստիցների միջնորդութեամբ՝ հաստատուեց և սկսեց գործադրուել ուսուցչաց Փո-

Խատու-խնայողական Գանձարանի կանոնադրութիւնը (1881, մարտ), որ դեռ 1876-ին մշակուած և առաջարկուած էր Հոգաբարձութեան հաստատութեանը: Այս գանձարանը պահպանում է իր գոյութիւնը մինչեւ այսօր:

Դպրոցի տարեկան ելեմուտքը այս Հոգաբարձութեան վեցամեայ կառավարութեան ժամանակ զգալի կերպով ընդարձակուեց: 1881 թուի նախահաշուով նախատեսում էր մուտք՝ 48,000 ր., ծախք՝ 46,800 ր., 1882-ին մուտք՝ 60,700 ր., ծախք՝ 51,900 ր., 1884-ին մուտք՝ 54,300 ր., ծախք՝ 58,900 ր., 1886-ին մուտք՝ 44,300 ր., ծախք՝ 45,400 ր.:

Այս վեց տարուայ ընթացքում Դպրոցը տպագրեց Բահադրեանի Համառօտ Հոգեբանութիւն և ընդհանուր մեթոդիկան, նոյն հեղինակի Ալբենարանը (վիմագրութեամբ). Դաւիդիվի Երկրաչափութիւնը, թարգմանութիւն Վ. Հասան-Զալալեանի, և Եզն. քահանայ Երզնկեանի Պատարագի արարողութեան և եկեղեցական այլ շարականների ժողովածուն:

Երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթողիկոսի թաղմանը (1882, դեկտ.) և նրա յաջորդ հոգելոյս Մակար Կաթողիկոսի օձմանը (1885, նոյեմբեր) Հոգաբարձութիւնը պատշաճաւոր պատ-

գամաւորութիւններ ուղարկեց, իւր անդամներից և Դպրոցի տեսչից բաղկացած:

Այս վեցամեակում տեսչի չորս փոփոխութիւննեղաւ, չհաշուելով ժամանակաւոր պաշտօնակատարութիւնները, որ անտարակոյս Դրապրոցի կարգ ու կանոնի վրայ վատ ազդեցութիւն պէտք է ունենար: 1881-ի օգոստոսին Արշ, Նահապետեանը, հրաւերուելով Շեմալիսնի տեսուչ՝ թողեց Դպրոցը, և Հոգաբարձութիւնը ուսումնական կառավարութիւնը ժամանակաւորապէս լանձնեց. Ուսուցչական ժողովին, մինչեւ այս պաշտօնին, լարմար անձ գտնելը: Սակայն Ուսուցչական ժողովը նոյն թուի հոկտեմբերին քուէարկութեամբ տեսչի պաշտօնակատար ընտրեց իւր անդամներից Պետր. Արմեոնեանցին: Հոգաբարձութիւնը այս ընտրութիւնը հաստատեց, և Արմեոնեանցը սկսեց վարել տեսչական պաշտօնը մօտ տարի ու. կէս ժամանակ: 1883-ի մարտին Դպրոցում բարձր դասարանների աշակերտների մէջ խռովութիւններ ծագեցին, որոնք մօտ երկու ամիս տևեցին: Կարգապահութեան դէմ մեղանչող աշակերտների մօքայ չաղգեց Մանկավարժական ժողովի յորդորը. նրանք չէին ուզում ոչ դասերին լաճախել, ոչ քննութիւն տալ: Տեսչի պաշտօնակատարը Հոգաբարձութեան զեկուցեց, թէ ուսուցիչներից եղել են

աշակերտներին դրդողներ։ Հոգաբարձութիւնը քննութեց մի մասնաժողով, առաջնորդի նախագահութեամբ, որ քննութիւն կատարելով՝ արդարացրեց դրդման մէջ մեղադրուած ուսուցիչներին և որոշեց արձակել մի ուրիշ ուսուցիչ, որի դէմ ծանր մեղադրանքներ կալին։ Քննութեան այս հետեւանքից զժգոհ մնաց Պետր։ Սիմէոնեանցը, որ իւր հակառակորդների արդարացումը անուղղակի մեղադրութիւն համարելով իւր դէմ՝ ապրիլ ամսին հրաժարական տուեց պաշտօնակատարութիւնից և միանգամայն ուսուցչութիւնից։ Ընդունելով այս հրաժարականը՝ Հոգաբարձութիւնը տեսչի օգնականին (Ամ. Մանդինեան) յանձնարարեց հարցաքննութիւնները շարունակել. սակայն սա հրաժարուեց այն խառնակ դրութեան մէջ այս յանձնարարութիւնը կատարելուց. ուստի Հոգաբարձութիւնը իւր անդամներից երեքի վրայ դրեց այս պարտաւորութիւնը։ Միևնույն ժամանակ կարգադրեց լրագիրներում տպել հրաւէր, որ Դպրոցամ տեսչի պաշտօն ստանալ ցանկացողները խնդրով գիմեն Հոգաբարձութեան, տեսչական ռոճիկ նշանակելով տարեկան 3,000 ըուբլի (մայիս)։ Նոյն տարուայ օգոստոսին տեսուչ ընտրուեց Վ. Եղիազարեանցը, որ և հաստատուեց պաշտօնում սեպտեմբերի 13-ին, Սի-

նօդի հրամանով № 2984. (Հայրապետական աթոռը թափուր էր՝ Գէորգ Կաթողիկոսի վախճանուելուց յետոյ): Բայց մի տարի էլ չանցած՝ 1884-ի յունիսին, Եղիազարեանցը հրաժարական տուեց, և Հոգաբարձութիւնը նոյն տարուայ սեպտեմբերին տեսուչ ընտրեց (երկրորդ անգամ) Արշակ Նահապետեանին, նրա հաստատութիւնը որոշելով յետաձել մինչեւ նոր Կաթողիկոսի գահակալելը: Այս հաստատութիւնը ստացուեց նորընտիր Մակար Կաթողիկոսի 1886-ի յունվարի 7-ի կոնդակով:

1885-ի յունիսին նորից խռովութիւններ տեղի ունեցան բարձր դասարանների աշակերտների մէջ, այս անգամ՝ անկարգութիւններով հանգերձ: Պատճառը՝ աշակերտների դժգոհութիւնն էր Մանկավարժական ժողովի որոշումներից հարցաքննութեան հետևանքների վերաբերմամբ. նրանք գլխաւորապէս գանգատում էին չորս ուսուցչի խիստ թուանշանների և անպատշաճ վարմունքի վրայ իրանց դէմք Այս խռովութեան հետևանքն եղաւ երկու ուսուցչի հրաժարականը և Է. դասարանի վակկուելը, չնայելով որ նախագահը հակառակ էր վերջին որոշման:

Տեսուչների յաճախակի փոփոխութեան հետ՝ փոփոխութիւններ կրեց և ուսուցչական

խումբը, բացի ինքնակամ հրաժարուղներից կամ որևէ դիպուածի պատճառով արձակուածներից՝ խմբի մէջ զգալի փոփոխութիւններ եղան  $188^3/4$ ,  $1884^4/5$  և  $1885/6$  ճեմարանական տարիների սկզբում:

## ԽԸ.

Դպրոցական ներքին կարգերին և ուսումնական մասին գալո՞ւ նկատելու արժանի են հետևեալ կարգադրութիւնները:

Սեղր. Մանդինեանի հրաժարուելուց յետու, ինչպէս տեսանք՝ Ե. դասարանը փակուեց: Բայց չոգաբարձութիւնը կամենալով՝ նորից շարունակել այս դասարանի գորութիւնը, որ յատկապէս նպատակ ունէր պատրաստուած ուսուցիչներ հասցնելու օրէցօր բազմացող ծխական ուսումնարանների համար՝ բանակցութիւններ սկսեց մանկավարժ Ա. Բահադրեանի հետ և առանց ծախսի խնայելու (տարեկան 2,400 ր. ուժի կով, որ ապա մինչև 3,000-ի հասցրուեց) նրան հրաւիրեց ուսուցիչ մանկավարժութեան և զեկավար Ե. դասարանի գործնական պարապմունքներին. նախակրթարանի աշակերտների հետ: Բահադրեանը ստանձնեց այս պաշտօնը 1881-ի սեպտեմբերին, բայց հազիւ մի տարի անցած

Նոր-Նախիջևանում տեսչական պաշտօնի հրավիրուելով՝ թողեց Դպրոցը։ Այնուհետև Ե. դասարանը, առանց մասնագէտ մանկավարժի մնալով՝ հեռացաւ իւր սկզբնական բուն նպատակից և ծագած խոռվովթիւնների պատճառով, ինչպէս լիշեցինք՝ փակուեց 1885-ին։

1882-ի սեպտեմբերին, պաշտօնակատարի առաջարկութեամբ, բացուեց Երրորդ դասարանի գուգընթաց։ 1883-ի սեպտեմբերին բացուեց վերին պատրաստականի գուգընթաց, և որովհետև Դպրոցի շինութեան մէջ ազատ սենեակ չկար սրա համար՝ ուստի ստորին պատրաստականը որոշուեց տեղափոխել Ս. Գէորգ եկեղեցու գաւիթը։ Բայց 1884-ի ապրիլին որոշուեց փակել ստորին պատրաստականը, որ Ե. դասարանի սկզբնական նպատակի փոխուելուց յետոյ կորցրել էր իւր նշանակութիւնը իրեւ դասարան՝ որտեղ փորձառական դաներ պէտք է տալին Ե. դասարանի աշակերտները։ Այնպէս որ 1885 թուին Դպրոցն ունէր երեք պատրաստական, («Նիսական ուսումնարան»), որոնցից վերինը գուգընթացով, երեք միջին դասարան՝ Ա—Գ, («Հոգևոր Դպրոց»), բոլորը գուգընթացներով, և երեք բարձր դասարան Դ—Զ, («Դպրանոց»)։ Պատրաստականներում աշակերտների թիւն էր 186, միջին դասարաններինը՝

213, իսկ վերին դասարաններինը՝ 94, ընդ ամենը՝ 13 դասարանում 487 աշակերտ։ Սրանցից փոխադրուեցին 163 (33,4 %), վերաքննութիւն ստացան 164 (33,6 %), մնացին դասարաններում 140 (29%) և արձակուեցին 20 (4%):

1881 թուի գեկտեմբերին սահմանուեց Հնագիտութեան դասընթաց, իսկ 1882 ի հոկտեմբերին հայկական ճայնագրութեան վրայ աւելացրուեց և երրոպական ճայնագրութիւնը։ Սակայն առաջին առարկան կարճառև գոյութիւն ունեցաւ, երկրորդը նոյնպէս շուտով խափանուեց, բայց 90-ական թուականներին նորից վերսկսուեց։ 1883 թ. լուսվարից սկիզբ գրուեց աշակերտական գրական երեկոներին, որոնք անընդհատ իրանց գոյութիւնը պահպանեցին մինչև այսօր։

1881-ի մարտին սահմանուեց միօրինակ գգեստի տարագ որդեգիրների և երթևեկ աշակերտների համար։ Նոյն թուի լուսիսին սահմանուեց, որ 8 տարեկանից պակաս երեխաներ չընդունուին աշակերտութեան։ 1883-ի հոկտեմբերին սահմանուեց, նախագահի առաջարկութեամբ, որ Դպրոցի երգեցիկ խումբը, որ կազմակերպուած էր դեռ նախկին Հոգաբարձութեան ժամանակ՝ կիրակի և տօն օրերը եր-

գէ Վանքի եկեղեցում։ 1884-ի նոյեմբերին սահմանուեցին աշակերտական կարգապահութեան նոր կանոններ։

Բացի սրանցից՝ Մանկավարժական ժողովը այս վեցամեակօւմ մի քանի անդամ զբաղուել է ուսման ծրագիրներ մշակելով (1883-ի վերջերում, 1884-ին ևն) և հարցաքննութեան յարմարագոյն կարգեր սահմանելով (1884 յունվար, 1885 ապրիլ), որոնց էութիւնը այստեղ մէջ բերել ամելորդ ենք համարում, քանի որ կարճժամանակեայ գոյութիւն ունեցան նրանք և շարունակ ենթարկւում էին փոփոխութիւնների։

### Ի՞՛.

Վեցերորդ չոգաբարձութիւնը, որ հաստատուեց 1886 թ. ապրիլի 4-ին № 219 կոնդակով և պաշտօնի մտաւ նոյն ամսի 23-ին՝ բաղկանում էր հետևեալ անդամներից — Գ. Եւանգուլեան, Միք. Թամամշեան, Ստ. Անանեան, Սամս. Մալսուրեան, Խշի. Կ. Բէհրուդեան, Գ. Աքիմեան, Աբգ. Յովհաննիսեան, Աղ. Մելիք-Ազարեան, Ներս. Աթարէգեան, Յովհ. Զիգիանեան, Նազ. Ագիեան, Սարգ. Կաւալեան, և հետևեալ կանդիդատներից — Բալ. Մելիք-Ղարագեօղեան, Աւ. Բաբայեան, Մարկ. Ռոտինեան և Յովհ. Տէր-Յովհաննիսեան։

Այս Հոգաբարձութեան նախագահներն էին—սկզբից Արիստակէս եպիսկոպոս Մեղրակեանը. 1890 թուի յունվարից Մամրէ եպիսկոպոս Սանասարեանը, (նրա վախճանելուց յետոյ, մինչև նոր թեմական առաջնորդի ընտրութիւնը՝ ժամանակաւոր փոխ-նախադահ Անանիա Վարդապետ Համազատպեանը). ապա 1894 թ. մարտից՝ Վրաստանի և Իմէրէթի թեմի այժմեան առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Առելէնեանը:

Այս Հոգաբարձութեան վարչական, տնտեսական և այլ գործառնութիւնների մէջ լիշտակելու արժանի են հետևեալները:

Նկատելով գանձապահութեան և ծախսաբարութեան պաշտօնների մի անձի մէջ միացնելու անյարմարութիւնը՝ Հոգաբարձութիւնը՝ Հոգաբարձութիւնը 1887-ի մարտին որոշեց բաժանել միմեանցից այս պաշտօնները և ընտրել յատուկ գործադիր պաշտօննեալ, տնտեսական կառավարիչ անունով, որ և շարունակում է մինչև այսօր։ Միևնուն ժամանակ հաշուապահութեան կանոնների մէջ մտցրեց մի քանի քարեփոխութիւններ։ 1887 թուին գանձապահ Թագ. ք. Խոջաէնիաթեանը վախճանեցաւ. նրանից յետոյ ժամանակաւոր գանձապահ ընտրուեց Հոգաբարձութեան անդամներից Աղ. Մելիք-Ազարեան, իսկ 1887 թ.

յունիսին ընտրուեց ռոմկաւոր հաստատուն գանձապահ Գր. քահ. Ճերմաղանեանցը:

Մոմավաճառութեան կապալաժամանակը 1892-ի սկիզբներին լրացած լինելով՝ Թէֆլիսի քահանաները զրաւոր դիմեցին Հոգարարձութեան և յայտնեցին, որ կապալառուները իրանց շահի համար պատրաստում և ծախում են այնպիսի մոմեր, որոնց մէջ մեղրամոմի նիւթ ամենեւին չկալ. այս բանը ըստ ինքեան վնասակար է ժամաւորների և մանաւանդ եկեղեցական պաշտօնեաների առողջութեան համար, վնասակար է նաև եկեղեցու պատկերներին ու անօթներին, որոնք խարդախ մոմի ծխից փչանում են. ըւստի խնդրում էին Հոգարարձութեան կարգադրութիւնը, որ կապալառուներին պարտաւորեցնէ՝ այնուհետև մոմը մաքուր մեղրամոմից պատրաստիլ: Հոգարարձութիւնը յարգեց այս առաջարկութիւնը, բայց որովհետև մի անգամից զուտ մեղրամոմ պարմանի մէջ մտցնելը կարող էր շատ նուազեցնել կապալի գինը՝ ուստի սահմանեց՝ հետզհետէ, ամեն մի կապալի ժամանակ  $20\%$  մեղրամոմ աւելցնել վաճառուելիք մոմի մէջ մինչև զուտ մեղրամոմի հասնելը: Այս որոշումը սկսեց հետզհետէ զործադրուել, և այժմեան Հոգարարձութեան ժամանակ պայսան դրուեց, որ մոմավաճառութեան կապալառուները

եկեղեցիներին մատակարարեն Յիայն զուտ մեղամոմից պատրաստուած լում;

Դպրոցի շէնքը, թողնելով միւս անյարմաբութիւնները՝ նաև նեղ էր գալիս, քանի որ աճում էր աշակերտների թիւը և բացւում էին նոր դասարաններ և զուղընթաց բաժանմունքներ։ Այս կարիքին դարման տանելու համար՝ չոգաբարձութիւնը շինութեան արևմտեան թևի վրայ շինեց երրորդ լարի, որտեղ փոխադրուեցին որդեգիրների ննջարանները և հիւանդանոցը (1889, սեպտեմբեր)։ Միաժամանակ նա հոգ տարաւ, նախորդ չոգաբարձութիւնների նման, նոր ընդարձակ դպրոցական շէնք կառուցանելու։ Այս նպատակով նա ընտրեց լատուկ մասնաժողով, որին լանձնաբարեց կամ մի լարմար պատրաստ տուն գնել Դպրոցի համար, կամ պատրաստել տալ նոր շինութեան մակարդակ և նախահաշիւ 700 աշակերտի (որոնց մէջ 80 որդեգիր) համար. (1890, դեկտեմբեր)։ Մասնաժողովը նիստեր ունեցաւ, ճարտարապետների հետ խորհրդակցեցաւ, մակարդակ գծագրել տուեց և նախապատրաստութիւններ տեսաւ շինութիւնն ոկսելու (1893, դեկտեմբեր)։ Բայց այս անդամ էլ գործը առաջնաւայ բախտին ենթարկուեց և գլուխ չեկաւ։

Հոգելոյս Մակար կաթողիկոսը վախճանելիս՝ Հոգաբարձութիւնը իւր միջից յատուկ պատգամաւորութիւն ուղարկեց Եջմիածին՝ Թաղման արարողութեանը ներկայ լինելու (1891, 16 ապրիլի): Գլորոցի նախկին հոգաբարձու և յայտնի հրապարակախօս Գր. Արծրունու վախճանելիս՝ որոշեց յարգել նրա լիշտակը՝ ամբողջ կազմով, ուսուցիչների, աշակերտների և երգեցիկ խմբի հետ ներկայ լինելով Թաղմանը և պսակ գնելով դադաղի վրայ (1892, 23 գեկտեմբեր): 1893-ի սեպտեմբերի 6-ին հանդիսաւոր ընդունելութիւն արաւ Վեհափառ կաթողիկոսին, որ այդ օրը քարեհաճեց այցելել Գլորոցը: Նոյնպէս և Վեհափառ կաթողիկոսի ս. օծման ներկայ լինելու համար ուղարկեց յատուկ պատգամաւոր, երեքօրեալ արձակուրդ տուեց աշակերտներին և դպրոցական հանդէս կատարեց այդ առիթով:

Այս Հոգաբարձութեան ութամեալ պաշտօնավարութեան ժամանակ (1886—1894) Գլորոցի տնտեսական դրութիւնը զգալի կերպով գարգացաւ. աւելացաւ թէ մուտքը և թէ ելքը: 1887-ին մուտք եղաւ, կլոր թուերով, 42,000 ր., իսկ ծախք՝ 40,000 ր., 1890-ին—մուտք՝ 49,000 ր., ծախք՝ 42,500 ր., իսկ 1893-ին—մուտք՝ 55,800 ր., ծախք՝ 54,300 ր.: Այս վեր-

Զի՞ն տարուալ մուտքի յօդուածներից գլխաւորներն  
են - կալուածների եկամուտ՝ 36,500 ը., մոմա-  
վաճառութեան կապալ՝ 9,500 ը., ուխտա-  
տեղիների արդիւնք (ծախսը հանած)՝ 3,000  
ը., դրամագլխի տոկոսներ՝ 2,500 ը., ևն: Իսկ  
ծախսի գլխաւոր յօդուածներն եղել են —ուժիկ  
բոլոր պաշտօնեաներին 30,400 ը., որդեգիրնե-  
րի սնունդ, զգեստ ևն՝ 6,200 ը., նպաստ թո-  
շակառու խեղճ աշակերտներին՝ 3,500 ը., կալ-  
ուածների նորոգութիւն, հարկեր, ապահովա-  
գութիւն՝ 7,500 ը., լուսաւորութիւն, վառե-  
լեք՝ 1,600 ը., ևն:

L.

Ուսումնական մասի վերաբերութեամբ ի-  
րանց կարևորութեամբ առաջին տեղն են բրո-  
նում Մակար կաթողիկոսի երկու կոնդակները՝  
ուսումնական և ուսուցչական խնդիրներին նը-  
կատմամբ:

Վերև քանիցս լիշուեց, որ Դպրոցումս  
անընդհատ մշակում էին դասաւանդութեան  
և ուսանելի առարկաների մասին ծրագիրներ,  
որոնք կամ ամենևին գործ չէին դրւում կամ  
կարճամանակեալ գոյութիւն էին պահպանում,  
տեղի տալով մի նորագոյն ծրագրի, որ առա-

ջարկւում էր ուսումնական նոր վարչութիւնից։  
Նոյն դրութիւնը տիրել է և հայոց միւս հոգևոր դպրոցներում։ Մրագիրների այս փոփոխականութեան պատճառը եթէ մի կողմից նրանց այս կամ այն թերութիւնն էր լինում, որը աշխատում էին լրացնել նոր ծրագրի խմբագրութեամբ, բայց միւս կօղմից—որ գլխաւորն է—այն էր, որ նոր ծրագիր պատրաստելը տեսչի և Մանկավարժական ժողովի գործ, և նրա գործադրութեան թուլատութիւնը չոգաբարձութեան իրաւունքն էր համարում։ Ուրեմն ամեն մի տեսուչ և ամեն մի չոգաբարձութիւն կարող էին ձեռներէց լինել նոր ծրագիր մշակելու՝ արդէն եղածի թերութիւնը վերացնելու նպատակով։ Բայց հէնց ամենամեծ թերութիւնը՝ այդ ծրագիրների յաճախակի փոփոխութիւնն էր, որ շատ պէտք է խանգարէր յարատե կանոնաւոր դասաւանդութեան, ուրեմն և ուսման առաջադիմութեան։ Մակար կաթողիկոսը կամենալով մեր հոգևոր դպրոցներից այս չարիքը վերացնել՝ կշմիածնում մշակել տուեց մի նորմալ ծրագիր հայոց հոգևոր դպրոցների համար, որը ուղարկեց նաև Ներսիսեան Դպրոցին, 1886 թ. յուլիսի 2-ին, № 373 կոնդակով։ Այս ծրագրով, որը պատուիրած էր ճշտութեամբ գործադրել՝ Դպրոցի վեց դպրոցա-

կան դասարաններում աւանդուելու էին—կրօնական ուսմունք (սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանի, քրիստոնէական վարդապետութիւն, կարգ աստուածապաշտութեան, գիտութիւն սուրբ Դրոց, պատմութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ, տոմարագիտութիւն)։ Հայոց լեզու, տեսութիւն և պատմութիւն մատենագրութեան հայոց, ուսւաց լեզու, Փրանսերէն լեզու. պատմութիւն ընդհանուր, հայոց և ուսւաց. աշխարհագրութիւն ընդհանուր և Թուսաստանի. հոգեբանութիւն, տրամաբանութիւն. բնագիտութիւն (Փիզիկա), բնական պատմութիւն, բնախօսութիւն. թուաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, տիեզերագրութիւն. ճայնագրութիւն, վայելչագրութիւն և նկարչութիւն, (վերջինս՝ ճաշից յետոյ և տօն օրերը); ծրագրով որոշուած էր, թէ նշանակուած առարկաներից ո՞րը կամ ո՞ր մասը պէտք է անցնուի որևէ դասարանում, (բայց թէ ինչ ընդարձակութեամբ և ինչ դասագրքերով չէր որոշուած), և ըստ այնմ դրուած էր դասացուցակ, թէ ամեն մի առարկայի շաբաթական քանի՛ դաս պէտք է նուիրուի այս կամ այն դասարանում։ Այս ծրագիրն ու դասացուցակը, չնայելով թերութիւններին՝ մինչեւ այսօր գործ

Են դրում Թպրոցում, շատ աննշան շեղում-ներով:

Կաթողիկոսի երկրորդ կարգադրութիւնը վերաբերում էր ուսուցիչների ընտրութեան: 1890 թ. մայիսի 30-ից № 211 կոնդակով Հալքապետը առաջադրում էր հոգաբարձութեան՝ արձակել Թպրոցի բոլոր ուսուցիչներին և ապա նորից ընտրութիւն կատարելու. «Ըստրել զանձինս հմուտոս ի գիտութեան, բարեբարոյս և ջերմեռանդս ի կրօնի, նուիրեալս միանգամայն գործոյ և եթ դաստիարակութեան մանկանց»: Ընտրելիները պէտք է աւարտած լինէին բարձրագոյն ուսումնարաններ և իջմիածնի Ճեմարանի մասնագիտական բաժինը. իսկ որոնք այդ պահանջուած ցենզը չունէին՝ պէտք է ի նկատ առնուէր նրանց բազմամեայ փորձառութիւնն ու քաջահմտութիւնը: Ընտրութիւնը պէտք է կատարուէր կանոնադրութեան հիման վրայ, մի տարի ժամանակով, և պէտք է առաջարկուէր կաթողիկոսի վերջնական տնօրէնութեան: Այս կոնդակի հիման վրայ հոգաբարձութիւնը 1890 թ. յունիսի 6-ին արձակեց Թպրոցի բոլոր ուսուցիչներին և նոյն օրն և եթ ընտրութիւն կատարեց: Ընտրութեցին միւնոյն ուսուցիչները. նրանց մեծագոյն մասն արդէն ունէին պահանջուած

ուսումնական ցենզը, իսկ փոքր մասի համար՝ Հոգաբարձութիւնն ի նկատ առաւ բազմամեաչ փորձառութիւնն ու քաջահմտութիւնը և որոշեց միջնորդել Կաթողիկոսի առաջ, որ նրանց հաստատէ, միանգամայն պարտաւորեցնելով նըրանցից երեքին, որ մի տարուայ ընթացքում ուսուցչական համապատասխան ցենդ ձեռք բերեն։ Կաթողիկոսը հեռագրով մի տարի ժամանակով հաստատեց այս ընտրութիւնը, թէև իւր դժբակութիւնն յայտնեց՝ «վասն անփոյթ և անխտիր ընտրութեան ուսուցչաց», հակառակ իւր կոնդակին։ Հոգաբարձութիւնը որոշեց պահել ուսուցչական խումբը, իսկ յաջորդ տարին նոր ընտրութիւն կատարել։ Սակայն 1891 թ. ապրիլ 16-ին վախճանեցաւ Մակար Կաթողիկոսը, և նոր ընտրութեան օրոշումը չերագործուեց։ Գործնական հետևանք ուսուցչեների ընտրութեան վերաբերեալ կոնդակից՝ եղաւ ուսուցիչների մի տարով ընտրուելը և Կաթողիկոսի հաստատութեան առաջարկուելը, և երկու ուսուցչի արձակումը, որ մի մեծ խնդիր դարձաւ և մօտ երկու տարի վէճի ու գրագրութեան տեղիք տուեց Հոգաբարձութեան, տեղակալի և Սինօդի մէջ։

Հարկ է լիշել Մակար Կաթողիկոսի երրորդ Հոգացողութիւնն էլ, որ վերաբերում էր յատ-

կապէս Ներսիսեան Գալլոցի ուսումնական և  
տնտեսական մասին: 1888 թ. ապրիլի 26-ից  
№ 164 կոնդակով նա ուղարկեց Մարքէ եպիս-  
կոպոսին և Ա. Մանդինեանին՝ ներկայ լինելու  
տարեկան հարցաքննութիւններին և զննելու  
Գալլոցի մուտքի և ծախսի հաշիւները, որոնք  
մի քանի տարուց ի վեր չէին ուղարկուած Ալ-  
նօդին: Վերագննիչները եկան և կատարեցին  
իրանց վրայ զրուած պարտաւորութիւնը և զե-  
կուցագիր ներկայացրին Կաթողիկոսին, որով  
զանազան թերութիւններ գտան Գալլոցի թէ  
ուսումնական վիճակի և թէ հաշիւների մէջ:  
Վերջինս երկար քննութիւնների և գրադրու-  
թիւնների առիթ տուեց և գործնական վախ-  
ճան չունեցաւ. իսկ ուսումնական մասի վերա-  
բերութեամբ՝ Կաթողիկոսը, զեկուցման հիման  
վրայ, նոյն տարուայ դեկտեմբերին № 444 կոն-  
դակով հրամայեց՝ տեսչական պաշտօնից Հեռա-  
ցնել Ա. քահ. Բէգնազարեանցին:

Ա. Ա. Ա.

Ուսումնական մասի կառավարութեան գա-  
լով՝ նախ լիշելու է այս Հոգաբարձութեան  
ութամեայ պաշտօնավարութեան ժամանակ  
կատարուած տեսչական փոփոխութիւնները:

Երբ Հոգաբարձութիւնն ստանձնեց Թպրոցի կառավարութիւնը՝ տեսուչն էր Արշ. Նահապետեանը։ Այս շուտով, 1886-ի օգոստոսի 20-ին, դարձեալ հրաւիրուեց տեսուչ Էջմիածնի ճեմարանին։ Հոգաբարձութիւնը նրա փոխարէն տեսուչ ընտրեց Յովհ. Զիգիանեանին։ Քայց սայանձն չառաւ այդ պաշտօնը, ուստի ուսումնական մասին վերահասութիւն գործելու համար ժամանակաւորապէս նշանակուեց Հոգաբարձութեան անդամներից Ն. Ափեանցը։ Այսպէս առանց ուսումնական զեկավարի մնաց Թպրոցը աւելի քան կէս տարի, և 1887-ին Հոգաբարձութեան անդամներից կաղմուած ուսումնական յանձնաժողովը, քննելով Թպրոցի ուսումնական դրութիւնը՝ գտաւ նրան անբաւարար, ուստի ի միջի այլ կարգագրութիւնների որոշեց ժամանակաւոր տեսուչ հրաւիրել Ս. Եղիազարեանին՝ մինչև տարեկան հարցաքննութիւնների վերջանալը։ Վերջապէս 1887-ի յունիսի 17-ին հաստատուն տեսուչ ընտրուեց Սարգ. քահ. Բէդ-նազարեանցը, որ նոյն ամսի 23-ին պաշտօնի մէջ մտաւ և պաշտօնում հաստատուեց նոյն ամսի 30-ին, № 351 կոնդակով։ Նրա պաշտօնավարութիւնը սակայն հազիւ տարի ու կէս տևեց և ընորոշուեց ուսուցիչների յաճախակի փոփոխութիւններով։ Նկատելով տարածալնու-

թիւններ Հոգաբարձութեան և ուսուցիչների  
մէջ նա 1888-ի նոյեմբերին պատճառաբանուած  
հրաժարական տուեց Հոգաբարձութեան։ Բայց  
հրաժարականը Հոգաբարձութիւնը չընդունեց, և  
նա շարունակեց պաշտօնը մինչև նոյն տարուայ  
դեկտեմբերի 21-ը, երբ, ինչպէս վերև լիշեցինք՝  
կաթողիկոսի հրամանով արձակուեց։ Ժամանա-  
կաւոր պաշտօնակատար ընտրուեց տեսչի օգնա-  
կան Ամ. Մանդինեանցը, մինչև 1889 թ. մար-  
տի 22-ին, մի քանի թեկնածուներից քուէ-  
արկութեամբ ձայների առաւելութեամբ տեսուչ  
ընտրուեց Յ տարի ժամանակով Յովհ. Սպեն-  
դիարեանը, որ այդ պաշտօնում հաստատուեց  
մայլսի 10-ին № 190 կոնդակով և պաշտօնի.  
մէջ մտաւ օգոստոսի 31-ից։ Նրա պաշտօնա-  
վարութեան ժամանակ էլ, մանաւանդ երրորդ  
տարին, տարաձայնութիւններ ծագեցին Հոգա-  
բարձութեան մէջ, և երբ նա 1892-ին, հարցա-  
քննութիւններից լետոյ ամառուայ արձակուրդին  
հեռացաւ քաղաքից՝ Հոգաբարձութիւնը նրան  
պաշտօնից հրաժարեցրեց, «նկատելով որ նրա  
պաշտօնավարութեան ժամանակը լրացել է»  
(10 յունիսի)։ Բայց երևի այս պատճառաբա-  
նութիւնը բաւարար չհամարելով՝ լաջորդ նիս-  
տին (յուն. 17) նորից վճիռ կալացրեց, գտնելով  
որ նա անհամապատասխան է տեսչական պար-

տաւորութեանց, ինչպէս փորձը ցոյց տուեց»։ Թէև Սինօդը հեռագրով պահանջեց, որ Սպենդիարեանը մնայ տեսուչ մինչև նոր կաթողիկոսի գալը՝ բայց այս հրամանն անկատար թողնուեց, և դպրոցական տարին սկսուեց առանց տեսչի։ Հոկտեմբերի 28-ին Հոգաբարձութիւնը տեսուչ ընտրեց Կար. Կոստանեանին, բայց որոշեց՝ մինչև Կաթողիկոսի գալը հրաւիրել նրան իբրև պաշտօնակատար և ապա առաջարկել հաստատութեան։ Կոստանեանը պաշտօնի մէջ մտաւ 1892 թ. դեկտեմբերի 1-ից։ Նրա ժամանակ էլ եղան տարածայնութիւններ, այնպէս որ նորընտիր, այժմեան Վեհափառ Կաթողիկոսի գալուց յետոյ՝ Հոգաբարձութիւնը նրան հաստատութեան առաջարկելու նկատմամբ երկու մասի բաժանուեց։ մի մասը ցանկանում էր նրան հաստատուն տեսուչ ունենալ, իսկ միւս մասը ցանկանում էր նրան հրաժարեցնել։ Վեհափառ Կաթողիկոսը 1893-ի դեկտեմբերին հրամանագրեց, որ թէ Հոգաբարձութիւնը, (որի ժամանակը վաղուց լրացել էր, նոր ընտրութիւններ կատարուել էին, բայց դեռ չէին հաստատուել) և թէ տեսչի պաշտօնակատարը դեռ մնան իրանց պաշտօններում մինչև ինքը կարգադրութիւն անէ։ Այս հրամանի հիման վրայ Կոստանեանը շա-

ըունակեց պաշտօնը մինչև 1894 թ. օգոս-  
տոսի 3-ը, երբ Հայրապետից հրավիրուեց Ճե-  
մարանի տեսուչ, որից քիչ լեռով փոխուեց և  
Հոգաբարձութիւնը:

Չնալելով այս փոփոխութիւններին, օրոնք  
առաջադիմութեան տեսակէտից նպաստաւոր  
չէին կարող լինել՝ Դալրոցի ներքին կեանքում  
զգալի բարեփոխութիւններ եղան և նոր կար-  
գեր սահմանուեցին, մանաւանդ Սպենդիարեանի  
և կոստանեանի պաշտօնավարութեան ժամա-  
նակները: Ա. քահ. Բէզնազարեանցի տեսչու-  
թեան ժամանակ սահմանուեց — ուսուցիչներից  
ուսման աւարտման վկայական պահանջել և  
աշակերտներից ծննդեան վկայական, առանց  
որին ոչ ընդունելութիւն անել և ոչ հարցա-  
քննութեան ենթարկել. — Դալրոցում գործ գըր-  
ուելիք դասագրքերը նախ ենթարկել Մանկա-  
վարժական ժողովի քննութեան և նրա հաւա-  
նութիւնն ստանալուց լեռոյ առաջարկել Հո-  
գաբարձութեան հաստատութեան: Վերացուե-  
ցին զինի ճաշու դասերը (տրամաբանութիւն և  
Հոգեբանութիւն), որոնք զետեղուեցին միւս  
դասերի շարքում, ճաշից առաջ: Մշակուեց կա-  
նոնադրութիւն՝ Դալրոցի չքաւոր աշակերտնե-  
րին օժանդակելու, որ ընթացք չստացաւ՝ տեսչի  
հեռանալով պաշտօնից:

Յովի. Սպենդիարեանի տեսչութեան ժամանակ՝ նորից վերադննուեց չքաւոր աշակերտ-ներին օժանդակող ընկերութեան կանոնադրու-թիւնը և ուղարկուեց Սինօդին՝ առաջարկելու կաթողիկոսի հաստատութեան (1889, հոկտ.)։ Երկու տարի յետոյ կանոնադրութիւնը վերա-դարձուեց Սինօդից՝ ժամանակաւրապէս գոր-ծադրելու ժողովուութեամբ, մինչև նոր կաթո-ղիկոսի ընտրութիւնը, որին առաջարկում էր ներկայացնել և հաստատութիւն խնդրել։ Այս-պէս էլ այս կանոնադրութիւնը մնաց չիրագոր-ծուած։ Առանձին ուշադրութիւն դարձուեց աշակերտների մտաւոր, նիւթական և առողջա-կան դրութեան վրայ. կանոնաւոր կազմակեր-պութիւն ստացան գրական երեկոները, իբրև օգ-տակար միջոց՝ զարգացնելու աշակերտների մտա-աւոր ընդունակութիւնները և վարժեցնելու գրա-ւոր աշխատանքների և մատենագրական հար-ցերի քննութեան (1890, փետրվար)։ Կազմա-կերպուեցին ընտանեկան երեկոյթներ և տօնա-ծառեր՝ աշակերտներին սերտ կերպով կապելու համար միմեանց և ուսուցիչների հետ՝ իբրև մի ընտանիքի անդամներ։ Մի քանի անգամ կա-տարուեց բժշկական զննութիւն աշակերտների առողջական դրութեան, և նկատուած գլխաւոր պակասութեան—սնունդի անբաւարարութեան

դէմ միջոցներ ձեռք առնուեցին. չքաւոր աշակերտներից նոր թոշակաւորներ ընտրուեցին 15 հոգի, (որոնցից իւրաքանչիւրը ամսական 7 ր. նպաստ էր ստանում Դպրոցից), այնպէս որ թոշակաւորների թիւը հասաւ 30-ի, բացի որդեգիրներից. ուրիշ չքաւոր աշակերտների համար զգեստներ կարուեցին Դպրոցի հաշուով, ևն Երկու ամառ (1891 և 1892), Հոգաբարձութեան որոշմամբ, կազմակերպուեցին դպրոցական ճանապարհորդութիւններ որդեգիրներից համար, յատուկ ուսուցչի ղեկավարութեան և վերակացուի հսկողութեան տակ. թէպէտ Մանկավարժական ժողովը աւելի նպատակայարմար էր համարում փոխանակ ճանապարհորդութիւններին՝ ամառը որդեգիրներին հայրենիք ուղարկել իրանց ծնողների մօտ: Գրադարանը բարեկարգելու և հարստացնելու միջոցներ ձեռք առնուեցին. սահմանուեց՝ Դպրոցի նախահաշուի մէջ ամեն տարի մտցնել մի յախտնի գումար՝ ընթերցանութեան նոր գրքեր գնելու: Պատրաստուեց և տպագրուեց գրքերի ցուցակը, որը կազմեց դրադարանապետ Ամ. Մանդինեանը (1893):

Կար. Կոստանեանի տեսչութեան ժամանակ սահմանուեց ճաշ տալ Դպրոցում չքաւոր աշակերտներից 20 հոգու, որ այնուհետև էլ

շարունակում է մինչև այժմ։ Տպագրուեց Դը-  
պրոցի ձեռագիրների ցուցակը, որ Վիեննայի  
Մխիթարեանների մշակած սլոտեմով կազմեց  
Ստ. Կանայեանց (1893)։ Կար. Կոստանեանը  
1893 թ. մարտին և լունիսին ներկայացրեց  
Հոգաբարձութեան ընդարձակ զեկուցումներ Դը-  
պրոցի ուսումնական դրութեան մասին և մի  
շարք առաջարկութիւններ արաւ, որոնց նպա-  
տակն էր—Դպրոցի պատրաստական դասարան-  
ները համապատասխան դարձնել ծխական ու-  
սումնարանների Պ. և Ե. տարիներին, այնպէս  
որ ծխական ուսումնարանների Ե. տարուց ա-  
ւարտողը պատրաստ լինի մտնելու Դպրոցի Ա.  
դասարանը. ըստ այնմ բարեփոխել դասընթացը  
Դպրոցի Ա—Զ դասարաններում ևս. ապահո-  
վել ուսուցիչների դրութիւնը. փոխանակ դա-  
սագին վճարելու սահմանել հաստատուն ո.ո-  
ճիկներ. ապահովել նրանց դրութիւնը երկար  
պաշտօնավարութիւնից լետոյ, հիմնելով թո-  
շակարկդ, որի համար Հոգաբարձութիւնը միա-  
նուագ պէտք է նուիրէր 3,000 ր., ևն։ Այս  
առաջարկութիւններից իրագործուեցին մի քա-  
նիսը միայն.—բացուեց նոր, չորրորդ պատրաս-  
տական. ուսուցիչների դասագինը աւելացաւ  
շաբաթական դասի համար 10 բուքիրավ, այն-  
պէս որ այնուհետև առաջին 12 դասի համար

վճարում է 70 ր., իսկ յաջորդ դասերի համար՝ 60 ր., սրա համեմատ էլ դասերի թիւը պակասեցրուեց. առաւելագոյն թիւը շաբաթական դասերի՝ սահմանուեց 22, փոխանակ առաջուայ մինչև 28 և աւելի դասերին բարեկարգուեց երգեցիկ խումբը և այլն:

Աշակերտների թիւը և առաջադիմութիւնը այս ուժամեակամ արտայայտում է հետևեալ թուերով.

188<sup>8/9</sup>, ճեմ. տարուայ սկզբում աշակերտների թիւն եղել է 395, տարուայ վերջում՝ 355 (?). Հարցաքննութիւններից յետոյ աւարտել են 16 ( $4\frac{1}{5}\%$ ), փոխադրուել են 86 (23%), վերաքննութիւն են ստացել 110 (30%), մնացել են դասարաններում 156 (42%), որոնցից 15-ը, եբրև երկրորդ տարեցիներ՝ արձակուել են:

189<sup>8/4</sup>, ճեմ. տարուայ սկզբում աշակերտների թիւն եղել է 399, տարուայ վերջում՝ 321. Հարցաքննութիւններից յետոյ աւարտել են 13 (4%), փոխադրուել են 103 (32%), վերաքննութիւն են ստացել 91 (28%), մնացել են դասարաններում 114 (35%):

ԼԲ.

Եօլուերբորտ Հոգաբարձութիւնը, որ ներկայ-  
ումս կառավարում է Պաղոցը՝ հաստատուեց  
Վեհափառ Կաթողիկոսի № 1230 կոնդակով,  
1894 թ. օգոստոսի 4-ից, և պաշտօնի մէջ  
մտաւ նոյն ամսի օգոստոսի 31-ին։ Նա բաղ-  
կացած էր հետևեալ անդամներից— Յովկ. Ալի-  
խանեան, Միք. Թամամշեան, Յովկ. Սպեն-  
դիարեան, Պող. Մելիք-Ղարագեօղեան (այժմ  
վախճանուած), Կար. Քոչարեան, Սամս. Յա-  
րութիւնեան, Յակ. Թադէսկեան, Սամ. Բալա-  
ղեան, Աղ. Մելիք-Ազարեան, Իս. Բուղդան-  
եան, Յովկ. Լոռիս-Մելիքեան, Աղ. Քալան-  
թար, և հետևեալ կանդիդատներից— Եփ. Ա-  
ղամալեան, Լկ. Եղիազարեան, Նազ. Տիգրան-  
եան և Յովս. Ամիրխանեան։

Հոգաբարձութեան նախագահն եղել ! թե-  
մակալ առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սու-  
րէնեանը։

Հոգաբարձութեան պաշտօնի մտած ժա-  
մանակ՝ տեսչական պարտաւորութիւնները ժա-  
մանակաւորապէս կատարում էր Ամ. Մանդին-  
եանը։ Նոյեմբերի 2-ին տեսչի պաշտօնակատար  
ընտրուեց Յովկ. Սաղաթէլեան, որ սակայն  
կէս տարի պաշտօն վարելուց յետոյ՝ հրաժա-

ըական տուեց, որ և ընդունուեց Հոգաբարձութիւնից (14 մայիսի): Տարեկան հարցաքննութիւններից լեռոյ Հոգաբարձութիւնը հաստատուն տեսուչ ընտրեց Լեռն Սարգսեանին (7 յունիսի), բայց այս ընտրութիւնը Վեհափառ կաթողիկոսը չբարեհաճեց հաստատել: Ապա Հոգաբարձութիւնը տեսուչ ընտրեց իւր անդամներից Սամ. Բալաղեանին (19 յուլիսի 1895), որ և հաստատուեց պաշտօնի մէջ կաթողիկոսական № 393 կոնդակով 29-ից յուլիսի և մինչև այժմ շարունակում է իւր պաշտօնը:

Այս Հոգաբարձութեան ժամանակ կատարուած գործերից լիշտապակելու արժանի են.—

Դպրոցի նոր շէնք կառուցանելու համար մեծ ջանք զործ դրուեց. ընտրուեցին յարմար տեղեր, պատրաստուեցին մակարդակ և նախահաշիւ. բայց այս անդամ էլ այս վաղեմի մտադրութիւնը չիրագործուեց—Հոգաբարձութիւնից անկախ պատճառով:

Դպրոցապատկան մի քանի, հին և նոր նուիրուած կալքեր, առանձնապէս հին Դպրոցի դիմացի 21 կրպակները, իշխ. Յովս. Արդութեանի տունը և Թէլէթի ուխտատեղին, հիմնովին վերանորոգուեցին, որոնց վրայ ծախս եղաւ մօտ 40,000 լ:

Որոշուեց տօնել Դպրոցի գործութեան եօ-

թանասուննեհինդամեայ լորելեանը, որ լրացաւ 1899 թ. դեկտեմբերի 1-ին։ Այս տօնսի առիթով որոշուեց տպագրել Գպրոցի գոյութեան ընդարձակ և համառօտ պատմութիւնները. նոյնպէս յատկացրուեց 1,500 ր. Գպրոցի ուսումնական պիտոյքներին գործածելու համար։ Մանկավարժական ժողովի որոշմամբ, որ չոգաբարձութիւնից հաստատութիւն ստացաւ՝ այս գումարի կէսը յատկացրուեց զրադարանի հայագիտական բաժինը հարստացնելու և միւս կէսը՝ աշակերտների մի քանի ձեռագիր դասագրքերը հետզհետէ վիմագրելու։ Վերջին որոշումն արդէն սկսեց իրազործուել—1899 թուի աշունքից սկսեց վիմագրուել հայոց մատենագրութեան պատմութեան դասընթացը։

Սահմանուեց տարեկան կանոնաւոր հաշուէտութիւն՝ տպագրուած տեղեկագիրներով, որոնք ակտի օրը, փետրվարի 14-ին, ամեն տարի կարգացրում են հանդէսի ժամանակ և բաժանում են հասարակութեան, ինչպէս և ուղարկում են լրագիրներին։

Սահմանուեց թոշակարկղ՝ Գպրոցում երկար ժամանակ (15—25 տարի) պաշտօն վարած ուսուցիչներին և այլ ծառայողներին կենսաթոշակ տալու համար։ Թոշակարկղի կանոնագրութեամբ, որ մշակուեց ուսուցիչներից ըն-

տրուած մասնաժողովի ձեռքով և Հոգաբարձութեան միջոցով առաջարկուեց Վեհափառ Կաթողիկոսի հաստատութեան (1894 թ.)՝ Դրայրոցը իւր միջոցներից պէտք է տայ թոշակարկղին 15 տարի շարունակ տարեկան 3,000 ըուբլի, որպիսի զումարի հետ միանալով մասնակիցների ռոճիկներից  $6^{\circ}/_0$  բարձումները պէտք է կազմուի հիմնական դրամագլուխ, որի տոկոսից, թոշակարկղի սկսուելուց 10 տարի յետոյ, պէտք է սահմանուած թոշակ տրուի նոցա, որոնք կանոնադրութեան համաձայն թոշակի իրաւունք են ստացած։ Թոշակարկղը սկսեց գործել ներկայ 1900 թ. յունվարի 1-ից։ Վեհափառ Կաթողիկոսի թոլլտուութեամբ ընդունուեցին Դրայրոցում ուսանելու 75 աշակերտ, որոնք 1894 թ. աշնանը արձակուել էին Շեմարանից։ Արանց համար ժամանակաւորապէս բացուեց Դր. դասարանի զուգընթաց, որ կարիքը անցնելուց յետոյ նորից փակուեց։ Այս նորեկները չորս տարուայ ընթացքում ուսման ընթացքն աւարտելով դուրս եկան Դրայրոցից։

Փոխանակ նախկին կարգին, որով ուսուցիչները վարձւում էին մի տարով և ուսումնական պարապմունքը վերջանալիս համարւում էին արձակուած և ապա նորից հրաւիրւում դարձեալ մի տարով՝ մտցրուեց նոր սկզբունք,

այն է՝ որ ուսուցիչները համարւում են վարձուած անորոշ ժամանակով, իրեւ հաստատուն պաշտօնեաներ: Այս սկզբունքի շնորհիւ՝ ուսուցչական խումբը դարձաւ մնալուն և շատքիչ ենթարկուեց փոփոխութեան, որ նպաստեց ուսումնական գործի յաջողութեան:

Մշակուեց մանրամասն ծրագիր, որի մէջ համաձայնեցրած էր առարկաների դասաւանդութիւնը զանազան դասարաններում. առարկաները տեղաւորուած էին աւելի նպատակայարմար կերպով. մանրամասն որոշուած էին իւրաքանչիւր առարկայից անցնուելիք դասընթացը և դասագրքերը. որոշուած էր նրանով բանալ և ի. դասարան իւր առանձին դասընթացով, ևն: Այս ծրագիրը, չոգաբարձութեան հաւանութիւնն ստանալուց յետոյ, առաջարկուեց Վեհափառ կաթողիկոսի հաստատութեանք բայց զանազան նկատումներով չհաստատուեց:

Գրական երեկոները աւելի հաստատ կաղմակերպութիւն ստացան, չնայելով որ Յ. Սաղաթէլեանի պաշտօնավարութեան ժամանակից՝ նրանց համար առանձին վարձատրութիւն չէ տրում դեկավարող ուսուցիչներին, այլ սրանք ձրի են կատարում այդ գոլծը:

Առաջին անդամ կատարուեց գնահատութիւն Դպրոցի գրադարանին և այսպիսով որոշ-

ուեց նրա արժէքը: Միկնոյն ժամանակ աւելի կանոնաւորուեց զրադարանի կառավարութիւնն ու հաշուապահութիւնը:

Բժշկական օգնութիւնը, որ առաջ սահմանուած էր միայն որդեզիրների համար՝ տարածուեց առ հասարակ բոլոր աշակերտների վրայ, որոնցից չքաւորները դեղերն էլ ձրի են ստանում Դպրոցի հաշուապի:

Թոշակառու աշակերտների թիւն աւելացաւ և 30-ից հասաւ 57-ի: Թոշակառուների և ճաշողների (թուով 20) և ուրիշ նպաստառուների վրայ վերջին տարիներում Դպրոցը ծախսել է 4,000 ըուբլիս (189<sup>5</sup>/<sub>6</sub> թուին) մինչև 6,092 ը. (189<sup>8</sup>/<sub>9</sub> թ.): Այս գումարից 4,234 ը. տրուած է թոշակ, 1,054 ը. ճախսուած է ճաշ տալու, 463 ը. դեղի, 339 ը. զգեստի և միանուագ օժանդակութեան: Նոյն տարին տրուած է միանուագ օժանդակութիւն բարերար անձերինուիրած գումարներից՝ 629 ը., իսկ Վ. Հ. Բարեզործական ընկերութիւնը թոշակ է տուել 2,252 ը.:

Դպրոցի թէ տնտեսական և թէ ուսումնական դրութիւնը այս հնգամեակում զգալի առաջադիմութիւն ունեցաւ, ինչպէս երևում է հետագայ թուերից.

**Մուլտք (զուտ) ֆախս**

|      |       |           |           |
|------|-------|-----------|-----------|
| 1895 | թուրն | 61,968 ր. | 59,712 ր. |
| 1896 | "     | 62,337 ր. | 70,483 ր. |
| 1897 | "     | 65,325 ր. | 64,167 ր. |
| 1898 | "     | 70,734 ր. | 67,661 ր. |
| 1899 | **) " | 69,108 ր. | 65,018 ր. |

**Աշակերտների թիւը և առաջադիմութիւնը**

|                    |                                       |                |
|--------------------|---------------------------------------|----------------|
| 189 <sup>5/5</sup> | ճեմ. տար. վերջ. 410, փոխ. 192 (43,5%) | Ճն. 90 (20,4%) |
| 189 <sup>5/6</sup> | " " 168, " 353 (75,1%)                | " 113 (24,2%)  |
| 189 <sup>6/7</sup> | " " 539, " 377 (72,2%)                | " 162 (27,6%)  |
| 189 <sup>7/8</sup> | " " 676, " 456 (67,1%)                | " 220 (32,6%)  |
| 189 <sup>8/9</sup> | " " 599, " 393 (67,3%)                | " 191 (32,7%)  |

Աշակերտների այս ցուցակից երեսում է,  
որ վերջին հինգամեակում Դպրոցի աշակերտ-  
ների թիւը աւելի է՝ աշակերտների ամենամեծ  
թուլց՝ որ երբեւկուց եղել է Դպրոցում:

Առ 1-ն յունվարի 1900 թ. Դպրոցն ու-  
նէր 16 դասարան, որոնք էին Առաջին պա-  
տրաստական, զուղընթացով, Երկրորդ պատրաս-  
տական, զուղընթացով, Երրորդ պատրաստա-

\*) Այս տարրուաչ մալիսից սկսած՝ Դպրոցը զրկուեց  
իւր եկայուտների մի աղբւրըլից՝ ուխտատեղիներից, ո-  
րոնց տրդիւնքը, Վեհափառ Կաթողիկոսի հրամանով,  
յատկացրուեց Էջմիածնի Հոգևոր Շեմարանին:

\*\*) Խակ 148 վերաքննիլու Յաջորդ տարիներում վե-  
րաքննութիւնների հետևանքը զետեղուած է վոլոս-  
դրուողների և մնացողների թուերի մէջ:—189<sup>8/9</sup> ճեմ.  
տարրում վերաքննութեան չեն եկել 15 աշակերտ:

կան, երկու զուգընթացով, Առաջին, Երկրորդ  
և Երրորդ դասարաններ, զուգընթացներով, Զոր-  
քորդ, Հինգերորդ և Վեցերորդ դասարաններ,  
առանց զուգընթացների:

### ՈՐԴԵԴԻՐՆԵՐ

Ինչպէս լիշել ենք՝ որդեզրութիւնը Դպրո-  
ցում հաստատուեց 1850 թուին, պէնսիօն ա-  
նունով։ Որդեզիրները ապրում են Դպրոցի շե-  
նութեան մէջ, ձրի ստանալով ուսում, սնունդ,  
գդեստ և բոլոր պիտույքները և շարունակ գըտ-  
նուելով ուսումնական վարչութեան հսկողութեան  
ռուկա։ Նրանք առաջ պահւում էին մասամբ Դը-  
պրոցի սեփական միջոցներով և մասամբ մաս-  
նաւոր անձանց միջոցներով։ Առաջին դէպքում՝  
Նրանց ընտրութիւնը կախուած էր լինում դը-  
պրոցական վարչութիւնից (Հոգաբարձութիւնից  
կամ Մանկավարժական ժողովից)։ Երկրորդ դէպ-  
քում՝ մեծ մասամբ այն անձերից, որոնք հայ-  
ժամանակում էին որդեզրի ծախսը։ Ճատ անգամ էլ  
որդեզիր ընտրում էր կաթողիկոսների հրամա-  
նով, թեմակալ առաջնորդների առաջարկու-  
թեամբ կամ որևէ գիւղական հասարակութեան  
խնդիրքով։ Դպրոցի նուիրատուններից շատերն  
էլ պայման են դրել, որ իրանց նուիրած փողի

առոկուը գործ դրուի մի կամ մի քանի որդեգիր  
պահելու, և որովհետև նուիրուած գումարները  
զանազան էին լինում՝ ուստի յաճախ հաշիւնե-  
րի մէջ շփոթութիւն էր ծագում. մէկի գու-  
մարը չէր բաւականանում, միւսինը աւելանում  
էր ևն:

Որդեգիրների թիւը սկզբում 30 էր: Եր-  
բեակ Հոգաբարձութիւնը, ինչպէս յիշել ենք՝  
այս թիւը կրկնապատկեց: Այս ժամանակ որդե-  
գիրները զրաւոր պարտաւորւում էին՝ ուսումն  
աւարտելուց յետոյ քահանայ դառնալ, հակա-  
ռակ դէպքում յանձն էին առնում վճարել Դր-  
պրոցին մի գումար՝ հաւասար իրանց վրայ ե-  
ղած ծախսին: Բայց 1861 թուի կանոնադրու-  
թիւնը վերացրեց որդեգիրների հոգեորական  
դառնալու այս պարտադիր կանոնը, սահմանելով,  
որ Դպրոցի աշակերտներից նրանք միայն կա-  
րող են մտնել հոգեոր կոչման մէջ՝ որոնք ի-  
րանց բնութեամբ և ներքին հակումով կկարո-  
ղանան արժանաւոր սպասաւորներ լինել աս-  
տուածալին սեղանին և որոնք յօժարակամ ցան-  
կութիւն կյայտնան այդ մասին, առանց որևէ  
ստիպման կամ յարդորների: Այնուհետև որդե-  
գիրների թիւը շուտով նուազեց և տատան-  
ւում էր 20—25-ի մէջ:

Որովհետև դրսից առաջարկուած կամ մաս-

նաւոր անձերի թոշակներով ընդունուած որդեգիրները կարող էին — ինչպէս և եղել են յաճախ — իրանց ընդունակութեամբ ու վարքով համապատասխան չլինել դպրոցական պահանջներին ու կարգերին՝ ուստի չոգաբարձութիւնները հետզհետէ աշխատեցին վերացնել այլպիսի պատահական ընդունելութիւնները։ Ներկայումս առանց բացառութեան տիրում է այն կանոնը, որ բոլոր որդեգիրները պահում են Պայոցի միջոցներով, զանազան բարերարների կտակած գումարների տոկոսներով։ Բոլորն ընտրում են Մանկավարժական ժողովի ձեռքով գոնէ մի տարի Պայոցում եղած, վարքով ու առաջադիմութեամբ փորձուած չքաւոր աշակերտներից, Գ. և աւելի բարձր դասարաններից, և ապա առաջարկւում, են չոգաբարձութեան հաստատութեանը։ Այս միջոցով առաջն առնւում է այն պակասութիւններին, որոնք յատուկ են առհասարակ գիշերօթիկ վակ դպրոցական համակեցութեան։

Ճատ անգամ չոգաբարձութիւնները և տեսուչները զանազան նկատումներով անյարմար են համարել որդեգրութիւնը և առաջարկել են վերացնել, բայց չէ յաջողուել, դլխաւորապէս այն պատճառով, որ զբանով խախտուած կը լինէր բարերարների կտակների տրամադրու-

թիւնը։ Ներկայ չողաբարձութիւնն էլ շարժել է ազդ հարցը, առաջարկելով որդեգրութեան վերացնելուց խնայուած դումարով պահել թոշակաւորներ եռապատիկ թուով. բայց այս առաջարկութիւնն էլ չէ ընդունուել:

Դարձոցական շէնքի փոքրութեան պատճառով՝ որդեգիրները ներկայումս ապրում են առանձին բնակարանում, Դարձոցի դէմ ու դէմը։ Այստեղ է նաև հիւանդանոցը։ Նրանց թիւը ներկայումս է 20, որոնց վրայ տարեկան ծախս է լինում մոտ 3,500 ըուբլի։

### ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Գրքովիս ծաւալը թույլ չէր տալիս մի առմի լիշել, թէ ի՞նչ ուսուցչական խմբեր են եղել Դարձոցում հոգաբարձական կառավարութեան ժամանակ (1861—1899), մանաւանդ որ նըրանք, ինչպէս ասել ենք՝ ենթակայ են եղել լաճախակի փոփոխութիւնների։ Յարմար ենք համարում այստեղ դնել Դարձոցի ուսուցչական կազմը առ 1-ն յունվարի 1900 թ., նշանակելով նրանց աւարտման տեղերը, պաշտօնավարութեան տարիները Դարձոցում և դասաւանդած առաջականները։

| Ազգանունները և<br>անունները. | Ո՞րտեղ և թըք է<br>աւարտել.           | Քանի՞ տարի<br>ծառայում է. | Ի՞նչ առարկայ է<br>աւանդում.                         |
|------------------------------|--------------------------------------|---------------------------|---|
| Քալաղեան Սամ.<br>տեսուչ.     | Օդես. Համալս. 1889                   | 5                         | Բուսաբանութիւն<br>և բնախօսութիւն.                   |
| Աբովեան Դալ. ք.              | Ներսիս. Դպր. 1883                    | 13                        | Երգեցողութիւն.                                      |
| Վլիաղեան Յար.                | Թիֆլ. Դիմն. 1870                     | 13                        | Պուսաց լեզու.                                       |
| Աղանձան Դիւտ. ք.             | Ներսիս. Դպր. 1878                    | 24*                       | Կրօն և տոմար.                                       |
| Վոհլեան Միսաք                | Դէորգ Շեմար. 1881                    | 14                        | Հ. լեզու, Հ. պատմ.<br>և եկեղեց. պատմ.               |
| Քարխուդարեան Դ.              | Դորպ. Համ. (Ա լս.)                   | 24*                       | Պուս. պատմութ.<br>և աշխարհագր.                      |
| Դաղբաշեան Յար.               | Ներս. Դպր. և Տիւ-<br>բինդ. Համ. 1993 | 6                         | Ուսումն ս. Դրոց.                                    |
| Եկմալեան Մակար.              | Գետեր. Կոնս. 1887                    | 9                         | Զայնագրութիւն                                       |
| Զոհրաբեան Յար.               | Կիեվի Համալս. 1893                   | 14                        | Մաթեմատիկա.   |
| Թիւտիկեան Լևոն.              | Ներս. Դպր. և Գետ.<br>Համալսար. 1878  | 27*                       | Թուաբան., կենդա-<br>նաբան. և Փիզիկ<br>աշխարհագրութ. |
| Ղարյեան Երուանդ.             | Ներս. Դպր. և Ժր-<br>նեվի Համ. 1895   | 3                         | Ֆրանս. լեզ. և ընդ.<br>պատմութիւն.                   |
| Ղիսիցեան Ստեփ.               | Վարշ. Համլս. 1889                    | 6                         | Պուս. լեզու, հայոց<br>և ընդ. պատմութ.               |
| Հովուեան Գօղոս.              | Ներս. Դպր. և Դէ-<br>որգ. Շեմար. 1889 | 3                         | Հայոց լեզու, թուա-<br>բան. և գեղագր.                |
| Մալխասեան Ստ.                | Դէորգ. Շեմ. և Գետ.<br>Համալսար. 1889 | 10                        | Հայոց լեզու և հայ-<br>ոց մատենագրութ.               |
| Մանդինեան Այիր.              | Լազար. Շեմ. 1869                     | 30                        | Ընդհան. աշխար-<br>հագրութիւն.                       |
| Մինասեան Արշ. ք.             | Ներս. Դպր. և<br>Շտրասբ. Համ. 1898    | 1                         | Կրօն.   |
| Միրաղեան Դեդ.                | Թիֆլ. Դիմնազ. (Զ.<br>դաս.) 1883      | 3                         | Պուսաց լեզու.                                       |
| Միրզոյեան Դաբր.              | Վազանի Համ. (Դ.<br>լսար.)            | 18*                       | Պուսաց լեզու.                                       |
| Մուրադբէգեան Աղ.             | Ներսիս. Դպր. 1892                    | 3                         | Երգեցողութիւն.                                      |
| Յարութիւնեան Իս.             | Ներս. Դպ. և Ենայի<br>Համալսար. 1888  | 12                        | Հայոց լեզու, հոգե-<br>բան. և տրամար.                |

\*) Ընդհատումներով:

|                  |                                   |     |                                 |
|------------------|-----------------------------------|-----|---------------------------------|
| ՃահճուդաղեանԴր.  | Ներսիս. Դպր. 1879                 | 20  | Հայոց լեզու և գեղագրութիւն.     |
| Ճամշինեան Յար.   | Գետ. Դեղար. Աեմ.                  | 16  | Նկարչութիւն.                    |
| Սահակեան Սահ. ք. | Ներս. Դպր. և Լէյա. ցիգի Համ. 1883 | 17* | Կրօն.                           |
| Սպարապետեան Ար.  | Ներսիս. Դպր. 1882                 | 18  | Դադագրութիւն.                   |
| Սունդուկեան Յով. | Թիֆ. Ռէալ. Դ. 1883                | 3   | Թուսաց լեզու.                   |
| Փիրումեան Տիգր.  | Ներս. Դպր. 1879                   | 6   | Հայոց լեզու, թուաբան. և գեղագր. |
| Քէրէսթէճեան Մ.   | ԽալիպեանՌւս. 1859                 | 13  | Դեղագրութիւն:                   |

### ԳՐԱԴԱՐԱՆ

Ներսիսեան Դպրոցի գրադարանը նոյնքան հին է՝ որքան և ինքը Դպրոցը և նրա տպարանը. բայց նրա անունը զործերի մէջ առաջին անգամ լիշտում է 1851 թուի օգոստոսին: Մինչև այդ ժամանակ և դրանից էլ յետոյ՝ գրադարանը եղել է խսկապէս գրախանութեան թղթեղէնի պահեստ, որտեղ պահւում էին Դըպրոցի տպարանից լոյս ընծայուած զըքերը և Թուսաստանից բերուած թուղթը, ուր դիմում էին գրքեր և թուղթ գնելու Թիֆլիսից և Անդրկովկասի ուրիշ քաղաքներից, որովհետեւ ուրիշ հայ գրավաճառանոց չկար: Այնտեղ պահւում էին նաև դպրոցական գործածութեան համար դասագրքեր, որոնցից ուղեղիրներն ու չըքաւոր երթևեկները ձրի ստանում էին պիտոյք-

\*.) Ընդհատումներով:

ները, իսկ ունեռները՝ փողով։ Գրադարան,  
բուն նշանակութեամբ, այն ժամանակ չկար։  
Երրեակ չոգաբարձութիւնը, պաշտօնի մտած  
տարին, որոշեց զրադարանի դրքերը բաժանել  
երկու մասի—վաճառելի և դասարանական  
դրքեր—և իւրաքանչիւր բաժնի համար առան-  
ձին մատեաններ պահել։ Այս ժամանակ կազ-  
մուած ցուցակներից երկում է, որ 1852 թու-  
ին դասարանական զրքերը բաղկացած են եղել  
189 անունից, որոնց մէջ 18 ձեռագիր. իսկ վա-  
ճառելի դրքերը բաղկացած են եղել 22 անու-  
նից, 6,734 օրինակով։ Ուրեմն 1852 թուակա-  
նը, երբ հին զրադարանի դրքերը երկու մասի  
բաժանուեցին և դասարանական դրքերի հա-  
մար սկսեց յատուկ մատեան պահուել՝ պէտք է  
համարել իսկական զրադարանի առաջին տարին։

Բայց դեռ երկար ժամանակ զրադարանը  
անկերպարան և անկարգ դրութեան մէջ է  
գտնուել. դեռ չէր ճանաչուած ընթերցանու-  
թեան կարևորութիւնը՝ իրեւ մտաւոր դար-  
գացման օժանդակող անհրաժեշտ միջոցի, ու-  
րեմն և սիստեմաբար խնամք չէր տարւում  
զրադարանը հարստացնելու և դրքերից օգ-  
տուելու կանոններ սահմանելու։ Գրադարանա-  
պետները, երբեմն ոռմկով, շատ անդամ անոռ-  
ճիկ, յաճախ փոփոխուում էին. զրադարանա-

պետ եղել են կողմնաւկի, մարդիկ, Դպրոցի ու-  
սուցիչներ, տեսուչներ, նոյն-իսկ հոգաբարձու-  
ներ, որոնցից շատերը մի քանի ամիս պաշտօն  
վարելով՝ թողել հեռացել են, տեղի տալով նո-  
րբերին, որոնք ևս նոյնպէս են վարուել։ Գնուե-  
լիք գրքերի ընտրութիւնը կախուած է եղել  
այս կամ այն մասնաւոր անհատի ճաշակից。  
չէ եղել պահպանուելիս կանոնաւոր ցուցակ  
դուրս տրուած և ստացուած գրքերի։ Այսպիսի  
պայմաններում, հասկանալի է, չէր կարող գրա-  
դարանը զարգանալ և կպատահէին նոյն-իսկ  
կորուստներ, գրադարանավետների անհոգու-  
թիւնից կամ սնհաւատարմութիւնից։

Եօթանասնական թուականներից գրադա-  
րանն ոկտում է հետզհետէ հարստանալ և կանո-  
նաւորուել, Ս. Նազարեանցի, Պ. Սիմէոնեանցի,  
Ս. Մանդինեանի և մանաւանդ Ա. Նահապետեա-  
նի տեսչութեան ժամանակ։ Ս. Մանդինեանը  
նորից կազմեց ցուցակ գրքերի և փոքր ի շատէ  
բարեկարգութիւն մտցրեց։ Բայց գրադարանի  
հիմնական բարենորոգութեան, հարստութեան  
և բարեկարգութեան սկիզբ դրուեց Յովհ. Սպեն-  
գիարեանի տեսչութեան օրերում։ Այս ժա-  
մանակ Մանկավարժական ժողովում մշակուե-  
ցին և հոգաբարձութիւնից հաստատուեցին  
գրադարանի կառավարութեան, գրքերից օգ-

տուելու ևն վերաբերեալ կանոններ. ընթերցանութեան և դպրոցական պարապմունքի նպաստող գրքերի ցուցակներ կազմուեցին և ձեռքբերուեցին. սահմանուեց Դպրոցի ծախսերի մէջ ամեն տարի մտցնել մի յայտնի գումար՝ դրադարանը հարստացնելու. նշանակուեցին ռոճկով գրադարանապետներ, գործին տեղեակ անձերից։ Այս ժամանակ գրադարանապետ Ամ. Մանդինեանը կազմեց գրադարանի բոլոր գրքերի ցուցակը, որ տպագրուեց 1893-ին։ Կ. Կոստանեանի տեսչութեան օրով գրադարանը շարունակեց հարստանալ և կարգաւորուել. նրանախաձեռնութեամբ տպագրուեց Դպրոցի 31 ձեռագրի ցուցակը, իւրաքանչյւր ձեռագրի մանրամասն նկարագրով և բովանդակութեամբ։ Ստ. Կանայեանի աշխատութեամբ (1893): Ներկայ տեսչութեան ժամանակ աւելի ևս հարստացաւ գրադարանը. առանձին մասնաժողովի ձեռքով առաջին անգամ գնահատուեցին եղած բոլոր գրքերը (1897). կազմուեցին առանձին ցուցակներ ընթերցանելի գրքերի՝ դասակութեամբ նուէրներ ստացուել են—Գր. քահ-

Գրադարանը, բացի Դպրոցի միջոցներով գնուած գրքերից՝ շատ անգամ նուէրներ է ստացել և մասնաւոր անձերից։ Աւելի մեծ քանակութեամբ նուէրներ ստացուել են—Գր. քահ-

Լոռու-Մելիքեանից — 104 անուն, որոնցից 18-ը՝  
ձեռագիր (1851 թ.). Յովս. Էֆէնդեանից՝ (Է.  
անուն) (1863 թ.). Աղ, Թալիրեանից (Երբեակ  
Հոգաբարձութեան անդամ)՝ 268 անուն, 459  
հատոր (1890 թ.). Ար. Մարկոսեանից՝ 163-  
անուն, 244 հատոր (1893 թ.), և Մ. Փան-  
եանից՝ 326 անուն, 459 հատոր (1899 թ.).

Դպրոցի գրադարանը, չհաշուելով ձեռա-  
գիրները, դասագրքերը, վաճառելի հին տպա-  
գրութիւնները և կրկնակ օրինակները՝ ունե-  
ցել է զրքեր հիմնական բաժնում

| Ա | Բ | Վ | Շ | Չ | Պ |
|---|---|---|---|---|---|
|---|---|---|---|---|---|

|                       |       |       |     |       |       |        |
|-----------------------|-------|-------|-----|-------|-------|--------|
| Մայր ցուցակ, 1893 թ.  | 1,078 | 1,152 | 135 | 2,365 | ?     | ?      |
| Առ 1-ն ցունվ. 1898 թ. | 1,253 | 1,505 | 156 | 2,914 | 3,237 | 14,327 |
| Առ 1-ն ցունվ. 1900 թ. | 1,756 | 1,753 | 298 | 3,807 | 4,489 | 16,331 |

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան Դպրոցը իւր հիմնարկութեան-  
օրից գրաւել է հայ հասարակութեան սէրն ու  
համակրութիւնը, և կարող անձինք, թէ Գը-  
պրոցի վարիչների լորդորանքով և թէ ինքնա-  
բերաբար, բազմաթիւ նուէրներ են արել նորան-  
անշարժ կայքերով, փողով, զրքերով և ուրիշ  
բաներով։ Եթէ նուիրատուութիւնները համա-

քելու լինինք մի աստիճանացոյց, չափելու համար հասարակութեան դիտակցութիւնը որևէ հաստատութեան օգտակարութեան մասին և նրա համակրութիւնը դէպի այս կամ այն ձեռնարկութիւնը, ապա համարձակ կարող ենք ասել, որ ներկայ դարում ներսիսեան Դպրոցը եզել է ժողովրդի ամենից աւելի փայփայած, նրա հայեացքով՝ ամենից օգտակար ազգային հաստատութիւնը, որի ապահովութեան կամ բարգաւաճման ամեն մի բարեգործ աշխատել է նպաստել կամ կենդանութեան ժամանակ կամ, աւելի յաճախ, մահից յետոյ՝ կտակներով։ Նուիրատուները բնականաբար կցանկային, որ իրանց նուէրներն անկորուստ մնան և նպատակայարմար կերպով գործադրուին. իսկ այս բանը այնքան աւելի ապահով կլինէր՝ որքան աւելի վստահելի լինէին Դպրոցի կառավարիչները։ Դպրոցի խառն դրութեան, կառավարչական սիստեմի անկազմակերպ վիճակի միջոցին, նուիրատութիւններ կամ չեն եղել ամենևին, կամ եղել են շատ չնչին քանակութեամբ. ընդհակառակն, հաստատ կոսռավարչութեան, վըստահելի և ժողովրդից ընտրուած սրտացաւ Հոգաբարձութիւնների ժամանակ՝ այս նուէրներն առատ են եղել թէ թուով և թէ արժէքով։ Այս երևոյթը լաւ նկատել և գնահատել է Սար-

դիս արքեպիսկոպոս Զալալեանը գեռ 1857  
թուին, որ տեղակալ Լուկաս արքեպիսկոպոսին  
ուղղած գրութեան մէջ ասում է, «Արդարև ցա-  
ւալի և մեր (Հոգեորականների) կաչման հա-  
մար նախատինք է ժողովրդի հակաբօւթիւնը,  
որ մի քանի շահասէր հոգեորականներից խըր-  
տելով՝ չէ յօժարում նրանց ձեռքը յանձնել  
այսպիսի մեծ գործի համար յատկացրած նուէր-  
ները։ Խօսքիս ապացոյցներ շատ կան, բայց  
թողնելով միւսները՝ խօսինք մեր առաջն եղա-  
ծի մասին։ 1837 թուից մինչև 1851-ը Թը-  
պրոցը զտնուում էր գրեթէ հոգեորականութեան  
անմիջական իշխանութեան տակ, և այս ժա-  
մանակամիջոցում և ոչ մի նուիրատու չեղաւ.  
Եսկ երբ բացուեց (Երբեակ) Հոգաբարձութիւնը  
հաստատ հիմունքների վրայ և Թագրոցի ելե-  
մուտքը նորան յանձնուեց՝ բազմացան նուիրա-  
տուները, հարիւրաւոր և հազարաւոր ըուրկե-  
ներով...»։

Իբրև երախտագիտութեան հասուցում դէ-  
պի նուիրատուները, և հասարակութիւնը դէպի  
բարեգործութիւն յորդորելու նպատակով՝ Երբեակ  
Հոգաբարձութիւնը 1851 թ. մարտին սահմանեց՝  
ամեն տարի հինգ տաղաւարներին, Թագրոցի ու-  
սուցիչների և աշակերտների ներկայութեամբ,

Վանքի եկեղեցում պատարագ մատուցանել,  
որից յետոյ Թպրոցի երախտաօրներից ննջե-  
ցեալների համար հանգստեան կարգ կատարել,  
իսկ կենդանիների առողջութեան և յաջողու-  
թեան համար աղօթք մատուցանել։ Այս կար-  
գադրութեանը շատ հաւանեց չիմնադիր Կաթո-  
ղիկոսը և գովեց Հոգաբարձուների «Խոհական  
և բազմահանճար մտախոհութիւնը»։ Բաց չը  
նայելով սորան՝ այս կարգը շուտով խափան-  
ուեց, նոյն-իսկ Երրեակ Հոգաբարձութեան ժա-  
մանակ։ Այսուհետև սովորութիւն եղաւ նուի-  
րատուների անուններն ու նուէրները մտցնել  
հաշուէտուութիւնների մէջ և կարդալ տարեկան  
ակտի օրերը։ Ներկայումս դրանք մտցնւում են  
Հոգաբարձութեան տպագրած տարեկան տեղե-  
կագիրների մէջ։

Ներկայ գրքուկի ծաւալը թուլ չէ տալիս  
Թպրոցի անունով եղած նուիրատուութիւնները  
և նուիրատուների անունները մի առ մի յի-  
շել \*). ուստի ստիպուած ենք միայն մի քանի  
գլխաւորները դնել այստեղ.

\*). Վիակատար ցուցակը կմտնէ ընդարձակ պատ-  
մութեան մէջ։ Բացի դրանից՝ ներկայ Հոգաբարձութիւնը,  
յոբելեանի առիթով, որոշել է յատուկ մատեան կազմել  
և նրա մէջ, Թպրոցի գործերից քաղելով՝ մտցնել բոլոր  
նուիրատուութիւնները, Թպրոցի սկզբնաւորութիւնից  
մինչև այժմ, ինչպէս և այսուհետև լինելիքները։

Ա. Մինչեւ 1861 թուականը՝ Դպրոցին  
նուիրել են—

ա) Անշարժ կալուածներով.

1. Նախ և առաջ ինքը Հիմնադիր եր-  
ջանկայիշատակ Ներսէս Ե. Կաթողիկոսը, որ  
շինեց հին Դպրոցը և նրա զահպանութեան  
համար խանութներ (քարվանսարայ), որոնք  
ներկայումս բերում են եկամուտ տարեկան  
22,9-1 ը.

2. Վրացի իշխան Օթար Ամիլախվարեանց  
ալգի Սողանլուխում, տար. եկամ. 160 ը.

3. Յար. Օքոյեան—Հինգ խանութ, ու-  
րիշ շինութիւններ և դատարկ գետին. տար.  
եկամուտ—1586 ը.

4. Ստ. Գիւլիփաշեանց—տուն. տարեկան  
եկամուտ—240 ը.

5. Հոգաբ. Գ. Մանդինեան—Աստուածամօր  
եկեղեցին շինեց, Թէլէթի մօտ, որին ուխտ  
գնացողներից հաւաքուած նուէրները հասնում  
էին Դպրոցին.

6. Աւետիք Փիրոյեան—մեծ կրկնալարկ  
տուն. տար. եկամուտ 15,827 ը.

բ) Դրամով.

1. Հիմնադիր Ներսէս Կաթողիկոսը, բացի  
տպարանից, մոմավաճառութեան և ուխտա-

տեղիների արդիւնքներից և անշարժ կալքերից՝  
նուիրել է զանազան ժամանակ . . . 41,000 ր.,  
որից Հօգաբարձութիւնն ուղարկել է  
Էջմիածին 10,000 ր.

2. Թոմաս Դաւթեանց . . . 3,160 ր.
3. Խոսրով Խան Ղայթմազեանց 4,000 ր.
4. Յովկ. Լազարեանց . . . 1,500 ր.
5. Բէժան Խատիսեանց . . . 3,108 ր.
6. Նիկ. Ջատինեանց . . . 1,000 ր.
7. Սարգ. արքեպ. Զալալեան . . . 1,000 ր.
8. Աստ. Սպարապետեանց . . . 2,000 ր.
9. Յար. Օքոյեան . . . 1,283 ր.
10. Միրոյ Միրիմանեանց . . . 1,000 ր.
11. Դաւիթ Գուլուկեանց . . . 1,500 ր.
12. Զոհրապ Այիրաղեանց . . . 5,000 ր.

Բացի սրանցից՝ Երեմիա Արծրունին Դը-  
պրոցի անունով Ներսէս Կաթողիկոսին է նուի-  
րել Ամստերդամից բերած տպարանը։ Նոյնպէս  
եղել են շատ նուէրներ՝ որդիգիրներ պահելու  
համար։

Բ) 1861 թուականից յետոյ.

ա) Անշարժ կալուածներով.

- 1) Մատթէոս Կաթողիկոս — դատարկ  
գետին. տար. եկամուտ . . . . . 732 ր.
- 2) Կր. Ճերգիլեան խանութ. տ. եկ. 200 ր.

- 3) Օժար Ճաղբաթեանց խան. տ. եկ. 200 ր.
- 4) Խշի. Յովս. Երկայնաբազուկ-Ար-  
դութեան—տուն, որ Հիմնական  
վերանորոգութ. յետոյ բերում է 2,100 ր.
- 5) Կատարինէ Նատիրեան—տուն 240 ր.
- 6) Յովակ. Տէր-Աբրահամեան—տուն 300 ր.  
    ը) Դրամով.
1. Յովս. Էֆէնդեան, որի նուիրած  
դումարը ներկայումս դարձել է 72,128 ր.
2. Եսայի Տէր-Դաւթեան . . . . . 2,600 ր.
3. Սողոմոն Վարդանեան . . . . . 4,400 ր.
4. Թիֆլիսի Հայ Հասարակութիւն  
ի լիշտակ Մակար կաթո-  
ղիկոսի . . . . . 3,600 ր.
5. Մինաս Սամուէլեանց . . . . . 3,630 ր.
6. Վառվառէ Երուսալիմսկի . . . . . 5,600 ր.
7. Եսայի արքեպիսկոպոս Աստուա-  
ծատրեան . . . . . 9,419 ր.
8. Գրիգոր Ջիոյեանց . . . . . 5,400 ր.
9. Ճաքար Եարալեանց . . . . . 1,000 ր.
10. Յովհ Անանեան, յանուն Յա-  
ռութիւն վարդ. Ալամդարեանի 5,217 ր.
11. Նունէ Ղամբարեանց . . . . . 3,112 ր.
12. Աղէքսանդր Թավլիրեան (բա-  
ցի միւս նուէրներից) . . . . . 2,000 ր.
13. Գէորգ Փրիդոնեանց . . . . . 5,240 ր.

|     |   |           |
|-----|---|-----------|
| 14. | Յարութիւն Գրիգորեան.                              | 6,457 ր.  |
| 15. | Յանուն Յովկ. աւ. քահ.                             |           |
|     | Սարգսեանի . . . . .                               | 1,222 ր.  |
| 16. | Գրիգոր Թումայեան . . . .                          | 5,107 ր.  |
| 17. | Կատարինէ Մելիք-Ղազնազար-<br>եան Դէ Ղապուր . . . . | 2,000 ր.  |
| 18. | Ստեփան Գէորգեան . . . .                           | 5,000 ր.  |
| 19. | Նունէ Եւանդռւլեան . . . .                         | 10,000 ր. |
| 20. | Գրիգոր Մեղուինեան . . . .                         | 6,000 ր.  |
| 21. | Ստեփան Խիթրով . . . .                             | 19,600 ր. |
| 22. | Մարիամ Պապովեան . . . .                           | 2,000 ր.  |
| 23. | Նատալիա Սաֆարեան . . . .                          | 4,000 ր.  |

Բացի սրանցից՝ Գրիգոր Բայանդուրեանց  
լանձնել է Դպրոցին պահելու իւր նուիրատու-  
ութեան կնքուած կտակը, որ պէտք է բացուի  
նրա մահից լետու:



41501 2 643 91650





A 62914